

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական
խորհուրդ՝

- Ն. Թովմայան
- Ա. Գյուլումյան
- Ֆ. Թոխյան
- Ա. Թունյան
- Ա. Խաչատրյան
- Ն. Նազարյան
- Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(96)
2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1479-1498)

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 10-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1479, 1 հոկտեմբերի 2019 թվականի).....6
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 143-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 6-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1480, 15 հոկտեմբերի 2019 թվականի).....19
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ԿՐՈՂ ԱՆՁԱՆՅ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԻ ՓՈԽԱԴԱՐՉԱԲԱՐ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1481, 22 հոկտեմբերի 2019 թվականի).....39
- * 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ ՀԱԱԳԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՖՐԻԿՅԱՆ-ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻԳՐԱՑՎՈՂ ԶՐԱՅԻՆ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1482, 22 հոկտեմբերի 2019 թվականի).....43
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1483, 22 հոկտեմբերի 2019 թվականի).....51

- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 28-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
 «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
 ՎԻԵՆԱՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
 ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
 ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ
 ՎԻԵՆԱՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ,
 ՄԻՋԵՎ ԱԶՍ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 29-Ի
 ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ 5.7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱԶԱՅՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1484, 22 հոկտեմբերի 2019 թվականի).....55

- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
 «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
 ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
 ՆԵՐԴԱՇՆԱԿԵՅՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1485, 22 հոկտեմբերի 2019 թվականի)59

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
 ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
 8-ՐԴ ԵՎ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1486, 29 հոկտեմբերի 2019 թվականի).....63

- * ԱՐՏԱԿ ԳԱԼՍՅԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
 ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ՕՐԵՆՍԳՐՔԻ 376.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1487, 6 նոյեմբերի 2019 թվականի)78

- * ԱՐԱՅԻԿ ՍԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ
 142-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 155-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1488, 15 նոյեմբերի 2019 թվականի)99

- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ
 ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
 ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՈՆԻ
 ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
 ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
 ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1489, 26 նոյեմբերի 2019 թվականի).....133

- * 1988 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
 «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
 ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՍԲ ՓՈՓՈԽՎԱԾ)
 ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1490, 3 ղեկտեմբերի 2019 թվականի)138

- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
 «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
 ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1491, 3 ղեկտեմբերի 2019 թվականի)143

- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
 «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ
 ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1492, 3 ղեկտեմբերի 2019 թվականի)151

- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
 «ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՎԱՐԿ - ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
 ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ - BMZ 3010 00 579, ՎԱՐԿ N 29426» ՎԱՐԿԱՅԻՆ
 ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1493, 3 ղեկտեմբերի 2019 թվականի)156

- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ
 ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,
 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
 ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1494, 3 ղեկտեմբերի 2019 թվականի)164

- * «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-Ի ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
 ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 1243-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1495, 6 ղեկտեմբերի 2019 թվականի)168

- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊԶ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1496, 10 դեկտեմբերի 2019 թվականի).....185
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 69-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 96-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1497, 17 դեկտեմբերի 2019 թվականի).....189
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԱՄՄԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1498, 24 դեկտեմբերի 2019 թվականի).....206

• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- * ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆԻՆ.....214
- * ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ.....215
- * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ.....216
- * ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՅԵԼ Է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ217
- * ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԼԱՏՎԻԱ218



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 13-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 10-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 հոկտեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (գեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

4(96)2019

◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ

◆ ԴԱՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՇՈՒՄԸ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 10-րդ մասի 2-րդ կետի՝ Մահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2005 թվականի հուլիսի 8-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի օգոստոսի 13-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի սեպտեմբերի 3-ից:

Օրենքի՝ «Տրանսպորտային միջոցների պետական գրանցումը, պետական հաշվառումը և սահմանափակումները» վերտառությամբ 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝

«Տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքը ենթակա է (պետք է ներկայացվի) ճանապարհային ոստիկանությունում պետական գրանցման կողմերի՝ գործարքն ստորագրելու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում, իսկ տրանսպորտային միջոցը «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից ազատ շրջանառության նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծված լինելու դեպքում՝ հայտարարագրելու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ տրանսպորտային միջոցը խոտանելու հետ կապված հաշվառումից հանելու դեպքերի: Տրանսպորտային միջոցների պետական գրանցումն ու պետական հաշվառումն իրականացվում են տրանսպորտային միջոցը (կամ ճանապարհային ոստիկանության վարչական մասի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրն սպասարկող իրավասու ստորաբաժանման տրամադրած տրանսպորտային միջոցի տվյալների վերաբերյալ տեղեկանքը) և օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը ճանապարհային ոստիկանություն ներկայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում»:

Նույն հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետը սահմանում է՝

«Տրանսպորտային միջոցների պետական գրանցումը մերժվում է, եթե՝

...

2) ներկայացված չեն օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը.»:

Օրենքի ընդունումից հետո 13-րդ հոդվածը փոփոխվել և լրացվել է 21.02.2007 ՀՕ-72-Ն, 08.04.2010 ՀՕ-36-Ն, 08.12.2011 ՀՕ-332-Ն, 19.10.2016 ՀՕ-186-Ն, 21.12.2017 ՀՕ-281-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի մայիսի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի մայիսի 7-ի ՎԴ/12584/05/18 գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենքի և այլ իրավական ակտերի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումը

Դիմողը գտնում է, որ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը և 10-րդ մասի 2-րդ կետը սահմանափակում են անձի սեփականության իրավունքը և, այնքանով, որքանով չեն տարանջատում վարչական ակտի հիման վրա կատարված գործարքները և չեն սահմանում դրանց չգրանցման հետևանքները, չեն բավարարում Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված իրավական որոշակիության պահանջներին:

Ըստ դիմողի՝ Օրենքի քննարկվող դրույթները վերաբերում են տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցմանը, մինչդեռ հանրային և մասնավոր իրավունքի ոլորտներում կնքված գործարքները տարբեր իրավական նախադրյալներ ունեն և առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ:

Դիմողը պնդում է, որ վարչական ակտի հիման վրա կնքված պայմանագիրն Օրենքով սահմանված ժամկետում պետական գրանցման չներկայացնելու դեպքում առաջանում է իրավական որոշակիությունից զուրկ վիճակ, երբ մի կողմից վարչական ակտի հիման վրա կնքված գործարքն առ ոչինչ է և ենթակա չէ պետական գրանց-

ման, մյուս կողմից՝ վարչական ակտն ուժի մեջ է, և առկա է սեփականության իրավունքի հանդեպ իրավաչափ ակնկալիք (բացառությամբ պայմանով ակտերի):

Բացի դրանից, դիմողը նշում է, որ Օրենքի վիճարկվող դրույթները, սահմանելով իրավունքը պետական գրանցման ներկայացնելու 15-օրյա ժամկետ, չեն նախատեսում այն վերականգնելու որևէ հնարավորություն: Նման հնարավորություն սահմանված չէ նաև վարչական վարույթը կանոնակարգող ընդհանուր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Դիմողի կարծիքով՝ ժամկետը բաց թողնելու դեպքում այն վերականգնելու հնարավորության բացակայությունը խախտում է «սեփականության իրավունքի անարգել իրագործման մարդկանց սահմանադրական իրավունքը»:

Ըստ դիմողի՝ թեև վարչական մարմնին դիմելու ժամկետն ապահովում է իրավական կանխատեսելիություն և իրավահարաբերությունների կայունություն ու հուսալիություն, այն չի կարող լինել անվերականգնելի: Օրենսդիրը վարչական մարմնին, իսկ դատական բողոքարկման դեպքում՝ նաև դատարաններին պետք է հնարավորություն տա վերականգնելու դիմելու ժամկետը, եթե այն բաց է թողնվել հարգելի պատճառներով:

Վերոգրյալի արդյունքում դիմողը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցում առկա է հիմնավոր կասկած և խնդրում է որոշել դրանց համապատասխանությունը Սահմանադրության 60-րդ և 79-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերի դրույթների վերլուծության արդյունքում պնդում է, որ «... օրենսդիրը, հիմնվելով սեփականության և գույքային իրավունքների, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքի, անձի լեգիտիմ ակնկալիքի ու կանխատեսելիության սկզբունքի վրա, սույն սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթներով **հստակ ամրագրել և կանոնակարգել է տրանսպորտային միջոցների պետական գրանցման, պետական հաշվառման և վերջիններիս սահմանափակումների վերաբերյալ իրավահարաբերությունները**»:

Ըստ պատասխանողի՝ շարժական գույքի պետական գրանցման ներկայացնելու համապատասխան ընթացակարգերով, մասնավորապես «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսված է **շարժական գույքի պետական գրանցման ժամկետի երկարաձգման ինստիտուտը**, ուստի վիճարկվող նորմերը թե՛ իրավական որոշակիության ու կանխատեսելիության, թե՛ իրավաչափ ակնկալիքի տեսանկյունից բացառում են սեփականության իրավունքի որևէ խախտման հնարավորություն:

Պատասխանողը գտնում է, որ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը և 10-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Դիմողը վիճարկվող դրույթների համատեքստում բարձրացնում է, ըստ էության, տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքը պետական գրանցման ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում այն վերականգնելու անհնարինության հարց, որին Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ սեփականության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրման, իրավունքի սահմանափակման համաչափության և որոշակիության սկզբունքների երաշխավորվածության, ինչպես նաև պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման համատեքստում (համապատասխանաբար՝ Սահմանադրության 60, 75, 78, 79 և 50-րդ հոդվածներ): Այդ առումով սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է պարզել.

-արդյո՞ք տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքը պետական գրանցման ներկայացնելու ժամկետային սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ և արդյո՞ք այն խոչընդոտում է անձի սեփականության իրավունքի իրագործմանը:

-արդյո՞ք տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու դեպքում, առանց այդ ժամկետի վերականգնման հնարավորության, գործարքն անվավեր ճանաչելը համաչափ է հետապնդվող նպատակին:

-արդյո՞ք գործող իրավակարգավորումների պայմաններում հնարավոր է ապահովել այն անձանց սեփականության իրավունքի իրագործումը, ովքեր օրենքով սահմանված ժամկետը բաց են թողել հարգելի պատճառներով՝ անկախ իրենց կամքից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Օրենքի վիճարկվող իրավադրույթները փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք), «Հրապարակային սակարկությունների մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համապատասխան դրույթների հետ, ուստի դրանց սահմանադրականությունը հարկ է դիտարկել վերջիններիս հաշվառմամբ:

Օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ **շարժական գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման միայն օրենքով նախատեսված դեպքերում**, իսկ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կարգը և դրանց գրանցումը մերժելու հիմքերը սահմանվում են օրենքով:

Համաձայն Օրենսգրքի 301-րդ հոդվածի՝ **շարժական գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ Օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում**, իսկ պետական գրանցման կարգը և գրանցումից հրաժարվելու հիմքերը սահմանվում են օրենքով:

Ըստ Օրենսգրքի 134-րդ հոդվածի՝ **շարժական գույք են նաև տրանսպորտային միջոցները:**

Տրանսպորտային միջոցների պետական գրանցման, պետական հաշվառման և սահմանափակումներին առնչվող հարցերին է նվիրված Օրենքի 13-րդ հոդվածը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի՝ ճանապարհային ուստիկանությունում կողմերի գործարքն ստորագրելու օրվանից սկսած **15-օրյա ժամկետում պետական գրանցման պահանջ**, իսկ տրանսպորտային միջոցների պետական գրանցումն ու պետական հաշվառումը պետք է իրականացվեն

տրանսպորտային միջոցը (կամ ճանապարհային ոստիկանության վարչական մասի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրն սպասարկող իրավասու ստորաբաժանման տրամադրած տրանսպորտային միջոցի տվյալների վերաբերյալ տեղեկանքը) և օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը ճանապարհային ոստիկանությունն ներկայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով կազմակերպվող սակարկությունն է, որը կազմակերպում և անցկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայությունը՝ կատարողական թերթին համապատասխան, իսկ հարկադիր էլեկտրոնային աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք: Նույն հոդվածի 6-րդ մասը նախատեսում է դրույթ, համաձայն որի՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդին մասնակցելու ցանկություն հայտնած անձինք ինտերնետ կայքում հրապարակված ծանուցման մեջ նշված կարգով և ժամկետներում լոտի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով աճուրդի մասնակցության նախավճար են ստեղծում կամ վճարում ծառայության ստորաբաժանման դրամարկղ կամ դեպոզիտ հաշվին և գրանցվում են համակարգում:

Նշված օրենքի 35.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդում հաղթած մասնակցի կողմից նախօրոք ստեղծված նախավճարը փոխանցվում է ծառայության դեպոզիտ հաշվին, նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդի ավարտից հետո՝ 3 բանկային օրվա ընթացքում, ծառայության դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ փոխանցել կամ մուծել լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախավճարը: Հոդվածի 7-րդ մասն ամրագրում է դրույթ ըստ որի հաղթողի կողմից գնման գինը վճարվելուց հետո՝ **եռօրյա ժամկետում**, հարկադիր կատարողը նրա կամ նրա ներկայացուցչի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր, իսկ 8-րդ մասի համապատասխան՝ լոտի վաճառքից ստացված գումարը առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո՝ **եռօրյա ժամկետում**, փոխանցվում կամ հանձնվում է պահանջատիրոջը:

Սույն գործի նախապատմությունը վկայում է այն մասին, որ կատարողական վարույթի շրջանակներում տեղի ունեցած աճուրդի արդյունքում անձը հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերել ավտոմեքենա: Նշված պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ավտոմեքենայի գնորդը խախտել է սահմանված ժամկետում տրանսպորտային միջոցը ճանապարհային ոստիկանություն պետական գրանցման ներկայացնելու պահանջը:

Սույն գործով՝ քաղաքացիական իրավունքի տեսանկյունից (Օրենսգրքի 176-րդ հոդված), քաղաքացին սեփականության իրավունք ձեռք չի բերել, քանզի տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը ենթակա էր գրանցման, բայց չի գրանցվել: Այնուհանդերձ, առկա է վարչական ակտ, որի հիման վրա ձեռք է բերվել տրանսպորտային միջոցը:

Սահմանադրության, ինչպես և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) առումով սեփականության իրավունքն ինքնավար հասկացություն է: Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականություն է ինչպես օրինական հիմքով ձեռք բերվածը, այնպես էլ՝ իրավաչափ ակնկալիքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքից հետևում է, որ «սեփականություն» եզրույթը նշանակում է ոչ միայն «գոյություն ունեցող գույքը», այլև այն գույքը (իրավունքներն ու շահերը), որոնց նկատմամբ դիմումատուն առնվազն ողջամիտ կամ իրավաչափ սպասումներ կարող է դրսևորել (Van der Musselle v. Belgium, judgment of 23 November 1983, Series A no. 70, p. 23, para. 48; Pine Valley Developments LTD and Others v. Ireland, judgment of 29 November 1991, Series A no. 222, p. 23, § 51, and Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium, judgment of 20 November 1995, Series A no. 332, p. 21, para. 31):

Իրավաչափ ակնկալիքի առումով ՄԻԵԴ-ը գտել է, որ այն հիմնովին արդարացված է իրավական ակտի առկայությամբ (Kopecky v. Slovakia, no. 44912/98, § 47, ECHR 2004-IX): Սույն գործով տրանսպորտային միջոցը ձեռք է բերվել օրինական հիմքով՝ վարչական

մարմնի կողմից անցկացված աճուրդի արդյունքում կազմված արձանագրության հիման վրա, ինչը հիմնովին արդարացնում է քաղաքացու իրավաչափ ակնկալիքը:

4.2. Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումները բավարար չափով որոշակի են. անձի համար լիովին կանխատեսելի են իր կողմից դրսևորվելիք վարքագծի հետևանքները, ուստի շահագրգիռ անձը պետք է ինքնուրույն նախաձեռնի բոլոր այն գործողությունները և կատարի այն պահանջները, որոնք անհրաժեշտ են իրավունքի պետական գրանցման գործընթացն ավարտին հասցնելու համար:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ «Սեփականության պաշտպանության իրավունքը բացարձակ չէ, և **որոշակի պայմանների առկայության դեպքում**, պետություններին վերապահված է սեփականության իրավունքին միջամտության հնարավորություն, այդ թվում նաև՝ սեփականությունից զրկելու հնարավորություն: Սեփականության իրավունքին միջամտությունը կարող է համատեղելի լինել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունում ամրագրված ընդհանուր նորմի հետ, միայն եթե ապահովված է **«արդարացի հավասարակշռություն»** հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: «Արդարացի հավասարակշռությունն» ապահովված է «միայն, երբ հաստատվում է, որ տվյալ միջամտությունը բավարարում է օրինականության պահանջը և կամայական չէ» (Iatridis v. Greece [GC], 25.03.1999; app. no. 31107/96, para. 58):

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ՄԻԵԴ-ն արդարացի հավասարակշռության առկայության հարցը քննարկելիս պարզում է, թե հասարակական շահից բխող ի՞նչ իրավաչափ նպատակ է հետապնդում այդ միջոցառման կիրառումը: Սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն պետք է լինի «պատշաճ՝ իր նպատակին հասնելու համար և համարժեք այդ նպատակին»: Համամասնության ողջամիտ հարաբերակցությունը բացակայում է,

սեփականության իրավունքի պաշտպանության և ընդհանուր շահի պահանջների միջև անհրաժեշտ հավասարակշռությունը խախտվում է ի վնաս անհատի իրավունքների պաշտպանության, եթե սեփականության իրավունքը սահմանափակող միջոցառման կիրառման արդյունքում տվյալ անձն ստիպված է կրել «անհատական և չափից ավելի ծանր բեռ» (J.A. Pye (Oxford) Land LTD v. UK, G.C. 30/08/2007; app. No 44302/02):

Պետությունը կարող է սեփականության նկատմամբ վերահսկողություն իրականացնել՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին պարտավորեցնելով կատարել որոշակի գործողություններ: ՄԻԵԴ-ն այդպիսի թույլատրելի սահմանափակում է դիտարկել ավտոմեքենաների գրանցման պահանջը (Yaroslavtsev v. Russia, judgment 02/12/2004, app. no. 42138/02, Sildedzis v. Poland, judgment 24/05/2005, no. 45214/99):

Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի իրացումն ունի իր առանձնահատկությունները, քանի որ այն վերաբերում է այնպիսի գույքի, որն առավել վտանգի աղբյուր է և շահագործման ընթացքում կարող է վտանգի ենթարկել մարդկանց կյանքը և առողջությունը: Այդ իսկ պատճառով անձի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի օգտագործումն առկախված է ճանապարհային ոստիկանությունում պետական գրանցումից և հաշվառումից:

4.3. Սահմանադրական դատարանի 19.03.2019թ. ՍԴՈ-1448 որոշմամբ արտահայտված դիրքորոշումն առ այն, որ «...անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պարտականություն սահմանելով և պետական գրանցման ենթակա իրավունքների ծագումն այդպիսի գրանցմամբ պայմանավորելով ու գրանցման ժամկետ սահմանելով, օրենսդիրն ունեցել է իրավաչափ նպատակ» վերաբերում է նաև շարժական գույքի մասնավորապես, տրանսպորտային միջոցների հետ կատարվող գործարքներին: Տվյալ դեպքում, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն ուղղված է հատկապես տվյալ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացման և պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովմանը:

Ելնելով տրանսպորտային միջոցի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի իրավական բովանդակությունից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տրանսպոր-

տային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցման, դրա համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև գրանցումն օրենքով սահմանված որոշակի ժամկետում կատարելու պահանջները հետապնդում են իրավաչափ նպատակ: Դրանք ուղղված են տրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող անձի որոշակիացմանը՝ ապահովելով, ի թիվս այլնի, գույքային իրավունքների երաշխավորումը և պաշտպանությունը:

Սահմանելով տրանսպորտային միջոցի հետ կապված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պարտադիր պահանջ՝ օրենսդիրը նախատեսել է նաև այդ գործարքներից ծագող իրավունքների գրանցման պահանջը չկատարելու իրավական հետևանքները: Սահմանվորապես, Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերությանը (նման գործարքն առոչինչ է), որպիսի դրույթը, սակայն, դիմողի կողմից չի վիճարկվել:

Իրավաչափ նպատակ հետապնդելով հանդերձ՝ իրավակարգավորումը պետք է համահունչ լինի Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքին, համաձայն որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Վիճարկվող դրույթները պիտանի միջոց են վերը նշված նպատակին հասնելու համար և համարժեք լինելով սեփականության իրավունքի նշանակությանը՝ նվազագույնն են միջամտում անձի սեփականության իրավունքին:

4.4. Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Վարչական մարմնի կողմից գործի արդարացի քննությունը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ անձը չպետք է զրկվի իր իրավունքից այն դեպքերում, երբ օրենքի ձևական պահանջը չի կատարվել իրենից անկախ պատճառներով:

Սահմանադրական դատարանը, 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1448 որոշմամբ քննության առնելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համանման կարգավորումների սահմանադրակա-

նությունը, անդրադարձել է նաև վարչական ակտերի հիման վրա գույքի օտարմանը և գտնելով, որ պետության պարտականությունն է սահմանել սեփականության օտարման այնպիսի արդյունավետ կառուցակարգեր և կարգավորումներ, որոնք նվազագույնս կծանրաբեռնեն գույքը ձեռքբերողներին՝ կապված գործարքների կնքման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ, նշել է, որ վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքի ամրագրումը կարող է իրականացվել «...գործառույթների համատեղման եղանակով, երբ մեկ մարմինը կստանձնի անձին վարչական ակտի տրամադրմանն ուղղված բոլոր գործողությունների կատարումը»¹, որպիսի դիրքորոշումը վերահաստատում է սույն որոշմամբ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցների հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքը ճանապարհային ոստիկանությունում պետական գրանցման համար սահմանված ժամկետում օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը չներկայացնելու դեպքերում **բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն** Օրենքով նախատեսված չէ:

Սույն գործով վիճարկվող դրույթները փոխկապակցված են ՍԴՈ-1448 որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենսդրական կարգավորումների հետ, որոնց ուժով պետական գրանցման համար դիմելու ժամկետային սահմանափակման հիմքով անձի սեփականության իրավունքը չէր գրանցվում և չէր ճանաչվում պետության կողմից: Սակայն, ի տարբերություն անշարժ գույքի գրանցման վերաբերյալ իրավակարգավորումների, որոնց դեպքում ժամկետը բաց թողնելը սահմանված էր որպես գրանցումը մերժելու ուղղակի հիմք («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մաս և 30-րդ հոդվածի 1-ին մաս), այսինքն՝ առկա էր ժամկետն անգամ հարգելի, անձի կամքից անկախ պատճառով բաց թողնելու դեպքում գործարքի գրանցումն արգելող նորմ, սույն գործով վիճարկվող դրույթները տրանսպորտային միջոցին առնչվող գործարքի գրանցման համար նման ուղղակի արգելք չեն սահմանում և **իրավունքի գերակայության սկզբունքին համապատաս-**

¹ Սահմանադրական դատարանի 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1448 որոշում:

խան՝ անձի սեփականության սահմանադրական իրավունքի պաշտպանությունն ապահովելու համար, հարգելի պատճառների առկայության դեպքում բաց թողնված ժամկետը կարող է վերականգնվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը՝ տրանսպորտային միջոցի հետ կապված գործարքներից ծագող սեփականության իրավունքը՝ գործարքը ստորագրելու օրվանից 15-օրյա ժամկետում գրանցման ներկայացնելու մասով, համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, որ անձի սեփականության սահմանադրական իրավունքի պաշտպանությունն ապահովելու համար տրանսպորտային միջոցի պետական գրանցման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնված լինելու դեպքում ենթակա է վերականգնման:

2. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

1 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1479



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 143-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 6-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հոկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ.Մովսիսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 01.07.1998 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 01.09.1998 թվականին և ուժի մեջ է մտել 12.01.1999 թվականին:

Օրենսգրքի՝ «Գրավը» վերտառությամբ 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը սահմանում են.

«1. Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

...

6. Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատարանի որոշումը գրավատուն կարող է բողոքարկել վերադաս դատարան:

...»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2019 թվականի ապրիլի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, կողմերի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգիրքը Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներով սահմանված կարգավորումներն այնքանով, որքանով չեն երաշխավորում, որպեսզի գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, մինչդեռ տական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք լինի, վտանգում են Սահմանադրությամբ երաշխավորված անձի ազատության իրավունքը:

Դիմողն արձանագրում է, որ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խափանման միջոցների համակարգում գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման ծանրակշիռ երաշխիք է:

Սակայն, ըստ դիմողի՝ գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում, երբ օրենսդիրը մի կողմից այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը պայմանավորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խափանման միջոցների կիրառման բոլոր հիմքերով, մյուս կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում որպես գրավի կիրառման նպատակ է սահմանում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը և նույն հոդվածի 6-րդ մասով գրավի գումարը պետության եկամուտ դարձնելու հնարավորություն է նախատեսում միայն մեղադրյալի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու դեպքերում, գրավը գործուն միջոց չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խափանման միջոցների կիրառման մյուս հիմքերը, այդ թվում՝ մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու համար:

Դիմողը կարծում է, որ վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու երաշխիքների առկայության պայմաններում, եթե դատարանը գտնի, որ կալանավորված մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու վտանգը կարող է չեզոքացվել որպես գրավի առարկա առաջարկվող նյութական արժեքով և կալանավորումը փոխարինի գրավով, ապա մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու դեպքում գրավի առարկան պետության եկամուտ դարձնելու ձևով դատավարական պատասխանատվության ինքնուրույն միջոցը կիրառվել չի կարող և գրավի առարկան անվերապահորեն ենթակա է վերադարձման մեղադրյալին: Այսինքն՝ գրավի կիրառման դեպքում մեղադրյալի մոտ բացակայում է գրավի առարկան կորցնելու սպառնալիքը, որը կկաշկանդեր նրան ազատության մեջ գտնվելու դեպքում ձեռնպահ մնալ գործի քննությանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ կատարելուց:

Վերոնշյալի հիման վրա դիմողը փաստում է, որ գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում դատարանի կողմից կալանավորումը միակ այլընտրանքային խափանման միջոցով գրավով փոխարինելիս, այն չի ծառայում որպես գործուն միջոց ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալի վարքագծի պատշաճությունը երաշխավորելով գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գսպելու համար, ինչի արդյունքում, նշված հիմքով կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս գրավի միջնորդությունն օրենսդրական կարգավորումների վկայակոչմամբ կարող է ինքնաբերաբար մերժվել՝ առանց ըստ էության քննության առարկա դարձվելու:

Դիմողը հարկ է համարում նշել, որ ներկայումս ձևավորվել է գրավի՝ որպես միակ այլընտրանքային խափանման միջոցի, կիրառման ոչ միասնական իրավակիրառ պրակտիկա, երբ մի շարք գործերով դատարանները հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածին և այդ հոդվածի մեկնաբանման վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ մերժում են անձի նկատմամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը՝ նշելով, որ այն չի կարող հանդիսանալ գործի քննությանը խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք: Միևնույն ժամանակ, մի շարք գործերով էլ, ինչպես սույն գործով, դատարանները գործի քննությանը խոչընդոտելու հիմքի առկայության պայմաններում բավարարում են անձի նկատմամբ կիրառված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը:

Կալանավորումը միակ այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու վերաբերյալ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների և այդ պայմաններում ձևավորված ոչ միասնական իրավակիրառ պրակտիկայի արդյունքում, դիմողի կարծիքով, ողջամտորեն վտանգվում է անձի ազատության իրավունքը: Ըստ դիմողի՝ այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ մինչդատական վարույթի ընթացքում ներկայացված միջնորդությունների ընդհանուր թվաքանակում գերակշռում են դատարանների կողմից միջնորդությունների բավարարման դեպքերը՝ առանց գրավի կիրառման:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Վերաբերելի օրենսդրական դրույթների վերլուծության արդյունքում պատասխանողը հանգել է այն եզրակացության, ըստ որի գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց, պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ հիմնավորված է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը, ուստի օրենսդիրը Օրենսգրքով այն կիրառելու իրավունքը վերապահել է դատարանին՝ կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելով բացառապես այն կիրառելու անհրաժեշտության և հիմնավորված լինելու պարագայում:

Սահմանադրական դատարանի կողմից արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումների լույսի ներքո պատասխանողը փաստում է, որ օրենսդիրը, Սահմանադրության 27-րդ հոդվածի պահանջներին համահունչ սահմանելով անձնական ազատությունից զրկելու ինստիտուտի համապատասխան ընթացակարգեր, սահմանադրական պահանջներին համապատասխան հստակ ամրագրել է նաև վերջինիս բողոքարկման իրավունքի հայեցակարգից բխող անհրաժեշտ գործիքակազմ և ընթացակարգ:

Պատասխանողի կարծիքով՝ դիմողի կողմից ներկայացված փաստարկների և վերլուծությունների ուսումնասիրությունը չի տալիս այն հարցերի պատասխանը, թե վիճարկվող դրույթներն ինքնին ինչպես են հակասում Սահմանադրությանը:

Դիմողի բարձրացրած հարցերի լուծումն ըստ պատասխանողի՝ Օրենսգրքի և Սահմանադրական դատարանի տիրույթում չէ, քանի որ դիմողը բարձրացնում է դատարանների կողմից վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Վերոգրյալի համատեքստում պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը, ուստի հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում է գործի վարույթը կարճել:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումները

Մի շարք իրավական կարգավորումների և Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումների բովանդակային վերլուծության արդյունքում Կառավարությունը փաստում է, որ խափանման միջոցի, այդ թվում և՛ գրավի

որպես այլընտրանքային միակ խափանման միջոցի կիրառման իրավական նպատակն օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելն է, մասնավորապես գրավը քրեական վարույթում դատավարական հարկադրանքի միջոց է, որի կիրառմամբ մեղադրյալի ազատության իրավունքից զրկումը փոխարինվում է այդ իրավունքի սահմանափակմամբ, ուստի գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը:

Մինչդեռ, ըստ Կառավարության ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով նախատեսված կարգավորումները՝ գրավի կիրառման նախապայման դիտարկելով վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը և քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու դեպքերում միայն գրավի գումարը պետության եկամուտ դարձնելու հնարավորությունը, հանգեցնում են դատարանների կողմից գրավի միջնորդության մերժման՝ այն պատճառաբանությամբ, որ գրավի կիրառումը՝ մեղադրյալի կողմից քրեական դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող հանդիսանալ, ինչը Կառավարության կարծիքով, չի ապահովում գրավի որպես այլընտրանքային միակ խափանման միջոցի կիրառման իրավական նպատակը՝ ելնելով մեղադրյալի ազատության իրավունքի զրկման և սահմանափակման իրավական հիմքերի համապատասխանության տրամաբանությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կառավարությունը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով նախատեսված կարգավորումները խնդրահարույց են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված անձի ազատության հիմնարար իրավունքի երաշխավորման տեսանկյունից:

4. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նշում է. «... միջազգային դատական պրակտիկան և իրավաբանությունը փաստում են, որ.

1. Կալանքը՝ որպես խափանման միջոց, ենթադրաբար հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն որպես բացառիկ և վերջին միջոց (last resort), երբ մնացած բոլոր խափանման միջոցները, այդ թվում՝ գրավը, չեն կարող ապահովել հետապնդվող նպատակների իրագործումը:

2. Գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը չի կարող պայմանավորված լինել նույնիսկ ենթադրաբար կատարված հանցանքի ծանրության աստիճանից, այսինքն ամեն կոնկրետ դեպքում դատարանը պետք է ունենա լայն հայեցողություն, որոշելու թե արդյոք գրավը արդյունավետ միջոց է հետապնդվող նպատակներն իրագործելու նպատակով:

3. Միջազգային իրավաբանությամբ գրավը դիտարկվում է ոչ միայն որպես դատարանի առջև ներկայանալու և քննությունից չխուսափելու, այլ նաև արդարադատության իրականացմանը չմիջամտելու, այսինքն՝ քննությանը չխոչընդոտելու երաշխիք»:

Մինչդեռ, ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի փաստակազմի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը որպես գրավի կիրառման միակ պայման է դիտարկում քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը:

Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքով՝ բոլոր այն դեպքերում, երբ դատարանը եզրահանգի, որ գրավը կարող է լինել ենթադրաբար հանցանք կատարած անձի կողմից քրեական գործի վարույթը չխոչընդոտելու գործուն երաշխիք, այսինքն՝ գրավի կիրառմամբ կարելի է անձին զերծ պահել քննությանը խոչընդոտելուց, այնուամենայնիվ, կաշկանդված լինելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ, չի կարող կիրառել գրավ, և փաստորեն անձը պետք է մնա կալանքի տակ՝ ազատությունից կամայական զրկվածի կարգավիճակում:

Մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ անձի անձնական ազատության երաշխավորման միջազգային պրակտիկայի, սահմանադրաիրավական երաշխիքների և գործող օրենսդրական կարգավորումների համադրումից բխում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասն այնպիսի իրա-

վամեկնաբանման և իրավակիրառման պայմաններում, որ գրավի ընտրությունը սահմանափակվում է միայն վարույթն իրականացնող մարմնին ներկայանալն ապահովելու նպատակով, կարող է վտանգել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձի անձնական ազատության հիմնարար իրավունքը:

5. Հայաստանի Հանրապետության փաստաբանական պալատի դիրքորոշումները

ՀՀ փաստաբանական պալատը գտնում է, որ մի շարք իրավակարգավորումներից հետևում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի այնպիսի դրսևորումները կանխելը, ինչպիսիք են գործի քննությանը խոչընդոտելը կամ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը, գրավի կիրառման նպատակների մեջ չեն մտնում և նույն գործողությունների կատարումը հիմք չէ գրավը պետության եկամուտ դարձնելու համար:

Ըստ ՀՀ փաստաբանական պալատի այդպիսի օրենսդրական կարգավորումների պայմաններում, հաշվի առնելով այն, որ կալանքի փոխարեն գրավի կիրառումը չի ծառայի անձի պատշաճ վարքագծի ապահովման նպատակին, մասնավորապես, չի կանխի կասկածյալի կամ մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելը կամ այլ հանցանք կատարելը, դատական պրակտիկայում ողջամտորեն անհրաժեշտություն է առաջանում կալանքը չփոխարինել դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով, քանի որ գրավը չի ծառայի այն նպատակին, ինչպիսի ծառայում է կալանքը:

ՀՀ փաստաբանական պալատը գտնում է, որ նման պայմաններում վտանգվում է անձի ազատության իրավունքն այնքանով, որքանով գրավի որպես կալանքի այլընտրանքային խափանման միջոցի գոյության պայմաններում դատարանները կխուսափեն գրավ կիրառելուց և առավել նպատակահարմար կգտնեն անձին զրկել ազատությունից՝ վերջինիս պատշաճ վարքագիծն ապահովելու համար:

Վերոգրյալի համատեքստում, ՀՀ փաստաբանական պալատը կարծում է, որ Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում գրավի կիրառման հիմքերի և նպատակի սահմանափակումը բացառապես վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելն արդարացի չէ, հակասում է գրավի ինստիտուտի էությանն ու նշանակությանը, ինչպես նաև խախտում է անձի ազատության իրավունքը:

6. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները.

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզաբանել, արդյոք գրավը՝ միայն որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց նախատեսելը և դրա կիրառման օրենսդրական սահմանափակումը երաշխավորում են Սահմանադրության 27-րդ հոդվածում ամրագրված՝ անձի անձնական ազատության հիմնական իրավունքը և համապատասխանում են Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքին:

7. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները.

7.1. Սահմանադրությունը, անձնական ազատության իրավունքն ամրագրելով որպես հիմնական իրավունք, նախ և առաջ նպատակ է հետապնդել կանխել այդ ազատությունից ցանկացած կամայական կամ այլ անհիմն զրկումը:

Սահմանադրությունը սահմանել է նաև այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են անձին պաշտպանել ազատությունից ոչ իրավաչափ զրկվելուց (Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասեր):

Սահմանադրական դատարանը, բացահայտելով անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, մասնավորապես, նշել է, որ «...սահմանադիրը ... անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել»: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «... կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այս տեսակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները» (ՄԴՈ-827):

Իսկ ՄԴՈ-1387 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Ելնելով քրեական վարույթի առանձնահատկություններից, օրենքով առաջադրված կոնկրետ խնդիրներից՝ Օրենսգիրքը նախատեսել է իրավականիսիչ մի շարք միջոցներ, որոնք կոչված են անհրաժեշտ պայմաններ ապահովելու վարույթն իրականացնող մարմնի (պաշտոնատար անձի) գործունեության՝ օրենքով նախանշված նպատակների իրագործման համար: Նման իրավականիսիչ միջոց է **գրավի ինստիտուտը**, որը, միաժամանակ, քրեադատավարական գործընթացներում անձնական ազատության իրավունքի՝ օրենքով նախատեսված հիմքով, **զրկումը վերացնելու**, կալանավորման (ազատությունից զրկելու) **այլընտրանքային** իրավական միջոց է, երբ առկա են այդպիսի «զրկումը» վերացնելու բարենպաստ իրավապայմաններ»: Սահմանադրական դատարանը նույն որոշման մեջ նաև փաստել է. «Խափանման միջոցի, այդ թվում և՛ գրավի, կիրառման իրավական նպատակը հենց օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելն է: Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանված է կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ (այսինքն՝ նաև գրավի) կիրառման հիմքը, համաձայն որի՝ մեղադրյալի նկատմամբ այն կարող է կիրառվել միայն այնպիսի դեպքերում, երբ «...բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները», այսինքն՝ թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրել, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալ և այլն»:

Սույն գործի շրջանակներում Օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու և իր իրավական դիրքորոշումները զարգացնելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ոչ միայն գրավին, այլև դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենսգրքի 18-րդ գլխով նախատեսված խափանման մյուս միջոցներին վերաբերող իրավակարգավորումներին: Վերջիններիս համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է.

1) Օրենսգիրքը գրավի՝ որպես խափանման միջոցի համար սահմանել է ընդհանրական կարգավորումներ, որոնք վերաբերում են նաև խափանման այլ միջոցներին: Այդպիսիք են՝

ա) խափանման միջոցների ընդհանուր հասկացությունը և կիրառման նպատակը (Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մաս):

բ) խափանման միջոց կիրառելու միասնական հիմքերը (Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մաս):

գ) խափանման միջոց կիրառելիս հաշվի առնվող հանգամանքները կամ խափանման միջոցի կիրառման նույնական պայմանները (Օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մաս):

դ) խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված (Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս):

2) Օրենսգրքում առկա են մի շարք հատուկ դրույթներ, որոնք գրավը տարբերակում են խափանման այլ միջոցներից: Մասնավորապես՝

ա) ի տարբերություն ազատությունից զրկելու հետ չկապված այլ խափանման միջոցների՝ միայն գրավն է կալանավորման այլընտրանքային խափանման միջոցը (Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս):

բ) գրավը, ինչպես և կալանավորումը, կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ (Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մաս) և միայն դատարանի որոշմամբ (Օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մաս):

գ) գրավը կարող է կիրառվել միայն կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելուց հետո՝ ինչպես սկզբնական կալանքի կիրառման, այնպես էլ դրա ժամկետը երկարացնելու ժամանակ (Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս, 137-րդ հոդվածի 4-րդ մաս և 139-րդ հոդվածի 2-րդ մաս):

դ) կալանավորման այլընտրանք լինելու ուժով՝ գրավի կիրառման համար անուղղակի ձևով նախատեսված են հատուկ նախապայմաններ (Օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մաս), ուստի, ի տարբերություն ազատությունից զրկելու հետ չկապված այլ խափանման միջոցների, գրավը չի կարող կիրառվել մինչև մեկ տարի ազատագրվմամբ կամ ավելի մեղմ պատժվող հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ:

ե) գրավը որպես խափանման միջոց կարող է փոխարինվել կալանքով, եթե մեղադրյալը խախտել է իր վրա դրված պարտականությունները և նախատեսված սահմանափակումները (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 8-րդ մաս):

3) Օրենսգիրքը բովանդակում է նաև այլ դրույթներ, որոնք էապես տարբերվում են վերոնշյալ թե՛ ընդհանրական, և թե՛ հատուկ կարգավորումներից: Այսպես

ա) թեև գրավը կալանավորման այլընտրանքն է, դրա կիրառումը սահմանափակված է մեկ նպատակով, այն է՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մաս):

բ) որպես գրավ ընդունված գույքը կարող է դարձվել պետության եկամուտ, եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս), կամ վերադարձվում է գրավատուին, մասնավորապես, երբ չեն ապացուցվել վերոնշյալ խախտումները (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 7-րդ մաս):

գ) թեև չհեռանալու մասին ստորագրություն կիրառելն ըստ էության ունի նույն նպատակը, ինչ գրավը (Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մաս), այն զուտ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց չէ:

դ) ազատությունից զրկելու հետ չկապված այլ խափանման միջոցների (անձնական երաշխավորության, կազմակերպության երաշխավորության, հսկողության հանձնելու, հրամանատարության հսկողությանը հանձնելու) համար նախատեսված է կիրառման ավելի լայն նպատակ՝ երաշխավորել կամ ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը (Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մաս, 146-րդ հոդվածի 1-ին մաս, 148-րդ հոդվածի 1-ին մաս, 149-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն դրանք կալանավորման այլընտրանք չեն համարվում:

ե) թեև գրավը կալանավորման այլընտրանք է, սակայն, ի տարբերություն կալանավորման, մինչդեռ տական վարույթում այն կարող է փոփոխվել և վերացվել ոչ միայն դատախազի, այլև նրա համաձայնությամբ՝ քննիչի կողմից (Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մաս):

7.2. Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ դրա 2-րդ մասով սահմանված բոլոր խափանման միջոցների, այդ թվում՝ կալանավորման կիրառումը հետապնդում

է նույն նպատակը՝ քրեական վարույթի ընթացքում կանխել կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը և ապահովել դատավճռի կատարումը:

Կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի հնարավոր դրսևորումները սպառնիչ թվարկված են Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում: Դրանք են՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելը.

2) մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելը.

4) քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց խուսափելը.

5) դատարանի դատավճռի կատարմանը խոչընդոտելը:

Վերոգրյալից հետևում է, որ որոշակի հանգամանքների համակցության պարագայում ազատությունից զրկելու հետ չկապված վեց խափանման միջոցներից յուրաքանչյուրի կիրառումն սկզբունքորեն կարող է ապահովել այն նույն ցանկալի արդյունքը, ինչ ազատությունից զրկելուն հանգեցնող միակ խափանման միջոցը կալանավորումը: **Հետևաբար, քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է իրական հնարավորություն ունենա ոչ միայն հիմնավորված ենթադրության մակարդակով գնահատել կասկածյալի կամ մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքածի այս կամ այն դրսևորման հավանականությունը, այլև անկաշկանդ կիրառել հենց այն խափանման միջոցը, որը, իր համոզմամբ, պիտանի և անհրաժեշտ է նախանշված նպատակին հասնելու համար և կարող է արդյունավետ կերպով չեզոքացնել ենթադրյալ ոչ պատշաճ վարքագծի բացասական հետևանքները:**

Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ բավարար հիմքերի առկայության դեպքում Օրենսգրքի վերաբերելի կարգավորումները թույլ են տալիս կալանավորումը կիրառել մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի օրենքով նախատեսված ցանկացած դրսևորում կանխելու կամ խափանելու համար: Սյդուհանդերձ, կալանավորման այլընտրանք գրավը, Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին

մասում առկա կարգավորման ուժով, ենթակա է կիրառման անձի պատշաճ վարքագծի միայն մեկ դրսևորումը, այն է քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: **Դրանից հետևում է, որ օրենսդիրը մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի օրենքով նախատեսված այլ դրսևորումները կանխելու կամ խափանելու համար, գրավը պիտանի և անհրաժեշտ միջոց չի համարում և իրավական այդպիսի արգելքն ինքնին հանգեցնում է իրավասու մարմնի կողմից գրավի կիրառման հարցը չքննարկելուն կամ այդպիսի միջնորդությունը մերժելուն:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում գրավը դիտարկել է որպես ինքնուրույն խափանման միջոց (Aleksandr Makarov v. Russia, no. 15217/07 Judgment 12.03.2009 §138) նշելով, որ այն կարող է կիրառվել միայն եթե գերակշռում են կալանքի կիրառման համար անհրաժեշտ հիմքերը (Musuc v. Moldova, no 42440/06, Judgment 06.11.2007, § 42), այլ ոչ թե կալանավորման որոշման դեպքում: ՄԻԵԴ-ը նաև շեշտել է, որ օրենքի ուժով գրավի ավտոմատ մերժումն առանց որևէ դատական վերահսկողության, անհամատեղելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի երաշխիքների հետ (Piruzyan v. Armenia, no. 33376/07, 26 June 2012, §105, S.B.C. v. the United Kingdom, no. 39360/98, 19 June 2001, §§ 23-24):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակին այլ, ավելի մեղմ միջոցներով հասնելու հնարավորությունը պետք է օրենսդրորեն երաշխավորված լինի: Մինչդեռ, վիճարկվող օրենսդրական կարգավորման պայմաններում կալանավորված անձը զրկվում է որոշակի երաշխիքի տրամադրման դիմաց ազատ արձակվելու հիմնական իրավունքի իրականացումից: Ավելին, անձին չի տրամադրվում նաև հնարավորություն՝ խափանման այլ, ավելի մեղմ միջոցի կիրառման շնորհիվ ի սկզբանե խուսափել ազատազրկումից, քանի որ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները չեն կարող ապահովել կամ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և հանրային շահերի համարժեք պաշտպանությունը:

7.3. Սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ գրավի՝ որպես խափանման միջոցի կիրառման պայմանները խախտելու դեպքում կարող են վրա հասնել որոշակի անբարենպաստ հետևանքներ: Մասնավորապես, որպես գրավ ընդունված գույքը կարող է դարձվել պետության եկամուտ, և գրավը կարող է փոխարինվել ավելի խիստ խափանման միջոցով՝ կալանքով: Եթե առաջին հետևանքը կիրառելի է նաև անձնական երաշխավորության և կազմակերպության երաշխավորության դեպքում (Օրենսգրքի 147-րդ հոդվածի 3-րդ մաս), ապա երկրորդի առումով օրենսդիրը որևէ այլ խափանման միջոցի պայմանի խախտման հետ կապված նման ուղղակի սանկցիա չի նախատեսել, այլ սահմանափակվել է միայն «անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից խափանման միջոցը կարող է փոխվել» ընդհանրական ձևակերպմամբ (Օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մաս):

Այդուհանդերձ, հատկանշական է, որ որպես գրավ ընդունված գույքը կարող է դարձվել պետության եկամուտ և գրավը կարող է փոխարինվել կալանքով միայն այն դեպքում, երբ մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք: Այսինքն՝ եթե նույնիսկ գրավը կիրառվի մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի այլ դրսևորումները կանխելու կամ խափանելու համար, ապա այլ պարտականություններ չկատարելու կամ այլ սահմանափակումներ խախտելու դեպքում Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերով նախատեսված անբարենպաստ հետևանքները վրա հասնել չեն կարող: **Հետևաբար, հիշյալ դեպքերում այդ սանկցիաները չունեն զսպող ազդեցություն և ի գործ չեն մեղադրյալին հետ պահել ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելուց: Մինչդեռ յուրաքանչյուր խափանման միջոցի, այդ թվում՝ գրավի կիրառման նպատակը կասկածյալի կամ մեղադրյալի Օրենսգրքով նախատեսված ոչ պատշաճ վարքագծի ցանկացած դրսևորում կանխելն է, իսկ այդ արդյունքին չհասնելու դեպքում՝ նրա նկատմամբ դատավարական ավելի խիստ սահմանափակումների գործադրումը:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը, որով գրավի կիրառումը թույլատրելի է համարվում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապա-

հովելու նպատակով, ինչպես նաև Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասը, որը գրավը պետության եկամուտ դարձնելը հնարավոր է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու համար, խնդրահարույց են Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածների տեսանկյունից:

7.4. Մույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ Օրենսգրքում առկա «այլընտրանքային խափանման միջոց» հասկացությանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «այլընտրանքային խափանման միջոց» ձևակերպումն Օրենսգրքում օգտագործված է միայն գրավի համար և միայն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասում: Ավելին՝ Օրենսգրքում առկա որևէ այլ կարգավորման մեջ «այլընտրանք» կամ «այլընտրանքային» եզրույթը չի գործածվում: Ի վերջո, Օրենսգրքում առկա չէ որևէ այլ դրույթ, որն ուղղակի կամ անուղղակի հնարավորություն կտար ոչ միայն հստակ հետևություններ անել միայն գրավը որպես կալանավորման այլընտրանք դիտարկելու օրենսդրի նպատակի վերաբերյալ, այլև՝ «այլընտրանք» հասկացության էության մասին ընդհանրապես:

Այդուհանդերձ, Օրենսգրքի մի շարք դրույթների համադրումից և վերլուծությունից հետևում է, որ գրավը կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է, քանի որ.

ա) կիրառվում է միայն այն դեպքում, երբ դատարանն արդեն կայացրել է մեղադրյալին կալանավորելու մասին որոշում (134-րդ հոդվածի 4-րդ մաս).

բ) կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը, իսկ պաշտպանության կողմի միջնորդությամբ հետագայում կարող է վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը (137-րդ հոդվածի 4-րդ մաս).

գ) կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը որոշելիս դատարանն իրավունք ունի ճանաչել մեղադրյալին գրավով ազատելու հնարավորությունը և նշանակել գրավի գումարը (139-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսինքն՝ Օրենսդիրը գրավը դիտարկել է որպես կալանավորման «այլընտրանք» այն պատճառով, որ դրա ընտրության հնարավորությունը կարող է քննարկվել միայն կալանավորման կամ դրա ժամկետը երկարացնելու հարցը լուծելու ընթացքում և կիրառելի է բացառապես կալանավորումը որպես խափանման միջոց դատական ակտով ընտրելուց հետո:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո գրավը ոչ թե կալանավորման այլընտրանքն է, այլ բնութագրվում է որպես ոչ ինքնուրույն, կալանավորումից կախյալ խափանման միջոց, որի ոչ միայն կիրառումը, այլև նույնիսկ քննարկումը հնարավոր են միայն համապատասխան դատական ակտի կայացման դեպքում:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքով նախատեսված խափանման միջոցների աստիճանակարգությունում կալանավորումն ամենախիստն է և միակը, որն անձին գրկում է անձնական ազատությունից: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ կալանավորումը՝ որպես խափանման միջոցներից մեկը, անձի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն ժամանակ, երբ այլ խափանման միջոցները թույլ չեն տալիս հասնել հետապնդվող իրավաչափ նպատակներին: Ուստի կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին բացառիկ միջոց (*ultima ratio*), միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա: Քրեադատավարական օրենքում ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը: Մինչև ժամանակ այն պետք է նաև պարտադիր կարգով լինի անձի հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակողը, այսինքն՝ անհրաժեշտ միջոցը: Ուստի, Սահմանադրության տեսանկյունից անթույլատրելի է խափանման միջոցներից մեկի կիրառման հարցը քննարկել արդեն իսկ դրանցից մյուսին, ընդամին՝ ամենախիստ միջոցին նախապատվություն տալուց հետո:

Այսպիսով, հաշվի առնելով անձի անձնական ազատության իրավունքին կալանավորման առավել ինտենսիվ միջամտող բնույթը, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում այն

ընտրելուց առաջ պարտավոր է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հիմնավորված կերպով բացատրել մնացած բոլոր, ավելի մեղմ խափանման միջոցների ընտրության հնարավորությունը: Մինչդեռ, Օրենսգրքով նախատեսված «այլընտրանքի» պայմաններում դատարանը որոշակի հիմքերով սկզբում կիրառում է առավել խիստ խափանման միջոցը, իսկ կարճ ժամանակ անց իր կողմից հաստատված փաստերի և ընդունված հիմնավորումների առկայությամբ այն իրավասու է փոխարինել ավելի մեղմով:

Անձի անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ օրենքով նախատեսված ցանկացած խափանման միջոց, որը կապված չէ անձին ազատությունից զրկելու հետ, պետք է դիտարկվի որպես այլընտրանք կալանավորմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «այլընտրանք» հասկացության սահմանադրաիրավական ընկալման իրավասու մարմինն պետք է ոչ միայն այս կամ այն խափանման միջոցն անմիջական ընտրելու հնարավորություն վերապահի, այլև կանխորոշի անձի անձնական ազատությանը միջամտող առավել ինտենսիվ, ամենախիստ խափանման միջոց հանդիսացող կալանավորման՝ որպես դատավարական ծայրահեղ միջոցի կիրառումը միայն այն դեպքում, երբ սպառվել են անձի պատշաճ վարքագիծը քրեադատավարական ներգործության այլ միջոցներով ապահովելու բոլոր հնարավորությունները:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքի վերաբերյալ Օրենսգրքի կարգավորումները, մասնավորապես, գրավը միայն որպես կալանավորման միակ այլընտրանք սահմանելը հակասում են Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով որ գրավի կիրառումը թույլատրելի է համարում միայն քրեական

վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով՝ բացառելով նույն Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված մյուս դեպքերը, ճանաչել Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը պետության եկամուտ դարձնելը հնարավոր է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու համար, ճանաչել Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասը, 137-րդ հոդվածի 4-րդ մասը և 139-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը սահմանում են որպես կալանավորման այլընտրանք՝ կալանավորումից կախյալ խափանման միջոց, ճանաչել Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին հակասող:

4. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասը, 137-րդ հոդվածի 4-րդ մասը և 139-րդ հոդվածի 2-րդ մասը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա խափանման այլ միջոցները՝ որպես կալանավորման այլընտրանք, ինչպես նաև գրավը՝ որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված վերոնշյալ դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորու-

թյուն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

15 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1480



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ
ԿՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԻ
ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հոկտեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ադոնցի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի մայիսի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության

կառավարության միջև սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի օգոստոսի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի մայիսի 26-ին Երևանում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) Չինաստանի Ժողովրդական Հանրապետության վավեր սովորական անձնագրեր կրող Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելիս, դուրս գալիս կամ տարանցիկ երթևեկելիս ազատել մուտքի արտոնագրի պահանջից՝ իրենց մուտք գործելու օրվանից մինչև իննսուն (90) օր ժամկետով՝ ցանկացած 180 օր ժամանակահատվածի ընթացքում (հոդվ. I, կետ 1),

բ) ապահովել, որ Համաձայնագրի I հոդվածում նշված՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործեն, դուրս գան կամ տարանցիկ երթևեկեն այն սահմանային անցակետերով, որոնք թույլատրված են գործելու որպես միջազգային ուղևորափոխադրումների համար նախատեսված մուտքի, մեկնման կամ տարանցիկ երթևեկության անցակետեր և ղեկավարվում են օտարերկրացիների մուտք գործելու, էլքի կամ տարանցիկ երթևեկելու նկատմամբ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներով և կարգավորումներով (հոդվ. II),

զ) Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու պայմանները չկատարելու դեպքում արագ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել այդպիսի քաղաքացիների նույնացման և նրանց՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածք անվտանգ ու օրինական կերպով վերադարձի համար (հոդվ. III),

դ) դիվանագիտական ուղիներով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը փոխանցել Համաձայնագրի I հոդվածում նշված՝ Հայաստանի Հանրապետության վավեր անձնագրերի նմուշները՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին իրավական ընթացակարգերի ավարտի մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու ամսաթվին հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում՝ Համաձայնագրի IX հոդվածի համաձայն (հոդվ. V, կետ 1),

ե) Հայաստանի Հանրապետության նոր անձնագիր տրամադրելու կամ գործող անձնագրերը փոխելու դեպքում անմիջապես ծանուցել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը այդ փոփոխությունների մասին և նոր կամ փոխված անձնագրերի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրվա ընթացքում դիվանագիտական ուղիներով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը տրամադրել նոր կամ փոխված անձնագրերի նմուշները (հոդվ. V, կետ 2),

զ) ազգային անվտանգության, հասարակական կարգի, հանրային առողջության շահերից ելնելով կամ այլ պատճառներով Համաձայնագրի գործողությունը ժամանակավորապես մասամբ կամ ամբողջությամբ կասեցնելու իր իրավունքն իրացնելիս Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը դիվանագիտական ուղիներով նախապես գրավոր ծանուցել Համաձայնագրի գործողությունը կասեցնելու, իսկ հետագայում՝ կասեցումը չեղարկելու իր մտադրության մասին (հոդվ. VI, կետ 1):

3. Համաձայնագրով նախատեսված են նաև դրույթներ՝ վեճերի կարգավորման (հոդվ. VII), Համաձայնագրում փոփոխություններ կատարելու (հոդվ. VIII), դրա ուժի մեջ մտնելու (հոդվ. IX, կետ 1), տևողության և գործողության դադարեցման (հոդվ. IX, կետ 2) վերաբերյալ:

4. Համաձայնագրով չի սահմանափակվում որևէ կողմի պետության համապատասխան մարմինների իրավունքը՝ արգելելու մյուս կողմի պետության քաղաքացու մուտք գործելն իր տարածք, կրճատելու կամ դադարեցնելու իր տարածքում նրա գտնվելու ժամանակահատվածը՝ առանց իրենց կայացրած որոշման պատճառները ներկայացնելու, եթե նման անձը համարվում է persona non grata կամ անցանկալի անձ (հոդվ. IV):

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և նպատակաուղղված են խթանելու Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև բարեկամական հարաբերությունները և դյուրացնելու իրենց քաղաքացիների փոխադարձ այցելությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց:

1. 2019 թվականի մայիսի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

22 հոկտեմբերի 2019 թվականի
ՄԴՈ-1481



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 16-ԻՆ ՀԱԱԳԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԱՖՐԻԿՅԱՆ-ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻԳՐԱՑՎՈՂ ՋՐԱՅԻՆ
ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հոկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ի. Ղափլանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1995 թվականի հունիսի 16-ին Հաագայում ստորագրված «Աֆրիկյան-եվրասիական միգրացվող ջրային թռչունների պահպանության մասին» համա-

ձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի օգոստոսի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Աֆրիկյան-եվրասիական միգրացվող ջրային թռչունների պահպանության մասին» բազմակողմ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 1995 թվականի հունիսի 16-ին Հաագայում, երբ այն առաջին անգամ ներկայացվել է պետությունների ստորագրմանը:

Համաձայնագրի կիրարկման նպատակն է համակարգված կամ համաձայնեցված գործողությունների միջոցով էականորեն նպաստել միգրացվող ջրային թռչունների և դրանց բնակավայրերի առավել արդյունավետ պահպանմանը և լրացուցիչ օգուտներ բերել բազմաթիվ այլ կենդանիների ու բույսերի տեսակներին:

Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 17 հոդվածից, Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող երեք հավելվածներից, Հավելված 3-ին կից 1-ին Աղյուսակից: Հավելված 1-ով սահմանվում է Համաձայնագրի գործողության տարածքը, Հավելված 2-ով՝ ջրային թռչունների տեսակները, որոնց նկատմամբ կիրառելի է Համաձայնագիրը, իսկ Հավելված 3-ով՝ գործողության ծրագիրը: 3-րդ Հավելվածի 1-ին Աղյուսակը նվիրված է միգրացվող ջրային թռչունների պոպուլյացիաների կարգավիճակին:

2019 թվականի հունիսի 12-ի դրությամբ Համաձայնագրին միացել է 79 պետություն:

2. Համաձայնագրի «Կիրարկումը և ֆինանսավորումը» վերտառությամբ V հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես և Համաձայնագրի յուրաքանչ-

յուր Կողմ ստանձնում է Միավորված ազգերի կազմակերպության գնահատման սանդղակին համապատասխան Համաձայնագրի բյուջե մուծումներ կատարելու ֆինանսական պարտավորություն: Նշված մուծումները յուրաքանչյուր Կողմի համար պետք է սահմանափակվեն ընդհանուր բյուջեի առավելագույնը 25 տոկոսով, և տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ոչ մի կազմակերպությունից չպետք է պահանջվի վարչական ծախսերի 2,5 տոկոսից ավելի մուծում կատարել:

Ըստ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ դիմողի կողմից ներկայացված տեղեկանք-հիմնավորման՝ Համաձայնագրին անդամակցության վճարը Հայաստանի Հանրապետության համար կազմում է տարեկան 2000 եվրո:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրի տարածքում վտանգված ջրային թռչունների միգրացվող տեսակներին ապահովել լիարժեք պահպանություն,

- ապահովել, որ միգրացվող ջրային թռչունների ցանկացած օգտագործում հիմնված լինի իրենց էկոլոգիայի գնահատման ամենաժամանակակից գիտելիքների վրա և հաստատուն լինի ինչպես այդ տեսակների, այնպես էլ դրանք պահպանող էկոլոգիական համակարգերի համար,

- որոշել ՀՀ տարածքում միգրացվող ջրային թռչունների տարածքները և բնակավայրերը և խրախուսել այդ վայրերի պահպանությունը, կառավարումը և վերականգնումը Համաձայնագրի IX հոդվածի «ա» և «բ» կետերում նշված բնակավայրերի պահպանությամբ զբաղվող մարմինների հետ մեկտեղ,

- ուսումնասիրել այն խնդիրները, որոնք առաջացել են կամ կարող են առաջանալ մարդկային գործունեությունից, և ձգտել իրականացնել պաշտպանիչ միջոցներ՝ ներառյալ բնակավայրի վերականգնումը, և բնակավայրի կորստի դեպքում՝ փոխհատուցման միջոցները,

- համագործակցել միջազգային համաձայնեցված գործողություն պահանջող արտակարգ իրավիճակներում և պարզել ջրային թռչունների միգրացվող այն տեսակները, որոնք այդպիսի իրավիճակներում առավել խոցելի են, ինչպես նաև համագործակցել արագ արձագանքման համապատասխան մեխանիզմների մշակման ուղղությամբ,

- արգելել այլ տարածքներում բնակվող ջրային թռչունների տեսակների կանխամտածված ներմուծումը շրջակա միջավայր և այդ տեսակների ոչ միտումնավոր ազատ արձակումը կանխելու համար ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները, եթե այդ ներմուծումը կամ ազատ արձակումը կարող է վնաս հասցնել վայրի բուսական և կենդանական աշխարհի պահպանության կարգավիճակին, իսկ եթե այլ տարածքներում բնակվող ջրային թռչունները արդեն ներմուծվել են, ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ թույլ չտալու համար, որ այդ տեսակները վտանգեն բնիկ տեսակներին,

- նախաձեռնել միգրացվող ջրային թռչունների կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ հետազոտություններ կամ աջակցել դրանց՝ ներառյալ հետազոտության և մոնիտորինգի մեթոդների ներդաշնակեցումը և, անհրաժեշտության դեպքում, համակցված կամ համատեղ ծրագրերի ստեղծումը,

- մշակել և շարունակել միգրացվող ջրային թռչունների պահպանության հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացման և ընկալման ծրագրերն ընդհանրապես և, մասնավորապես, Համաձայնագրի որոշակի նպատակների և դրույթների համար,

- իրականացնել հետազոտությունների, մոնիտորինգի, պահպանության և կրթական ծրագրերի արդյունքների և տեղեկատվության փոխանակում,

- համագործակցել միմյանց հետ, մասնավորապես, հետազոտության և մոնիտորինգի ոլորտներում՝ Համաձայնագրի կիրարկմանն աջակցելու նպատակով:

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է նաև մի շարք այլ պարտավորություններ.

- Համաձայնագրի կիրարկման համար նշանակել մարմին կամ մարմիններ, որը (որոնք), ի թիվս այլ հարցերի, կիրականացնի (կիրականացնեն) բոլոր այն գործողությունների մոնիտորինգը, որոնք կարող են ազդեցություն ունենալ ջրային թռչունների այն միգրացվող տեսակների պահպանության կարգավիճակի վրա, որոնց համար Հայաստանի Հանրապետությունը ապրելավայրի պետություն է (Հոդված V, կետ 1, ենթակետ «ա»),

- նշանակել Համաձայնագրի մյուս կողմերի հետ կապն ապահովող մարմին և, առանց ուշացման, Համաձայնագրի քարտուղարությանը հաղորդել դրա անվանումը և հասցեն, Կողմերի ժողովի հերթական յուրաքանչյուր նիստի համար՝ սկսած երկրորդ նիստից,

պատրաստել զեկույց Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով պահպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցներին, յուրաքանչյուր զեկույց ներկայացնել Կողմերի քարտուղարություն ոչ ուշ, քան Կողմերի ժողովի այն հերթական նիստից հարյուր քսան օր առաջ, որի համար պատրաստվել է (Հոդված V, կետ 1, ենթակետեր «բ», «գ»),

- ապահովել, որ Համաձայնագրի Հավելված 3-ում շարադրված Գործողության ծրագիրը կիրառվի նույն հավելվածի Աղյուսակ 1-ում (այսուհետ՝ Աղյուսակ 1) թվարկված միգրացվող ջրային թռչունների պոպուլյացիաների նկատմամբ (Հավելված 3, կետ 1, ենթակետ 1.1),

- որպես Աղյուսակ 1-ի Ա սյունակում թվարկված պոպուլյացիաներ ունեցող պետություն, ապահովել այդ պոպուլյացիաների պահպանությունը՝ համաձայն Համաձայնագրի III հոդվածի 2(ա) կետի, մասնավորապես և պահպանելով Հավելված 3-ի 2.1.3 կետի դրույթները. ա) արգելել ՀՀ տարածքում հանդիպող այդ պոպուլյացիաների թռչունների և ձվերի հավաքը, բ) արգելել կանխամտածված անհանգստացումն այնքանով, որքանով անհանգստացումը էական կլինի տվյալ պոպուլյացիայի պահպանության համար, գ) արգելել այն պոպուլյացիաների թռչունների կամ ձվերի տնօրինումը, օգտագործումը և վաճառքը, որոնք հավաքվել են Համաձայնագրի Հավելված 3-ի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի (ա) պարբերությունում նշված արգելքների խախտմամբ, արգելել այդ թռչունների և ձվերի ճանաչելի մասերի կամ արգասիքների տնօրինումը կամ օգտագործումը և առևտուրը (Հավելված 3, կետ 2, ենթակետ 2.1.1),

- որպես Աղյուսակ 1-ի Ա սյունակում թվարկված պոպուլյացիաներ ունեցող պետություն, կանոնակարգել Բ սյունակում թվարկված թռչունների և ձվերի հավաքը, արգելել տվյալ պոպուլյացիաների թռչունների որսը բազմացման և աճեցման տարբեր փուլերում և բազմացման տարածքներ վերադառնալու շրջանում, եթե որսն ունի անբարենպաստ ազդեցություն տվյալ պոպուլյացիայի պահպանության վիճակի վրա, կարգավորել հավաքի ձևերը, անհրաժեշտության դեպքում սահմանափակել հավաքի չափաքանակները և ապահովել համապատասխան հսկողություն, որպեսզի երաշխավորվի, որ այդ սահմանափակումները կպահպանվեն, արգելել այն պոպուլյացիաների թռչունների և ձվերի տնօրինումը կամ օգտա-

գործումն ու առևտուրը, որոնք հավաքվում են Համաձայնագրի Հավելված 3-ի 2-րդ կետի 2.1.2 ենթակետի (դ) պարբերությունում նշված արգելքների խախտմամբ, արգելել այդ թռչունների և ձվերի ճանաչելի մասերի կամ արգասիքների տնօրինումը կամ օգտագործումն ու առևտուրը (Հավելված 3, կետ 2, ենթակետ 2.1.2),

- համագործակցել Համաձայնագրի մյուս կողմերի հետ՝ նպատակ ունենալով մշակել և իրագործել Ադրյուսակ 1-ի Ա սյունակի 1-ին կարգում թվարկված և Ադրյուսակ 1-ի Ա սյունակում աստղանիշով նշված պոպուլյացիաների համար եզակի տեսակների մասով գործողության ծրագրեր (Հավելված 3, կետ 2.2, ենթակետ 2.2.1),

- նախապատրաստել և իրագործել Ադրյուսակ 1-ի Ա սյունակի 1-ին կարգում թվարկված պոպուլյացիաների եզակի տեսակների մասով գործողության ծրագրեր՝ նպատակ ունենալով բարելավել նրանց ընդհանուր պահպանության կարգավիճակը (Հավելված 3, կետ 2.2, ենթակետ 2.2.2),

- հնարավորության և նպատակահարմարության դեպքերում Համաձայնագրի մյուս կողմերի հետ համագործակցելով մշակել և իրագործել արտակարգ միջոցառումներ Ադրյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար, երբ Համաձայնագրի տարածքի որևէ մասում առանձնահատուկ անբարենպաստ կամ վտանգող պայմաններ են դիտարկվում (Հավելված 3, կետ 2.3),

- մեծագույն զգոնություն ցուցաբերել Ադրյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներն իրենց պատմական ապրելավայրերում, ուր դրանք արդեն չեն հանդիպում, վերականգնելու ժամանակ: Համաձայնագրի քարտուղարությանը նախապես տեղեկացնել Ադրյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վերականգնման բոլոր ծրագրերի մասին (Հավելված 3, կետ 2.4),

- անհրաժեշտության դեպքում արգելել այլ տարածքներում բնակվող բույսերի և կենդանիների այն տեսակների ներմուծումները, որոնք կարող են վնասակար լինել Ադրյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար, անհրաժեշտության դեպքում պահանջել համապատասխան նախազգուշական միջոցների կիրառում՝ խուսափելու համար այլ տարածքներում բնակվող տեսակներին պատկանող թռչունների պատահական ազատ արձակումից, իրագործելիության և նպատակահարմարության սահմաններում ձեռնարկել միջոցներ՝ ներառյալ հավաքը, որպեսզի ապահովեն, որ ՀՀ տարածքում արդեն իսկ ներմուծված՝ այլ տարածքներում բնակվող

տեսակները կամ դրանց խառնածինները չհանդիսանան հավանական վնասի աղբյուր Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար (Հավելված 3, կետ 2.5),

- անհրաժեշտության դեպքում միջազգային կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել և հրապարակել ՀՀ տարածքում գտնվող՝ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար կարևոր բնակավայրերի ազգային գույքագրումները, որպես առաջնահերթ խնդիր՝ ձգտել որոշել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար միջազգային և ազգային կարևորություն ունեցող բոլոր բնակավայրերը (Հավելված 3, կետ 3.1),

- իրագործելիության և անհրաժեշտության սահմաններում ձգտել վերահաստատել և վերականգնել այն տարածքները, որոնք նախկինում կարևոր էին Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար (Հավելված 3, կետ 3.3),

- հնարավորինս աջակցել կառույցների նախագծման և շինարարության բարձր բնապահպանական ստանդարտներին՝ նվազագույնի հասցնելու համար դրանց ազդեցությունը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա, մշակել քայլեր՝ նվազագույնի հասցնելու արդեն իսկ գործող կառույցների ազդեցությունը, երբ ակնհայտ է դառնում, որ դրանք բացասական ազդեցություն են թողնում համապատասխան պոպուլյացիաների վրա (Հավելված 3, կետ 4.3, ենթակետ 4.3.5),

- ստեղծել և արդյունավետորեն իրականացնել շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի՝ օրենքով նախատեսված ստուգման մեխանիզմներ, մասնավորապես, նավթի արտահոսքին, պինդ թափոնների բեռնաթափմանն ու արտանետմանն առնչվող միջազգային նորմերին և իրավական համաձայնագրերին համապատասխան՝ նպատակ ունենալով նվազեցնել դրանց ազդեցությունը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա (Հավելված 3, կետ 4.3, ենթակետ 4.3.9):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 12-րդ հոդվածի պահանջներին և դրանց կատարումը կարող է նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1995 թվականի հունիսի 16-ին Հաագայում ստորագրված «Աֆրիկյան-եվրասիական միգրացվող ջրային թռչունների պահպանության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

22 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1482



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվապահի ՄԱՅԻՄԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ՝ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հոկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարանի, Համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի մայիսի 14-ին ստորագրված «Երրորդ պետությունների, միջազգա-

յին կազմակերպությունների կամ միջազգային ինտեգրացիոն միավորումների հետ՝ Եվրասիական տնտեսական միության միջազգային պայմանագրերի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի օգոստոսի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Երրորդ պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ միջազգային ինտեգրացիոն միավորումների հետ՝ Եվրասիական տնտեսական միության միջազգային պայմանագրերի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 14-ին Մոսկովում՝ երրորդ պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ միջազգային ինտեգրացիոն միավորումների հետ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) միջազգային պայմանագրերի կնքման, դադարեցման և գործողության կասեցման կարգը սահմանելու նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

• որպես Միության անդամ պետություն (այսուհետ՝ անդամ պետություն) ուսումնասիրել միջազգային պայմանագիր կնքելու առաջարկությունը, ըստ անհրաժեշտության՝ անցկացնել խորհրդակցություններ և փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում ՀՀ դիրքորոշումների մասին գրավոր տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով),

• ապահովել մասնակցություն՝ Հանձնաժողովի ներկայացուցիչներից և անդամ պետություններից կազմված բանակցային պատվիրակության կազմում բանակցությունների անցկացմանը՝ Հանձն-

նաժողովի խորհրդի կողմից հաստատվող հրահանգներին համապատասխան,

- ապահովել մասնակցություն՝ Հանձնաժողովի և անդամ պետությունների հետ համատեղ բանակցությունների անցկացման հրահանգների նախագծի մշակմանը,

- Համաձայնագրին համապատասխան փաստաթղթերի նախագծերի համաձայնեցումը կատարել փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում,

- միջազգային պայմանագիրը բոլոր անդամ պետությունների պետական լեզուներով ստորագրվելու դեպքում՝ ապահովել ներկայացված միջազգային պայմանագրի նախագծի՝ հայերեն թարգմանության լրամշակումը և դրա ուղարկումը Հանձնաժողով ոչ ուշ, քան մինչև միջազգային պայմանագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցկացման արդյունքների մասին տեղեկատվության ուղարկումը,

- Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման մասին առաջարկությունը քննարկելուց հետո՝ փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում, Հանձնաժողովին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության դիրքորոշումների մասին:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2018 թվականի մայիսի 14-ին ստորագրված «Երրորդ պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ միջազգային ինտեգրացիոն միավորումների հետ՝ Եվրասիական տնտեսական միության միջազգային պայմանագրերի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

22 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1483



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվապահի ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՍՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ,
ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» 2015 թվապահի ՄԱՅԻՍԻ
29-Ի ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ 5.7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱԶԱՅՆ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հոկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունիսի 28-ին Բրյուսելում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7-րդ հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի օգոստոսի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7-րդ հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի հունիսի 28-ին Բրյուսելում:

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրը, ելնելով Սահմանադրական

դատարանի 2016 թվականի հունիսի 3-ի ՍԴՈ-1277 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից, վավերացվել է Ազգային ժողովի 2016 թվականի հունիսի 17-ի ԱԺՈ-223-Ն որոշմամբ:

Արձանագրությունն ունի անբաժանելի մաս կազմող երեք հավելված:

Արձանագրության 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Արձանագրությունն ստորագրելիս Հայաստանի Հանրապետությունը կատարել է վերապահում, որ Հայաստանի Հանրապետության համար Արձանագրությունն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կողմից դիվանագիտական ուղիներով Եվրասիական տնտեսական միությանը և Վիետնամին Հայաստանի Հանրապետության համապատասխան ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին ծանուցելու ամսաթվից:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

- տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացնել կանոնավոր կերպով Արձանագրության սահմանափակ հասանելիություն ունեցող (կոնֆիդենցիալ) փաստաթուղթ համարվող 1-ին հավելվածով սահմանված տեխնիկական մասնագրերի համաձայն, ապահովել այդ հավելվածում պարունակվող տեղեկությունների պաշտպանությունը դրա համապատասխան կանոններին և կարգավորումներին համաձայն, ինչպես նաև ապահովել, որ այդ տեղեկությունները տրամադրվեն ոչ ուշ, քան արտահանվող ապրանքների բացթողումից 4 ժամ հետո,

- Արձանագրության շրջանակներում փոխանակվող ցանկացած տեղեկություն համարել կոնֆիդենցիալ, օգտագործել միայն մաքսային գործառնությունների նպատակով և չփոխանցել երրորդ կողմի առանց այդ տեղեկությունը տրամադրած կողմի համաձայնության,

- ընդունել տվյալների ամբողջականությանն ուղղված պահանջներ և միջոցներ, որոնք կապահովեն փոխանցվող ու փոխանակվող տեղեկությունների ամբողջականությունը,

- Արձանագրությամբ սահմանված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը կանխվելու կամ հետաձգվելու պարագայում անհապաղ ծանուցել մյուս կողմերին՝ ներկայացնելով դեպքի բոլոր մանրամասները և Հայաստանի Հանրապետության Արձանագրությամբ սահմանված պարտավորությունների կատարումը կանխող կամ հետաձգող պատճառները, և գոր-

ծաղրել բոլոր հնարավոր ջանքերը՝ նման դեպքի ազդեցությունը մեղմացնելու համար, իսկ այդպիսի դեպքը դադարելուց հետո վերսկսել Հայաստանի Հանրապետության Արձանագրությամբ սահմանված պարտավորությունների կատարումը դա գործնականում ողջամտորեն հնարավոր դառնալուն պես:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և իրականացվում են կողմերի միջև տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման նկատմամբ մաքսային գործառնությունների իրականացումը դադարեցնելու, ապրանքների բացթողումն արագացնելու և մաքսային օրենքների ու կարգավորումների խախտումները կանխելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի հունիսի 28-ին Բրյուսելում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7-րդ հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

22 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1484



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հոկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. Աբրահամյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 6-ին Մոսկվայում ստորագրված «Ֆինանսական շուկայի ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետու-

թյունների օրենսդրության ներդաշնակեցման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի սեպտեմբերի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, գործում առկա եզրակացությունները և մյուս փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. «Ֆինանսական շուկայի ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 6-ին Մոսկվայում, որի նպատակներն են Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր ֆինանսական շուկա ստեղծելը, ծառայությունների ոլորտներում (բանկային, ապահովագրության, արժեթղթերի շուկայի ծառայությունների ոլորտներում) գործունեության տեսակների իրականացման լիցենզիաների փոխադարձաբար ճանաչումը և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ֆինանսական շուկաներ ոչ խտրական հասանելիությունն ապահովելը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- ապահովել Համաձայնագրի 3-րդ հոդվածում շարադրված օրենսդրության ներդաշնակեցման միջոցների կիրառումը (հոդված 3),

- ապահովել, որ ֆինանսական շուկայի ոլորտում օրենսդրության ներդաշնակեցման միջոցների իրագործումը կատարվի «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 22-26-րդ և 30-րդ կետերով սահմանված ուղղություններով (2014 թվականի մայիսի 29-ի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի թիվ 17 հավելված) (հոդված 4, կետ 1),

- ապահովել, որ իրականացվի ֆինանսական ծառայությունների սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության մասով պահանջների ներդաշնակեցումը (հոդված 4, կետ 2),

- ապահովել, որ ֆինանսական շուկայում գործունեության իրականացման կոնկրետ պահանջների ներդաշնակեցումը իրականացվի այն պայմանով, որ պահպանվող տարբերությունները չխոչընդոտեն Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր ֆինանսական շուկայի արդյունավետ գործունեությանը (հոդված 4, կետ 3),

- ապահովել, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը ավարտվի ֆինանսական ոլորտում ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման գործընթացը՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ուղղություններին համապատասխան (հոդված 4, կետ 4),

- որպես Համաձայնագրի մասնակից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 9 ամսվա ընթացքում մշակել ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման պլանը՝ նշելով այդ գործընթացի կոնկրետ փուլերն ու ժամկետները, որը հաստատվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից (հոդված 6, կետ 1),

- ապահովել, որ Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվեն Հայաստանի Հանրապետության կողմից 2014 թվականի դեկտեմբերի 4-ին վավերացված «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով (հոդված 8):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2018 թվականի նոյեմբերի 6-ին Մոսկվայում ստորագրված «Ֆինանսական շուկայի ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

22 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1485



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 8-ՐԴ ԵՎ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 հոկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ և 18-րդ հոդվածների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի «Դատական վարույթի հրապարակայնությունը» վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում:

2. Վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը վարչական դատավարության մասնակցի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում:

3. Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու հարցը լուծվում է դռնփակ:

4. Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում:

5. Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ: Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական նիստին իրավունք ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, վարչական դատավարության մասնակիցները, նրանց ներկայացուցիչները, դատական կարգադրիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկան, փորձագետը և թարգմանիչը: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

6. Գործը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք: Դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող եզրափակիչ մասը հրապարակվում է դռնփակ նիստում:

7. Գործը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դոնփակ նիստում քննելու դեպքում տվյալ գործի հետագա քննությունն այլ դատական ատյաններում կատարվում է դոնփակ»:

Օրենսգրքի ընդունումից հետո 8-րդ հոդվածի վերնագիրը խմբագրվել է 23.03.18 ՀՕ-212-Ն ՀՀ օրենքով, իսկ հոդվածը խմբագրվել է 16.01.18 ՀՕ-70-Ն, 23.03.18 ՀՕ-212-Ն ՀՀ օրենքներով:

Օրենսգրքի «Կողմերի իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 18-րդ հոդվածը սահմանում է.

«1. Կողմերն իրավունք ունեն՝

1) ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ.

2) անելու ինքնաբացարկ հայտնելու միջնորդություններ.

3) ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը.

4) հարցեր տալու միմյանց, դատավարության մյուս մասնակիցներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին, միջնորդություններ անելու, բացատրություններ տալու դատարանին.

5) գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց դիրքորոշումը, առաջարկները, առարկություններն ու փաստարկները.

6) առարկելու դատավարության մյուս մասնակիցների միջնորդությունների, դիրքորոշման կամ փաստարկների դեմ.

7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոքարկելու դատական ակտերը.

8) օգտվելու սույն օրենսգրքով իրենց վերապահված այլ դատավարական իրավունքներից:

2. Կողմերը կրում են սույն օրենսգրքով սահմանված դատավարական պարտականություններ:

3. Կողմերը պետք է բարեխղճորեն օգտվեն իրենց դատավարական իրավունքներից և բարեխղճորեն կատարեն իրենց դատավարական պարտականությունները»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթները փոփոխության կամ լրացման չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի 2019 թվականի մայիսի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է ՀՀ վարչական դատարանի 2019 թվականի մայիսի 27-ի ՎԴ/9170/05/17 գործով «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգիրքը և օրենսդրական այլ ակտերի վերաբերելի նորմերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**։

1. Դիմողի դիրքորոշումները

Սահմանադրության 50-րդ հոդվածով, 59-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 39-րդ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 11-րդ, 16-րդ և 33-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում դիմողը նշում է, որ «... վարչական վարույթի ընթացքում օրենսդրորեն ապահովված է առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության պահպանման մեխանիզմ, ինչն ամրագրված է հետևյալով.

1. վարչական վարույթի ընթացքում մասնակիցներին չի թույլատրվում ծանոթանալ այնպիսի նյութերին, որոնք հանդիսանում են գաղտնիք պարունակող տեղեկատվություն (այդ թվում՝ առևտրային գաղտնիք պարունակող), և

2. վարչական մարմնի վրա է դրվում պարտականություն չտրամադրել այնպիսի տեղեկատվություն, որը հանդիսանում է գաղտնիք պարունակող տեղեկատվություն (այդ թվում՝ առևտրային գաղտնիք պարունակող)»:

Մյուս կողմից, ուսումնասիրության առարկա դարձնելով վարչական դատավարության ընթացակարգը սահմանող օրենսդրական կարգավորումները՝ դիմողն արձանագրում է, որ Օրենսգիրքը «... չի նախատեսում արգելք առ այն, որ վարչական գործով գաղտնիք պարունակող նյութերը ենթակա չլինեն դատավարության մասնակցին տրամադրման, չնայած այն հանգամանքին, որ նման լիազորությամբ և պարտավորությամբ օժտված են վարչական մարմինները՝ վարչական վարույթի իրականացման ընթացքում»:

Հղում կատարելով Օրենսգրքի 2-րդ հոդվածին՝ դիմողը նշում է, որ վարչական դատավարության ընթացքում դատարանը ղեկավարվում է բացառապես Վարչական դատավարության օրենսգրքով, իսկ դրանով նախատեսված դեպքերում նաև «Դատական

օրենսգիրք» սահմանադրական օրենքի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներով: Այսինքն՝ այլ օրենքի կիրառման հնարավորություն Վարչական դատավարության օրենսգրքով դատարանին տրված չէ:

Արդյունքում, դիմողի կարծիքով ստեղծվում է մի իրավիճակ, երբ ցանկացած տնտեսվարող սուբյեկտ կարող է, օրինակ, դիմել Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին մրցակցի նկատմամբ վարույթ հարուցելու դիմումով, վարույթի շրջանակներում կարող են հավաքագրվել մրցակցի առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ, որոնք վարույթի շրջանակներում հասու չեն լինի դիմումատուին, սակայն վարչական ակտի դատական կարգով վիճարկման դեպքում դիմումատուն, որպես հայցվոր կամ երրորդ անձ, կարող է հնարավորություն ստանալ ծանոթանալու վարչական վարույթի ողջ նյութերին:

Դիմողը գտնում է, որ «... նման մեխանիզմը կարող է գործածվել որպես «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի (Անբարեխիղճ մրցակցությունը չբացահայտված տեղեկատվության նկատմամբ) 4-րդ մասի «ա» կետով արգելված արդյունաբերական լրտեսության յուրօրինակ օրինականացված մեխանիզմ, և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները կարող են օգտագործվել արդար տնտեսական մրցակցության խաթարման համար»:

Վիճարկվող դրույթները դիտարկելով Սահմանադրության 51-րդ (Տեղեկություններ ստանալու իրավունքը), 60-րդ (Սեփականության իրավունքը), 61-րդ (Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը), 63-րդ (Արդար դատաքննության իրավունքը), 74-րդ (Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ) և 75-րդ (Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը) հոդվածների համատեքստում՝ դիմողը գտնում է, որ դրանք հանգեցնում են անձի հիմնական իրավունքների խախտման:

Վերոշարադրյալից ելնելով՝ դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 8-րդ և 18-րդ հոդվածների դրույթներն այնքանով, որքանով այդ նորմերով նախատեսված չէ դատավարության այլ մասնակիցների վերաբերյալ օրենքով պահպանվող գաղտնիքներին վարչական դա-

տավարության սահմաններում տեղեկանալու արգելք, հակասում են Սահմանադրության 51-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 74-րդ և 75-րդ հոդվածների համատեքստում Սահմանադրության 11-րդ, 33-րդ 34-րդ հոդվածներին և 59-րդ հոդվածի 3-րդ մասին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը փաստում է, որ «... տեղեկատվության ազատության կարգավորման առարկա հարաբերությունները հանդիսանում են վարչաիրավական, ուստի սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներին վերաբերող տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները սահմանադրաիրավական ազատության արդյունավետ ապահովման տեսանկյունից հարկ է շրջագծել առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության բովանդակային հնարավորինս հստակ սահմանագծերով»:

Պատասխանողի դիրքորոշմամբ Օրենսգրքի 8-րդ և 18-րդ հոդվածները բխում են սահմանադրաիրավական նորմերի պահանջներից, մասնավորապես՝ Սահմանադրության 11-րդ, 33-րդ, 34-րդ, 59-րդ և 63-րդ հոդվածներից, ուստի վերջիններիս կարգավորման շրջանակներն ինքնին չեն կարող չհամապատասխանել Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ դրույթներին, քանի որ բխում են այդ իրավանորմերով ամրագրված դրույթների սահմանադրական պահանջից:

Պատասխանողը նշում է, որ օրենսդիրն Օրենսգրքով հստակ ամրագրել է այն կարևոր կառուցակարգը, որ վարչական դատարանը գործի քննության ընթացքում կարող է երրորդ անձին հանել դատավարության մասնակիցների կազմից, եթե նրան ներգրավելու հիմքերը վերացել են, կամ եթե դատարանը հանգում է այն համոզման, որ ընդհանրապես բացակայում էին նրան որպես երրորդ անձ ներգրավելու հիմքերը՝ ոչ պատշաճ երրորդ անձ հանդիսանալու դեպքում, որտեղ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին վարչական դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, վերջինիս դատավարության մասնակիցների կազմից հանելու դեպքում գործի վարույթը շարունակվում է:

Պատասխանողը նշում է, որ դատական վարույթի հրապարակայնությունը, որը հանդիսանում է արդար դատական քննության հիմնական բաղադրիչն ու կարևորագույն տարրը, բացարձակ չէ և

որոշակի դեպքերում ենթակա է սահմանափակման՝ առևտրային գաղտնիք հանդիսացող օբյեկտի շրջանակներում:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորումները՝ դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի իրավաչափ սահմանափակման շրջանակներում, վարչական դատավարության մասնակիցներին վերապահելով համապատասխան իրավական գործիքակազմեր, սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ապահովում են սահմանադրական պահանջների լիարժեք իրացում:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները

Դիմողը վիճարկվող դրույթների համատեքստում բարձրացնում է, ըստ էության, վարչական դատավարության շրջանակներում դատավարության մասնակիցների վերաբերյալ օրենքով պահպանվող գաղտնիքներին տեղեկանալու արգելքի բացակայության խնդիրը, ուստի Սահմանադրական դատարանը սույն որոշմամբ անդրադարձ է կատարում Օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավակարգավորումներին: Միաժամանակ, այդ դրույթների սահմանադրականությունը Սահմանադրական դատարանը հարկ է համարում դիտարկել ինչպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության և դրա պաշտպանության հիմքով դատական վարույթի հրապարակայնության սահմանափակման վերաբերյալ սահմանադրական կարգավորումների, այնպես էլ օրենսդրական բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում:

Այդ առումով սույն գործի շրջանակներում պարզաբանման են ենթակա հետևյալ հանգամանքները.

- արդյոք մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի պաշտպանությանն ուղղված դատական վարույթի հրապարակայնության սահմանափակման հնարավորությունն ամրագրող սահմանադրաիրավական կարգավորումները կենսագործված են վարչական դատավարության օրենսդրությունում, մասնավորապես վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումներում,

- արդյոք վարչական դատավարության օրենսդրության շրջանակներում առկա է օրենսդրական բաց պայմանավորված այն հանգամանքով, որ չի նախատեսվում դատավարության այլ մասնակիցների վերաբերյալ օրենքով պահպանվող գաղտնիքներին տեղեկանալու արգելք:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Դիմողի կողմից վիճարկվող Օրենսգրքի 8-րդ հոդվածը վերաբերում է դատական վարույթի հրապարակայնությանը, որը դատավարության, այդ թվում՝ վարչական դատավարության կարևոր սկզբունքներից մեկն է: Մասնավորապես, Սահմանադրության «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, **հրապարակային** և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրվում է դատական վարույթի հրապարակայնությունը սահմանափակելու հնարավորություն, մասնավորապես՝ դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների **մասնավոր կյանքի**, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով հրապարակայնության սկզբունքի էությանը, նշել է. «... հրապարակայնության սկզբունքը թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավական ակտերի, թե՛ դատավարական օրենսդրության շրջանակներում դատավարական իրավունքների իրացման կարևորագույն և անխախտելի սկզբունք է, որը ենթադրում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի կիրառում՝ պայմանավորված կոնկրետ դատավարական առանձնահատկություններով», իսկ դրա սահմանափակման վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը հանգում է հետևյալին. «... հրապարակայնության սկզբունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրությամբ հստակ նախատեսված հանգամանքների առկայության դեպքում, իսկ սահմանափակումն օրենքով նախատեսված կարգին համապատասխան իրացվելու պայմաններում ևս չի կարող խոսք լինել հրապարակայնության սկզբունքի խախտման մասին» (ՄԴՈ-1452, 02.04.2019 թ.):

Սահմանադրական վերոնշյալ դրույթն իր մասնավորեցումն է ստացել Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: Մասնավորապես «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ «Դատարանների կազմակերպման և գործունեության սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխում, ի թիվս այլնի, նշվում է դատական վարույթի հրապարակայնության մասին: Վերոնշյալ սկզբունքը տեղ է գտել նաև Օրենսգրքում, որի շրջանակներում հստակեցվել են հրապարակայնության սահմանափակման հիմքերը: Ըստ այդմ սահմանվում է, որ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը վարչական դատավարության մասնակցի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 8-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումներն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր են՝ սահմանում Սահմանադրության 63-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի իրականացման համար, և այդ իրավունքի բաղադրատարրը կազմող գործի հրապարակային քննության առումով սահմանադրականության հետ կապված խնդիր սույն գործով չի բարձրացվում:

4.2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթները վերաբերում են վարչական դատավարության տարբեր ինստիտուտներին՝ մի դեպքում՝ հրապարակային դատաքննության բացառություններին, իսկ մյուս դեպքում՝ դատավարության մասնակիցների իրավունքների և պարտականությունների համակարգին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել հետևյալը.

նախ՝ դռնփակ դատական նիստին իրավունք ունեն ներկա գտնվել դատական նիստերի քարտուղարը, վարչական դատավարության մասնակիցները (հայցվորը, պատասխանողը, երրորդ անձինք), նրանց ներկայացուցիչները, դատական կարգադրիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկան, փորձագետը և թարգմանիչը, իսկ գործի նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններն

ստանալու, գործի նյութերից քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելու իրավունքից օգտվողներն են միայն դատավարության մասնակիցները (հայցվորը, պատասխանողը, երրորդ անձինք) և նրանց ներկայացուցիչները,

երկրորդ եթե դռնփակ նիստի մասնակիցները ստորագրություն վերցնելու միջոցով նախագուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին, ապա գործի նյութերին ծանոթանալու համար օրենքով պահպանվող գաղտնիքի վերաբերյալ Օրենսգրքում որևէ կարգավորում չկա,

երրորդ՝ եթե դռնփակ դատական նիստն անցկացվում է դատարանի որոշմամբ, ապա գործի նյութերին ծանոթանալու համար դատարանի կողմից որոշում կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն ուղղված է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրագործմանը, ինչը կարևոր նշանակություն ունի գործի արդարացի քննությունն ապահովելու համար: Այդ առումով, գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչների համար նախատեսելով գործի նյութերին ծանոթանալու իրավունք՝ օրենսդիրը նպատակ չի ունեցել հրաժարվելու Սահմանադրությամբ և օրենքներով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկության պաշտպանության հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև գործի նյութերին ծանոթանալու իրավունքը կարող է իրագործվել մինչև դռնփակ դատական նիստի կայանալը, այնուամենայնիվ, վերոհիշյալ ինստիտուտներն անհրաժեշտ է դիտարկել համակարգային փոխկապակցվածության համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դռնփակ նիստին ներկայացվող պահանջները հավասարապես պետք է վերաբերեն նաև կողմերի գործի նյութերին ծանոթանալու իրավունքին:

4.3. Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ Օրենսգիրքը, սահմանելով կողմերի իրավունքներն ու պարտականությունները, դրանցում նախատեսելով գործի նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններն ստանալու, գործի նյութերից քաղվածքներ,

լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելու իրավունքը, չի նախատեսել այնպիսի նյութերին ծանոթանալու արգելք, որոնք պարունակում են առևտրային գաղտնիք, այն դեպքում, երբ վարչական վարույթի ընթացքում օրենսդրորեն ապահովված է առևտրային գաղտնիք կազմող տեղեկության պահպանման մեխանիզմ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Սահմանադրության՝ «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների: Ըստ այդմ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի՝ «Վարչական վարույթի նյութերի մատչելիությունը» վերտառությամբ 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. վարչական վարույթի նյութերը տրամադրելիս վարչական մարմինը պարտավոր է պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ, իսկ այդպիսի գաղտնիքներ տրամադրելիս՝ պարտավոր է պահպանել համապատասխան գաղտնիքի մասին օրենքով սահմանված կարգն ու պայմանները: Նշված իրավակարգավորումների նպատակն է ապահովել վարչական վարույթի շրջանակներում առևտրային գաղտնիք կազմող տեղեկության պահպանման մեխանիզմը՝ նախատեսելով ինչպես այդպիսի գաղտնիքներ չտրամադրելու, այնպես էլ օրենքով սահմանված կարգին և պայմաններին համահունչ տրամադրելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է վարչական դատավարությանը, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական կարգավորումների համադրված

վերլուծությունը ցույց է տալիս, որ առևտրային գաղտնիքի պաշտպանության համար արդեն իսկ ստեղծված են որոշակի օրենսդրական երաշխիքներ: Մասնավորապես՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով որպես դատական վարույթի կամ դրա մի մասի դռնփակ անցկացնելու պայման, ի թիվս այլնի, նշվում է մասնավոր կյանքի պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանն իր՝ 02.07.2019 թ. ՍԴՈ-1467 որոշման 4.1. կետում արձանագրել է, «... որ թեև «առևտրային գաղտնիք» եզրույթը Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն ամրագրված չէ, սակայն այն անձանց մասնավոր կյանքի և տնտեսական գործունեության համար հիմնարար նշանակություն ունի, և դրա պաշտպանությունն իրավաչափ հիմք է հրապարակային քննության հիմնական իրավունքը սահմանափակելու համար»:

Վերոնշյալ հիմնադրույթն իր մասնավորեցումն է ստացել ինչպես Վարչական դատավարության, այնպես էլ Քաղաքացիական դատավարության օրենսգրքերի շրջանակներում: Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով որպես դատական վարույթի դռնփակության հիմք, ի թիվս այլնի, նշվում է վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ առևտրային գաղտնիքի պաշտպանությունը: Նույն կարգավորումն առկա է նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում: Բացի դրանից, առևտրային գաղտնիքի պաշտպանության իրականացման համար համապատասխան երաշխիքներ են սահմանված մի շարք հատուկ օրենքներում, մասնավորապես՝ Քաղաքացիական օրենսգրքում (օրինակ՝ 141-րդ հոդվածը), «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում (օրինակ՝ 16-րդ և 33-րդ հոդվածները) և այլ օրենքներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ անձի մասնավոր կյանքին վերաբերող տեղեկությունները ենթակա են պաշտպանության դատավարության բոլոր փուլերում (հայցադիմումն ընդունելու հարցը որոշելուց սկսած):

Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ գործնականում խնդիրներ կառաջանան առևտրային գաղտնիքի պաշտպանության առումով՝ պայմանավորված վարույթի մասնակիցների գործի նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններն ստանալու, գործի նյութերից քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ

անելու իրավունքի իրացմամբ, անհրաժեշտ է հաշվի առնել առևտրային գաղտնիքի պաշտպանությանն ուղղված վերոնշյալ երաշխիքները և համապատասխան նյութերը տրամադրել բացառապես այն անձանց, որոնք արդեն իսկ նախագուշացվել են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավակարգավորումները վերոգրյալ դիրքորոշումների համատեքստում կիրառելու արդյունքում հնարավոր կլինի ապահովել առևտրային գաղտնիքի պատշաճ և արդյունավետ պաշտպանությունը:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումները համահունչ չեն Սահմանադրության 11-րդ հոդվածին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Սահմանադրության 11-րդ հոդվածը վերաբերում է տնտեսական կարգին, որը բովանդակային առումով չի առնչվում սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական խնդրին, ուստի այդ առումով դիմողի մտահոգությունները հիմնավոր չեն:

4.4. Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված այն հարցին, որ Օրենսգիրքը չի նախատեսում արգելք առ այն, որ վարչական գործով գաղտնիք պարունակող նյութերը ենթակա չլինեն դատավարության մասնակցին տրամադրման, ապա Սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-864, ՄԴՈ-914, ՄԴՈ-922, ՄԴՈ-1020, ՄԴՈ-1143, ՄԴՈ-1255 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումն օրենսդիր իշխանության իրավասությունն է: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և Սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր

դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Չարգացնելով իր հիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Սույն գործով դիմողի բարձրացրած խնդիրը՝ կապված վարչական դատավարության կողմերի իրավունքների և պարտականությունների, մասնավորապես՝ դատավարության այլ մասնակիցների վերաբերյալ օրենքով պահպանվող գաղտնիքներին տեղեկանալու արգելք նախատեսելու հետ, վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում դիտարկելու արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործող կանոնակարգումները չեն խոչընդոտում օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկության պաշտպանությանը, իսկ այդ կարգավորումների զարգացման հարցերը գտնվում են օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ գործի նյութերում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների առկայության դեպքում այդ նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններն ստանալու, գործի նյութերից քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելու կողմերի իրավունքը ենթակա է իրականացման Օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով՝ ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացնելով օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

29 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1486



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 376.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ
ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 նոյեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Գյուլումյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների՝ Արտակ Գալստյանի (ներկայացուցիչ՝ Ս. Սարգսյան) և Վերաքննիչ քրեական դատարանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 41, 69 և 71-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արտակ Գալստյանի և Վերաքննիչ քրեական դատարանի դիմումների հիման վրա՝ Քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը» վերտառությամբ 376.1-ին հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ կետը սահմանում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

«4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները»:

Օրենսգրքի 376.1-ին հոդվածը լրացվել և փոփոխվել է 28.11.2007թ. ՀՕ-270-Ն, 26.12.2008թ. ՀՕ-237-Ն, 05.02.2009թ. ՀՕ-45-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը Արտակ Գալստյանի՝ 2019 թվականի հուլիսի 3-ին և Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի հիմքով՝ Սահմանադրական դատարանի 2019 թվականի հուլիսի 24-ի ՄԴԱՈ-85 աշխատակարգային որոշմամբ վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են դատական նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով սույն գործով դիմողների և պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողների դիրքորոշումները

1.1. Դիմող Ա. Գալստյանը գտնում է, որ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետը սպառիչ չի թվարկում բողոքարկման ենթակա՝ քրեական դատավարությունում անձի իրավունքները և ազատությունները սահմանափակող առաջին ատյանի դատարանների կողմից կայացված որոշումների ցանկը, իսկ տվյալ նորմին դատական պրակտիկայում տրվել են այնպիսի մեկնաբանություն և կիրառում,

որոնք հակասում են Սահմանադրության 3, 6, 27 և 28-րդ հոդվածներին, 29-րդ հոդվածի 5-րդ մասին, 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին:

Ա. Գալստյանի կարծիքով՝ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետի կիրառման արդյունքում խախտվում է Օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի սկզբունքը, համաձայն որի՝ վերաքննիչ դատարանն օժտված է կալանավորման որոշման օրինականության և հիմնավորվածության հարցը լուծելու լիազորությամբ և, ըստ այդմ՝ փաստացի ստացվում է, որ վերաքննիչ դատարանը ստանում է արդարադատություն իրականացնելուց հրաժարվելու առերևույթ օրինական հիմք, որն անթույլատրելի է:

1.2. Դիմող Վերաքննիչ քրեական դատարանը նշում է, որ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետի տառացի մեկնաբանությունից բխում է, որ Օրենսգրքով սահմանված չէ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու՝ միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո, այսինքն՝ դատական քննություն նշանակելու մասին որոշման կայացումից հետո, կայացրած որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն:

Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետը և դրան իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը, այնքանով, որքանով ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու, այդ թվում նաև կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման հնարավորություն սահմանված չէ՝ անձի իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը բողոքարկելու իրավունքի անհամաչափ սահմանափակում է և չի համապատասխանում Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին և 61-րդ հոդվածի 1-ին մասին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի՝ միավորված գործի վարույթը ենթակա է կարճման:

Պատասխանողը նշում է, որ միավորված գործի դիմումներով առաջադրված հարցերի վերաբերյալ արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի 2019 թվականի փետրվարի 19-ի «Հայաս-

տանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 478.2-րդ հոդվածների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» ՄԴՈ-1446 որոշումը:

Պատասխանողի վերոհիշյալ դիրքորոշման վերաբերյալ դիմող Ա. Գալստյանը ներկայացրել է առարկություն, մասնավորապես, նշելով, որ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի Սահմանադրությանը համապատասխանության հարցը ՄԴՈ-1446 որոշմամբ ընդհանրապես քննության չի առնվել, և Սահմանադրական դատարանն այդ մասով գործի վարույթը կարճել է աշխատակարգային որոշմամբ:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական հարցերի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) վիճարկվող դրույթի իրավակարգավորմամբ և դրա՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ապահովվում է արդյոք անձի՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքի, ինչպես նաև անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության և դրա բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը՝ հաշվի առնելով նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական պահանջները,

բ) վիճարկվող դրույթի իրավակարգավորումը և դրա՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը համահունչ են արդյոք Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկային:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթի իրավակարգավորման սահմանադրականությունը քննության է առնում Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 75 և 81-րդ հոդվածների համատեքստում:

Ինչ վերաբերում է պատասխանողի այն դիրքորոշմանը, որ միավորված գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ առկա է Սահմանադրական դատարանի 2019 թվականի փետրվարի 19-ի ՄԴՈ-1446 որոշումը, Սահմանադրական դատարանը փաստում է, որ ՄԴՈ-1446 որոշմամբ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի սահմանադրականությունը չի գնահատվել, և նկատի ունենալով, որ դրա վերաբերյալ դիմողի կասկածները հիմնավոր չեն եղել, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքերով, Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ գործն այդ մասով կարճվել է:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանի կողմից կալանքի՝ որպես խափանման միջոցի հետ կապված հարցերի քննությունը կատարվում է ինչպես քրեական գործով մինչդատական վարույթում, այնպես էլ գործը դատական քննության նախապատրաստելու և դատական քննության փուլերում:

Սույն գործով քննության առարկա հարցը վերաբերում է գործի դատական քննության փուլում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու (որպես խափանման միջոց ընտրված կալանքը չփոփոխելու կամ չվերացնելու) մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկմանը:

Օրենսգրքի «Վերաքննիչ բողոք բերելու իրավունքը» վերտառությամբ 376-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողն իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքարկելու Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը:

Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետով, ի թիվս այլնի, սահմանվում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանների **կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները:** Հարկ է նշել, որ օրենսդիրը հիշյալ դրույթով ուղղակիորեն չի սահմանել այնպիսի միջանկյալ դատական ակտերի վերաքննության

կարգով բողոքարկման հնարավորություն, ինչպիսիք են՝ **որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները**:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոհիշյալ իրավակարգավորումը կիրառվում է հիմնականում այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ վիճարկվող դրույթով սահմանված միջանկյալ դատական ակտերը ենթակա են անմիջական բողոքարկման: Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթով ուղղակիորեն չսահմանված միջանկյալ դատական ակտերին, ապա դրանց բողոքարկման հնարավորությունը չի բացառվում, սակայն հետաձգվում է ավելի ուշ փուլ: Այսինքն՝ դրանք կարող են բողոքարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման հետ միաժամանակ: Այդուհանդերձ, դատական պրակտիկայում արձանագրվում են նաև վիճարկվող դրույթով ուղղակիորեն չսահմանված միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման արդյունքում ներկայացված բողոքները քննության առնելու դեպքեր (Տե՛ս, օրինակ, Վերաքննիչ քրեական դատարանի 15.09.2016թ. ԵԿԴ/0001/01/15, 08.09.2016թ. ԵԿԴ/0267/01/15, 24.01.2017թ. ԵԿԴ/0032/01/16 քրեական գործերով կայացրած որոշումները):

Հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանը ևս անդրադարձել է քննության առարկա հարցին, մասնավորապես, իր 2018 թվականի մարտի 20-ի ԵԿԴ/0274/01/15 քրեական գործով կայացրած որոշմամբ: Դրանով Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ «... քրեադատավարական օրենքը չի նախատեսում ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու (ներառյալ կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու) մասին առաջին ատյանի դատարանի դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո (այլ կերպ՝ դատական քննությունն նշանակելու մասին որոշման կայացումից հետո դատական նիստում դատավարության համապատասխան մասնակիցների մասնակցությամբ քննարկումների արդյունքների հիման վրա) կայացրած որոշման՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն»:

4.2. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության «Անձնական ազատությունը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ

դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ անձնական ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշները սահմանված են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, մասնավորապես՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է,

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով ազատագրված յուրաքանչյուր անձ օժտված է դատարանում իր գործի քննության իրավունքով, որպեսզի այդ դատարանը կարողանա անհապաղ որոշում կայացնել նրա ձերբակալման օրինականության վերաբերյալ և նրան ազատելու որոշում կայացնի, եթե ձերբակալումն անօրինական է,

- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec (2006)13 հանձնարարականի 19-րդ կետի համաձայն՝ «(1) Կալանքի տակ գտնվող անձը պետք է հատուկ իրավունք ունենա արագացված ընթացակարգով բողոքարկելու իր կալանավորման օրինականությունը դատարանում: (2) Այդ իրավունքը կարող է իրականացվել կալանքի կիրառման վերաբերյալ որոշման պարբերաբար վերանայման միջոցով, որի ընթացքում կարող են քննարկվել կալանավորված անձի կողմից բարձրացված բոլոր հարցերը»:

Սահմանադրական և միջազգային վերոհիշյալ իրավակարգավորումների բովանդակությանն անդրադարձել են Սահմանադրական դատարանը և Մարդու իրավունքների եվրոպական դատա-

րանը (այսուհետ՝ ՄԻԵԴ)՝ արտահայտելով կոնկրետ իրավական դիրքորոշումներ: Այսպես.

Սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-827, ՄԴՈ-913, ՄԴՈ-1059, ՄԴՈ-1295, ՄԴՈ-1421) արտահայտած իրավական դիրքորոշումներով բացահայտելով անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, հատկանշել է այդ իրավունքի հնարավոր սահմանափակման, ինչպես նաև պաշտպանության սահմանադրաիրավական չափանիշները: Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի սեպտեմբերի 2-ի ՄԴՈ-1295 որոշմամբ ամրագրել է, որ Սահմանադրության 27-րդ հոդվածի նորմերի իրավական բովանդակությունից, մասնավորապես, անմիջականորեն բխում է.

- անձնական ազատությունից զրկելու իրավական չափանիշները սահմանվում են Սահմանադրությամբ,
- անձնական ազատությունից զրկելու կարգը սահմանվում է օրենքով,
- անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը,
- ազատությունից զրկելու իրավաչափության հարցը դատարանը որոշում է սեղմ ժամկետում:

2018 թվականի հունիսի 26-ի ՄԴՈ-1421 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակում նախատեսող քրեադատավարական ցանկացած ընթացակարգի սահմանադրականությունը կախված է ոչ միայն այդ իրավունքի սահմանափակման իրավաչափության սահմանադրաիրավական չափորոշիչների պահպանման նկատմամբ դատական վերահսկողության պատշաճ և արդյունավետ իրականացումից, այլ նաև անձի ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի երաշխավորումից: Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ անձի սահմանադրական իրավունքների պատշաճ պաշտպանության երաշխավորումը քրեական վարույթի շրջանակներում հավասարապես հասանելի պետք է լինի ինչպես գործի դատական քննության, այնպես էլ դատական քննության նախապատրաստման շրջանակներում:

Անձնական ազատության իրավունքի պաշտպանության, ինչպես նաև կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի վերաբերյալ ՄԻԵԴ-ը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում առանձնահատուկ կարևորվում է այն, որ անձի շարունակական կալանքի վերանայման համատեքստում վարույթը պետք է լինի մրցակցային և երաշխավորի կողմերի՝ դատախազի և կալանավորված անձի միջև «զենքերի հավասարությունը» (Nikolova v. Bulgaria գործով Մեծ պալատի 1999թ. մարտի 25-ի վճիռ, գանգատ թիվ 31195/96, § 58, Altinok v. Turkey գործով 2011թ. նոյեմբերի 29-ի վճիռ, գանգատ թիվ 31610/08, §§ 47, 55),

- կալանավորման իրավաչափությունը վերանայելիս առաջնային հիմնարար երաշխիք է դիտարկվում դատական արդյունավետ քննության իրավունքի ապահովումը ինչպես Կոնվենցիայի 5-րդ, այնպես էլ 13-րդ հոդվածների համատեքստում: Նշվում է նաև, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասում «օրինականություն» հասկացությունն ունի նույն իմաստը, ինչ որ նույն հոդվածի 1-ին մասում, ուստի ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի իրեն կալանքի տակ պահելու նկատմամբ վերահսկողության իրավունք ոչ միայն ներպետական իրավունքի պահանջների, այլև Կոնվենցիայի, դրա սկզբունքների և նպատակների առումով (Chahal v. The United Kingdom գործով Մեծ պալատի 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռ, գանգատ թիվ 22414/93, § 127),

- ընդգծվում է, որ իրավական պաշտպանության գոյություն ունեցող միջոցը պետք է լինի բավարար չափով որոշակի, իսկ կալանքի օրինականությունը պետք է ստուգվի՝ ողջամիտ պարբերականությամբ (Howiecki v. Poland, 2001թ. հոկտեմբերի 4-ի գործով վճիռ, գանգատ համար 27504/95, § 76, Shishkov v. Bulgaria գործով 2003թ. հունվարի 9-ի վճիռ, գանգատ թիվ 38822/97, § 88, Vachev v. Bulgaria գործով 2004թ. հուլիսի 8-ի վճիռ, գանգատ թիվ 42987/98, § 71, Shtukaturon v. Russia գործով 2008թ. մարտի 27-ի վճիռ, գանգատ թիվ 44009/05, § 121),

- նշվում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը պետություններին չի պարտադրում կալանքի օրինականության քննության համար ներդնել արդարադատության երկաստիճան մակարդակ: Այնուամենայնիվ, պետությունը, որը կիրառում է նման համակարգ, սկզբունքորեն պետք է կալանավորված անձանց շնորհի նույն երաշխիքները թե՛ առաջին աստիճանի դատարանի, թե՛ վերաքննիչ դատարանի մակարդակում: Ընդգծվում է նաև, որ երկաստիճան համակարգի դեպքում որոշելու համար, թե արդյոք կալանքի օրի-

նականության վերաբերյալ որոշումը կայացվել է սեղմ ժամկետում, թե՛ ոչ, գնահատվում է ընդհանուր քննության տևողությունը (Toth c. Autriche գործով 1991թ. դեկտեմբերի 12-ի վճիռ, գանգատ թիվ 11894/85, § 84, Navarra v. France գործով 1993թ. նոյեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 13190/87, § 28, Kucera v. Slovakia գործով 2007թ. հուլիսի 17-ի վճիռ, գանգատ թիվ 48666/99, § 107):

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների համադրման արդյունքում Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ **անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ են իրավական այնպիսի երաշխիքներ, որոնք, մասնավորապես, կապահովեն կալանքի իրավաչափության ստուգման ողջամիտ պարբերականությունը, կողմերի՝ իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար հնարավորությունները և կլինեն արդյունավետ՝ չխախտելով անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի էությունը:**

4.3. Քրեադատավարական օրենսդրության դրույթների համալիր վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը, նախ արձանագրում է, որ Օրենսգիրքը չի սահմանում դատական քննության հստակ և առավելագույն ժամկետներ, ինչով չի բացառվում պրակտիկայում դրա ընդհուպ մի քանի տարի տևելը:

Բացի դրանից, դատական քննության փուլում կալանքը որպես խափանման միջոց անձի նկատմամբ ընտրվում է անորոշ ժամկետով: Օրենսդրորեն, ի տարբերություն մինչդատական վարույթի, դատարանում գործի քննության ընթացքում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ չի սահմանվում (Օրենսգրքի 138-րդ հոդվածի 6-րդ մաս): Որպես դրա հետևանք՝ օրենսդրորեն սահմանված չէ նաև առաջին ատյանի դատարանի կողմից որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետի երկարացման հնարավորություն:

Ինչ վերաբերում է կալանքի իրավաչափության ստուգման ողջամիտ պարբերականությանը, ապա գործող իրավակարգավորումներով այն առաջին ատյանի դատարանի կողմից իրականացվում է միայն մինչդատական վարույթում: Դատական քննության փուլի ողջ ընթացքում արդեն ընտրված խափանման միջոց կալանքի իրավաչափության ստուգման միակ նախադրյալ կարող է հանդիսանալ

այն փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ կողմի միջնորդությունը: Նման միջնորդության բացակայության դեպքում դատարանի վրա օրենսդրորեն դրված չէ կալանքի իրավաչափությունը ստուգելու որևէ պարտականություն: Դատական քննության փուլում կալանքի իրավաչափության ստուգումը ձևավորված իրավակիրառական պրակտիկայում վերադաս դատական ատյանների քննարկման առարկա է դառնում միայն առաջին ատյանի դատարանում գործի վարույթի ավարտից հետո, այլ ոչ թե դրա ընթացքում:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ նման վիճակը համահունչ չէ անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացումն ապահովելու սահմանադրական և միջազգային չափանիշներին:

Սույն գործով վիճարկվող դրույթից հետևում է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակման դեպքում պաշտպանության կողմը չունի դատարանի՝ որպես խափանման միջոց ընտրված կալանքը չփոփոխելու կամ չվերացնելու որոշման անմիջական բողոքարկման հնարավորություն, այն պարագայում, երբ մեղադրանքի կողմն ունի դատարանի՝ որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու որոշման անմիջական բողոքարկման հնարավորություն:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական քննությունը իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովման առումով արդյունավետ է, եթե հիմնված է մրցակցության սկզբունքի վրա, այսինքն՝ ի թիվս այլնի, քրեական դատավարության կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար հնարավորություններով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանության կողմի համար վերը նշված հնարավորության բացակայության դեպքում մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումը չի ապահովվում, հետևաբար՝ **կալանքի իրավաչափության վիճարկման հարցում վերադաս դատական ատյաններում պաշտպանության կողմը պետք է ունենա նույն իրավունքները, հնարավորությունները, ինչ առաջին ատյանի դատարանում:**

4.4. Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև քննարկել Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված «սեղմ ժամկետ» եզրույթի համատեքստում:

Անձնական ազատությունից զրկելու իրավաչափության հարցի հետ կապված որոշումները դատարանի կողմից սեղմ ժամկետում կայացնելու սահմանադրական պահանջի նպատակն է ապահովել անձնական ազատությունից զրկված անձի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքի արդյունավետ իրացումը: Սեղմ ժամկետում որոշում կայացնելու սահմանադրական պահանջը վերաբերում է ինչպես առաջին ատյանի դատարաններին, այնպես էլ վերադաս դատական ատյաններին:

Այս առումով հատկանշական են ՄԻԵԴ-ի արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումները ևս: ՄԻԵԴ-ը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը թույլ է տալիս կալանավորված ցանկացած անձի դիմել իրավասու դատարան՝ «անհապաղ» որոշում կայացնելու համար այն հարցի վերաբերյալ, թե արդյոք կալանքը նախատեսող սկզբնական որոշումից հետո ի հայտ եկած նոր ապացույցների հիման վրա իր կալանքը դեռ «օրինական» է, թե՛ ոչ (Abdulkhanov c. Russie գործով 2012թ. հոկտեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 14743/11, § 213, Azimov c. Russie գործով 2013թ. ապրիլի 18-ի վճիռ, գանգատ թիվ 67474/11, § 152), ինչպես նաև արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ առկա է կալանքի տակ գտնվելու օրինականության հարցի **անհապաղ** լուծման հատուկ անհրաժեշտություն դատարանի կողմից գործի երկարատև քննության դեպքում, քանի որ անձը պետք է ունենա հնարավորություն ողջ ծավալով օգտվել անմեղության կանխավարկածից (Moiseyev v. Russia գործով 2008թ. հոկտեմբերի 9-ի վճիռ, գանգատ թիվ 62936/00, § 160-163): Հարկ է ընդգծել նաև, որ հիշյալ գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, այն պատճառով, որ **վերադաս դատական ատյանն անհապաղ չի քննել անձի՝ իրեն կալանքից ազատելու միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշման դեմ բերված բողոքը:**

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ **պաշտպանության կողմի՝ որպես խափանման միջոց ընտրված կալանքի փոփոխման կամ վերացման միջնորդությունների մերժման մասին որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությունը բխում է նաև Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված «սեղմ ժամկետի» պահանջից, որով ապահովվում է նաև հիշյալ մասով սահմանված հիմնական իրավունքի արդյունավետ իրացումը:**

4.5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատել նաև դատական պաշտպանության իրավունքի և դրա բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գոյություն ունեն գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման առանձնահատկություններ: Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ, վերլուծելով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանն առնչվող իրավադրույթները, արձանագրել է. « օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը »:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ երբ գործն ըստ էության չլուծող դատական ակտով սահմանափակվում է անձնական ազատության հիմնական իրավունքը, ապա այդ իրավունքի պաշտպանությունն արդյունավետ չի իրացվում հետաձգված բողոքարկման միջոցով, քանի որ անձը դատական քննության ողջ ընթացքում շարունակում է մնալ կալանքի տակ անորոշ ժամկետով՝ չունենալով այդ ընթացքում կալանքի իրավաչափությունը բողոքարկելու հնարավորություն:

Այդ առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, դրա արդյունավետության երաշխավորման առանձնահատուկ ինստիտուտ է վերադաս դատական ատյանների կողմից դատական ակտի վերանայումը: Քրեադատավարական օրենսդրության ընդհանուր տրամաբանությունից և դատական պաշտպանության իրավունքի ու դրա բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման ապահովման նկատառումներից ելնելով՝ պաշտպանության կողմի համար պետք է երաշխավորվի որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնելու կամ փոփոխելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների անմիջական բողոքարկումը վերաքննության կարգով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների ներքին անկախության վրա չի կարող ազդել մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն ընդունված գործն ըստ էության չլուծող այն միջանկյալ դատական ակտերի վերանայումը, որոնք ուղղակիորեն կապված չեն վերջնական դատական ակտի բովանդակության հետ, քանի որ վերջինս, ի թիվս այլնի, ներառում է եզրահանգումներ գործի փաստական հանգամանքների, ապացույցների գնահատման, մեղսագրվող արարքի որակման, պատժի նշանակման վերաբերյալ: Որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները չեն կանխորոշում առաջին ատյանի դատարանի եզրահանգումները քրեական գործով լուծման ենթակա հիմնական հարցերի՝ ամբաստանյալի մեղավորության և նրա պատժի վերաբերյալ: Հետևաբար՝ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետով մինչև վերջնական դատական ակտ կայացնելը որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների իրավաչափությունը ստուգելու հնարավորություն չնախատեսելը, հաշվի առնելով հատկապես կալանքի բնույթը որպես անձի անձնական ազատությանն ամենախնտենսիվ միջամտության եղանակ, չի կարող պայմանավորված լինել արդարադատության արդյունավետության շահով:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ ընտրված խափանման միջոց կալանքը չփոփոխելու որոշման անմիջական բողոքարկման հնարավորությունը պարունակում է վերադաս դատարանի բնականոն գործունեությունը խաթարելու վտանգ, մասնավորապես, այդպիսի միջնորդություններ ներկայացնելու քանակի տեսանկյունից որևէ արգելքի բացակայության առումով, պետք է նշել, որ օրենսդիրը սահմանել է պահանջ, համաձայն որի՝ քրեական դատավարության նույն փուլում կամ քրեական վարույթն իրականացնող նույն մարմնին միջնորդության և պահանջի կրկին ներկայացում հնարավոր է, եթե դրանք հիմնավորելու համար բերվում են նոր փաստարկներ, կամ քրեական դատավարության ընթացքում հաստատվել է դրանց բավարարման անհրաժեշտությունը (Օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մաս):

Սահմանադրական դատարանը գտնում է՝ **որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների անմիջական բողոքար-**

կման սահմանափակումը՝ պայմանավորված այդպիսի բողոքների քանակով, չի կարող լինել ի հաշիվ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման ապահովման:

4.6. Անդրադառնալով վիճարկվող դրույթի իրավակարգավորման շրջանակներում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման իրավունքի իրացման օրենսդրական ապահովման (օրենսդրական բացի) խնդրին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր մի շարք որոշումներով անդրադարձել է օրենսդրական բացի հասկացության բովանդակությանը (Տե՛ս, օրինակ, ՄԴՈ-864, ՄԴՈ-914, ՄԴՈ-922, ՄԴՈ-1020, ՄԴՈ-1056, ՄԴՈ-1143, ՄԴՈ-1476): Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՄԴՈ-1476 որոշմամբ ամրագրել է, որ «... այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթում առկա է օրենսդրական բաց բացակայում է որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորությունը: Ինչպես վերը նշվել է՝ օրենսդրական հիշյալ բացը հանգեցրել է հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորման:

Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ սույն գործով վիճարկվող դրույթն այն մասով, որ չի նախատեսում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, համահունչ չէ Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հի-

ման վրա գործող մարմինների պրակտիկայի շրջանակներում ձևավորված անձնական ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու չափանիշներին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման միջոցով անձնական ազատության իրավունքի պաշտպանության, ինչպես նաև իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորության արդյունավետ իրացումը պետք է ապահովվի անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի համապատասխան օրենսդրական երաշխավորմամբ և հստակ ամրագրմամբ, այդ թվում՝ կալանքի իրավաչափության ստուգման ողջամիտ պարբերականության, կողմերի իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար հնարավորություններ նախատեսելով, ինչպես նաև որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու և քննելու համար համալիր կարգավորումներ նախատեսելով, որոնք թույլ կտան արդյունավետ կերպով ապահովել մասնավոր և հանրային շահերի հավասարակշռված պաշտպանությունը: Նշվածը բխում է Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայից: Հիշյալ օրենսդրական բացի հաղթահարումը Ազգային ժողովի լիազորությունների տիրույթում է:

Ելնելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության սահմանադրական պահանջից, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ գործի դատական քննության փուլում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները ենթակա են վերաքննության կարգով անմիջական բողոքարկման՝ առաջին ատյանի դատարանների կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումների բողոքարկման համար Օրենսգրքով սահմանված կարգով առաջնորդվելով անձնական ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրացման ապահովման անհրաժեշտությամբ:

4(96)2019

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64, 69 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. Քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետն այն մասով, որ չի նախատեսում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 81-րդ հոդվածներին հակասող:

2. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները և վիճարկվող դրույթի՝ դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը, փաստելով սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի փոխկապվածությունը Քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումներին, ինչպես նաև նկատի ունենալով սահմանադրական օրենքի պահանջը՝ իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

6 նոյեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1487



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք

**ԱՐՏԱԿ ԳԱԼՍՑՅԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 376.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1487 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ ունեմ առարկություններ:

1. Որոշման պատճառաբանական մասում անդրադառնալով վիճարկվող դրույթի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետ) իրավակարգավորմամբ և դրա իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ անձի՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքի, Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության և դրա բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական պահանջների երաշխավորման խնդիրներին՝ Սահմանադրական դատարանը հանգել է այն հետևությանը, համաձայն որի՝ « ... օրենսդիրը հիշյալ դրույթով ուղղակիորեն չի սահմանել այնպիսի միջանկյալ դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման

հնարավորություն, ինչպիսիք են՝ **որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները**»: Միաժամանակ, գնահատելով վիճարկվող նորմի կիրառման դատական պրակտիկան՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ « ... վերոհիշյալ իրավակարգավորումը կիրառվում է հիմնականում այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ վիճարկվող դրույթով սահմանված միջանկյալ դատական ակտերը ենթակա են անմիջական բողոքարկման: Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթով ուղղակիորեն չսահմանված միջանկյալ դատական ակտերին, ապա դրանց բողոքարկման հնարավորությունը չի բացառվում, սակայն հետաձգվում է ավելի ուշ փուլ: Այսինքն՝ դրանք կարող են բողոքարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման հետ միաժամանակ: Այդուհանդերձ, **դատական պրակտիկայում արձանագրվում են նաև վիճարկվող դրույթով ուղղակիորեն չսահմանված միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման արդյունքում ներկայացված բողոքները քննության առնելու դեպքեր**», այդպիսով նման հակասական պրակտիկայի ձևավորումն ըստ էության ենթադրաբար պայմանավորելով այն հանգամանքով, որ վիճարկվող իրավակարգավորմամբ պաշտպանության կողմը « ... չունի դատարանի՝ որպես խափանման միջոց ընտրված կալանքը չփոփոխելու կամ չվերացնելու որոշման անմիջական բողոքարկման հնարավորություն, այն պարագայում, երբ մեղադրանքի կողմն ունի դատարանի՝ որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու որոշման անմիջական բողոքարկման հնարավորություն»:

Այնուհանդերձ, Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է. « ... որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների անմիջական բողոքարկման սահմանափակումը՝ **պայմանավորված այդպիսի բողոքների քանակով**, չի կարող լինել ի հաշիվ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման ապահովման», դրանով իսկ, ըստ էության հաստատագրելով, որ վիճարկվող նորմի կիրառման բնագավառում առկա է **հայեցողական մոտեցում**, որի արդյունքը որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունների քանակով պայմանավորված՝ անձանց բողոքարկման

իրավունքի սահմանափակումն է: Այսինքն, ձևավորվել է իրավա-
կիրառ այնպիսի պրակտիկա, որով ըստ էության խախտվել է Սահ-
մանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության
սկզբունքը:

Գտնում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վի-
ճարկվող 376.1-ին հոդվածի 4-րդ կետի սահմանադրականությունը
պետք է գնահատվեր նույն օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի
համատեքստում: Վերջինիս համաձայն՝ կասկածյալը, մեղադրյալը,
նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես
նաև դիմողն **իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքար-
կելու սույն օրենսգրքի 376.1-ին հոդվածի 3-6-րդ կետերով նախա-
տեսված դատական ակտերը (այդ թվում՝ վիճարկվող 376.1-ին
հոդվածի 4-րդ կետով)**: Հետևաբար նաև՝ ակնհայտ է, որ վիճարկվող
նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտե-
լիս հիմնավոր չէ եզրահանգել, թե « ... վիճարկվող դրույթում առկա
է օրենսդրական բաց՝ բացակայում է որպես խափանման միջոց
ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդություն-
ները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով
անմիջական բողոքարկման հնարավորությունը», ինչն էլ, ըստ
ՄԴՈ-1487 որոշման « ... հանգեցրել է հակասական իրավակիրա-
ռական պրակտիկայի ձևավորման»:

Գտնում եմ, որ վիճարկվող իրավակարգավորման սահմանա-
դրականության հարցի քննության շրջանակներում արտահայտված
իրավական դիրքորոշումները պետք է հանգեին ոչ թե տվյալ նորմի
տառացի ձևակերպմանը, այլ վիճարկվող նորմի և վերջինիս հետ
համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատա-
վարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի սահմանա-
դրաիրավական այնպիսի բովանդակությանը, համաձայն որի՝
պաշտպանական կողմի անօտարելի իրավունքն է վերաքննության
կարգով բողոքարկել որպես խափանման միջոց ընտրված կալանքը
փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին
առաջին ատյանի դատարանի որոշումները:

2. Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում
կարևորել է դատական բողոքարկման հնարավորությունը որպես
դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրատարր:
Գտնում եմ, որ օրենքի որոշակիության (կամ՝ խիստ որոշակիու-
թյան) շրջանակներում էլ անհնարին է բոլոր հարցերի կարգավո-

րումը նախատեսել բացառապես օրենքով: Հետևաբար, **կարևորվում է հատկապես դատարանի կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:**

Սահմանադրական դատարանն իր՝ 03.05.2016 թ. ՍԴՈ-1270 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմամբ արձանագրել է հենց այդ մոտեցումը, համաձայն որի՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը **չեն կարող բացարձականացվել** նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»:

Նման իրավական դիրքորոշումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայից, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «... թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է»:

Ամփոփելով գտնում եմ, որ վիճարկվող նորմի սահմանադրականությունը պետք է գնահատվեր նաև ելնելով ոչ միայն դրա տառացի, այլև օրենսգրքի տվյալ գլխի (բաժնի) կարգավորման համատեքստից, ինչը կողմնորոշիչ նշանակություն կունենար իրավակիրառական միասնական պրակտիկա ձևավորելու հարցում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ

Հ. ՆԱԶԱՐՅԱՆ

15 նոյեմբերի 2019թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐԱՅԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 142-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ
2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 155-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 նոյեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Ա. Մելքումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ.Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արայիկ Մելքումյանի դիմումի հիման վրա «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի

6-րդ մասի 2-րդ կետի և 155-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ էական կարգապահական խախտում է դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

Գործի քննության առիթը Արայիկ Մելքումյանի՝ 2019 թվականի մայիսի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, վկայակոչելով Սահմանադրության 79-րդ հոդվածը, 81-րդ հոդվածի 1-ին մասը, 164-րդ հոդվածի 5-րդ մասը, 164-րդ հոդվածը, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածը, հայտնում է, որ Սահմանադրությունը, ի թիվս այլ հիմքերի, նախատեսել է դատավորի լիազորությունների դադարեցման հետևյալ երկու առանձին դեպքերը՝ անհամատեղելիության պահանջները խախտելը և էական կարգապահական խախտում կատարելը: Օրենսդիրը որպես էական կարգապահական խախտման տեսակ նշել է «պաշտոնի հետ անհամատեղելի», այլ ոչ թե «կարգավիճակի հետ անհամատեղելի» եզրույթը:

Դիմողի կարծիքով՝ «դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի» եզրույթի ներքո պետք է հասկանալ վարքագծային անհամատեղելիություն, վարքագծի նորմերի այնպիսի խախտում կատա-

րելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ: Այնինչ, սույն պարագայում, Բարձրագույն դատական խորհուրդը դատավորի կողմից թույլ տրված սխալը նույնականացրել է դատավորի պաշտոնի հետ անհամատեղելիության հետ և սահմանել լիազորության դադարեցման առանձին հիմք: Դիմողը նշում է նաև, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից մինևույն արարքի նկատմամբ դատավորներ Արայիկ Մելքումյանի և Ռուբեն Ափինյանի նկատմամբ հարուցված կարգապահական գործերով տրվել են իրարամերժ մեկնաբանություններ:

Վկայակոչելով Սահմանադրության 61, 79 և 81-րդ հոդվածները, Օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6 և 13-րդ հոդվածները՝ դիմողը հայտնում է, որ որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի կարևոր մաս է կազմում դատական ակտերը բողոքարկելու իրավունքը: Հաշվի առնելով այն, որ տվյալ դեպքում Օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը Բարձրագույն դատական խորհրդի որոշման բողոքարկման հնարավորություն չի ընձեռում, դիմողը գտնում է, որ նշված հոդվածը հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 162, 163, 164-րդ հոդվածները, «ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 67, 69 և 70-րդ հոդվածները, նշում է, որ դատավորի վարքագծի կանոնների նպատակն է դրանք պահպանելու միջոցով նպաստել դատարանի անկախության ու անաչառության ապահովմանը, ինչպես նաև դատարանի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը:

Պատասխանողը հայտնում է, որ «ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը Սահմանադրության պահանջներին հակասող համարելու առնչությամբ կիսում է Բարձրագույն դատական խորհրդի՝ 2019 թվականի փետրվարի 14-ի ԲԴԽ-8-Ո-Կ-04 որոշմամբ արձանագրված դիրքորոշումը:

Անդրադառնալով Օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասի սահմանադրականության հարցին՝ պատասխանողը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկումը դատարաններում կնվազեցնի դատական իշխանության համակար-

գում նրա դերն ու նշանակությունը, ավելին՝ անտրամաբանական կլինի այդ հիմնարկի որպես դատարանների և դատավորների անկախության երաշխավոր հանդիսացող կոլեգիալ մարմնի գոյությունը:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը և 155-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում են Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյոք Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը սահմանափակում է անձի՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով սահմանված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքը և արդյոք սահմանափակելու դեպքում այն համապատասխանում է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման որոշակիության սկզբունքին,

2. արդյոք դատավորին¹ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ նաև ԲԴԽ) որոշումների վերջնական և անբողոքարկելի լինելը (Օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մաս) խախտում է անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատում է Սահմանադրության 49-րդ հոդվածի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 79-րդ հոդվածի տեսանկյունից՝ փոխկապակցված 78-րդ հոդվածի հետ, և հաշվի առնելով Սահմանադրության 164-րդ հոդվածի 5 և 9-րդ մասերը, 166-րդ հոդվածի 8-րդ մասը և 175-րդ հոդվածը:

¹ Սույն գործի շրջանակներում «դատավոր» եզրույթը վերաբերում է ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատավորներին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 49-րդ հոդվածի առաջին նախադասության համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Ընդ որում, այս հիմնական իրավունքը՝ իր սահմանադրական ձևակերպման շրջանակներում, որևէ սահմանափակման ենթակա չէ, սակայն այն կանոնակարգող մանրամասները պետք է սահմանվեն օրենքով (Սահմանադրության 49-րդ հոդվածի երկրորդ նախադասություն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածի ձևակերպումներից հետևում է, որ հանրային ծառայության անցնելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորված է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, այս իրավունքի իրականացման համար օրենսդիրը պարտավոր է ապահովել ընդհանուր հիմքեր՝ բացառելով որևէ խտրականություն:

Մյուս կողմից՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի իրականացման կառուցակարգերը կարող են էապես տարբերվել միմյանցից՝ կախված հանրային պաշտոնի առանձնահատկություններից և հանրային ծառայության տեսակից:

Բացի դրանից, ընդհանուր հիմունքներով *հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը*, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք:

Դատավորի պաշտոնն զբաղեցնող անձանց համար՝ այնքանով, որքանով որ դա վերաբերում է *դատավորի՝ որպես հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի կրողին*, առկա է լրացուցիչ իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող *անփոփոխելիության սահմանադրական երաշխիք*, որի ապահովման մանրամասները պետք է սահմանվեն բացառապես սահմանադրական օրենքով՝ Դատական օրենսգրքով (Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մաս՝ փոխկապակցված Սահմանադրության 164-րդ հոդվածի 11-րդ մասի հետ):

Դատավորի պաշտոնավարման հաջորդայնության առանցքային երաշխիքները սահմանված են սահմանադրական մակարդակով. դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերը սպառիչ սահմանվել են Սահմանադրությամբ, Սահմանադրությամբ սահմանվել են նաև դատավորի լիազորությունների դադարեցման հարցով իրավասու մարմինները (Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մաս): Բացի դրանից, Սահմանադրության ուժով *դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը պետք է սահմանվեն ոչ թե սովորական, այլ բացառապես սահմանադրական օրենքով*, տվյալ դեպքում Դատական օրենսգրքով (Սահմանադրության 164-րդ հոդվածի 5-րդ մաս):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ սահմանված հիշյալ կարգավորումների ընդհանուր բովանդակությունը հանգում է հետևյալին.

1) Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, ընդհանուր հիմունքներով անցնելով հանրային ծառայության, ունի նաև *պաշտոնավարման և կամայական հիմքերով պաշտոնից չազատվելու իրավունք*,

2) *դատավորի պաշտոնը զբաղեցնող քաղաքացին*, ի լրումն պաշտոնավարման ընդհանուր իրավունքի, *ձեռք է բերում հատուկ երաշխիք՝ պաշտոնավարման հաջորդայնությունը երաշխավորող անփոփոխելիության տեսքով*,

3) *դատավորի պաշտոնից քաղաքացին կարող է հեռանալ կամ հեռացվել բացառապես Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով*, Սահմանադրությամբ կանխորոշված կարգով՝ սահմանադրական օրենքով ամրագրված հատուկ ընթացակարգի գործադրմամբ,

4) *դատավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման՝ Սահմանադրությամբ ամրագրված այն հիմքերի մեկնաբանության ժամանակ*, որոնք ենթակա են կոնկրետացման սահմանադրական օրենքում, օրենսդիրը պետք է դրսևորի գույակաձեռքություն և օրենսդրական կարգավորումների միջոցով չնենգափոխի Սահմանադրության համակարգային տրամաբանությունը, այն է՝ անհարկի չընդլայնի այդ հիմքերի կիրառման օրենսդրական հնարավորությունը, թույլ չտա դրանց կամայական մեկնաբանություն, երաշխա-

վորի դրանց կիրառման ժամանակ արդարության բոլոր պահանջների պահպանումը, այդ թվում՝ պատշաճ ընթացակարգային երաշխիքներ դատավորի լիազորությունները դադարեցնելու ժամանակ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ բոլոր դեպքերում, երբ դադարեցվում են դատավորի լիազորությունները, դա վերաբերում է ոչ միայն դատավորի կարգավիճակին, այլ նաև նրա որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին. նա գրկվում է հետագա պաշտոնավարման իր իրավունքից, ուստի նրա այդ իրավունքը սահմանափակվում է:

4.2. Դատավորի լիազորությունները դադարեցնելու, այսինքն՝ դրանք Սահմանադրության մեջ հատուկ նշված պետական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ հարկադրաբար ընդհատելու հիմքերից մեկն է նրա կողմից էական կարգապահական խախտում կատարելը (Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մաս): Համաձայն Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի՝ էական կարգապահական խախտում է երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը կամ *դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:*

Համաձայն Օրենսգրքի համակարգային տրամաբանության՝ դատավորի լիազորությունների դադարեցումը կարգապահական վարույթի արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նշանակվող տույժերից մեկն է, ուստի՝ էական կարգապահական խախտումը ոչ էական խախտումից տարբերակելը և համապատասխան տույժ նշանակելն իրականացվում են միևնույն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում:

Օրենսդիրը որպես էական կարգապահական խախտում է որակել, մի դեպքում՝ ոչ էական կարգապահական խախտումների համար կոնկրետ տույժերի առկայությամբ ցանկացած այլ կարգապահական խախտում կատարելը, այսինքն՝ կարգապահական խախտումների որոշակի, առավելապես քանակական համակցությունը, մյուս դեպքում՝ կարգապահական մեկ կոնկրետ խախտման որակը, այսինքն՝ «դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ դրույթը, որը պարունակում է անորոշ իրավական հասկացություններ, ենթադրում է, որ բացառապես իրավակիրառ մարմինը՝ Բարձրագույն դատական խորհուրդը, պետք է որոշի այն հարցը, թե որն է դատավորի կողմից կատարված այն արարքը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ: Դա նշանակում է, նախ՝ պետք է մեկնաբանվի, թե դատավորի կողմից «արարք կատարելը» ներառում է արդյոք նաև անգործությունը, բացի դրանից, պետք է բացահայտվի, թե որն է դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի արարքը:

4.3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրականությանը վերաբերող հարցը նման հիմքով դատավորի պաշտոնավարմանը միջամտության, այն է՝ այս հիմքով նրա հիմնական իրավունքի սահմանափակման համապատասխանությունն է Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության պահանջին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր նախորդ որոշումներում արտահայտած վերաբերելի իրավական դիրքորոշումներին:

Ըստ այդմ՝ մասնավորապես.

1) «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630),

2) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը» (ՄԴՈ-753),

3) «... սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների և վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջև էական տարբերությունների բացակայության պայմաններում անձը զրկվում է իր վարքագծի իրավական հետևանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության և որոշակիության սկզբունքներից» (ՄԴՈ-851),

4) «Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը» (ՄԴՈ-1148),

5) «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՄԴՈ-1270),

6) «Մի շարք այլ որոշումների (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) համատեքստում, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, Սահմանադրական դատարանը գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում» (ՄԴՈ-1439),

7) Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք, մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՄԴՈ-1357):

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՄԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՈ-1176, ՄԴՈ-1449),

8) « Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև

կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական ատյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 03.05.2016թ. ՍԴՈ-1270 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»: Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «...որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է» (ՍԴՈ-1452, ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի),

9) «Սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 9-ի ՍԴՈ-1213 որոշմամբ հայտնել է, որ «...իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարա-

բերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1475):

Վերահաստատելով և զարգացնելով իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

1) *իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է*, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

2) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ *կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների* միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,

3) որոշակիության սկզբունքն իր արտացոլումն է ստացել ոչ միայն Սահմանադրության 79-րդ հոդվածում՝ որպես հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակող օրենքներին ներկայացվող բովանդակային պահանջ, այլև՝ որպես օրինականության սկզբունքի հիմնարար բաղադրիչ, ըստ որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելուն լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին (Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն),

4) հանրային իշխանության կողմից որոշակիության սկզբունքի խախտումն ուղղակիորեն ազդում է օրենքի գերակայության սկզբունքի վրա և էականորեն նվազեցնում է իրավական պետության կայացածության աստիճանը,

5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները**, որպեսզի երկխոսություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարիությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական

կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը,

7) միջամտությունն անփոփոխելիության երաշխիքներ ունեցող հանրային պաշտոնատար անձանց հետագա պաշտոնավարման իրավունքին պետք է առավել հստակ կանոնակարգված լինի. դրա բոլոր հիմքերը, ընթացակարգերը, իրավասու հանրային իշխանության մարմինները և նրանց լիազորությունները պետք է սահմանված լինեն օրենքով, իսկ դատավորների դեպքում՝ սահմանադրական օրենքով:

4.4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով «երդման խախտում» տերմինին, նշել է, որ դատավորի երդման տեքստը լայն հնարավորություն է ընձեռում եզրույթի մեկնաբանության համար՝ կարգապահական մարմնին ընձեռելով հայեցողության լայն շրջանակ:

Ընդունելով, որ որոշ ոլորտներում բարձր ճշգրտությամբ օրենքներ ընդունելը կարող է լինել խնդրահարույց, և որ նույնիսկ անհրաժեշտ է որոշակի ճկունություն, այդուհանդերձ, ՄԻԵԴ-ը նշել է, որ նշված դեպքում **առկա չէ որևէ հղում, որ դիմումատուի գործը քննելիս առկա է եղել «երդման խախտում» հասկացության հետևողական և սահմանափակող մեկնաբանության որևէ ուղեցույց կամ ձևավորված պրակտիկա**, ներքին օրենսդրությունը չի սահմանել պատժամիջոցների համապատասխան սանդղակ կարգապահական իրավախախտումների համար և չի մշակել կանոններ, որոնք ապահովում են դրանց կիրառումը համաչափության սկզբունքի համաձայն՝ արձանագրելով, որ կարգապահական իրավախախտման համար առկա էին միայն երեք պատժամիջոցներ՝ նկատողություն, որակավորման դասի իջեցում և աշխատանքից ազատում, որոնք գրեթե հնարավորություն չեն թողել դատավորին համաչափ հիմքերով կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, որի արդյունքում էլ **իշխանություններին տրվել է սահմանափակ հնարավորություններ ապահովելու հավասարակշռություն՝ հասարակության և մասնավոր շահերի բախման դեպքում յուրաքանչյուր առանձին գործի շրջանակներում:**

Արդյունքում դատարանը եկել է այն եզրահանգման, որ «երդման խախտում» արարքի հետևողական և սահմանափակող մեկնաբանությունն սահմանող որևէ ուղեցույցի և պրակտիկայի և համապատասխան իրավական երաշխիքների բացակայությունը հանգեցրել է նրան, որ ներքին օրենսդրության համապատասխան դրույթները չեն նախատեսել հնարավոր արարքի հետևանքները, որից էլ կարելի է ենթադրել, որ որևէ դատավորի կողմից իր կարիերայի ընթացքում ցանկացած պահի կատարված թերացումը կարող է կարգապահական մարմնի կողմից մեկնաբանվել որպես բավարար փաստական հիմք «երդման խախտման» համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրան պաշտոնից հեռացնելու համար: **(OLEKSANDR VOLKOV v. UKRAINE, 2013 թվականի հունվարի 9-ի վճիռ):**

Իր մեկ այլ որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «կանխատեսելիություն» հասկացության շրջանակը զգալի չափով կախված է տվյալ գործիքակազմի բովանդակությունից, այն ոլորտից, սուբյեկտներից, որոնց համար այն նախատեսված և հասցեագրված է **(Gorzelik and Others v. Poland, 2004 թվականի փետրվարի 17-ի վճիռ):**

«Ժողովրդավարություն` իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկյան հանձնաժողով) իր մի շարք կարծիքներում անդրադարձել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին:

Այսպես՝ Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ այն օրենսդրությունը, որը կարգավորում է **դատավորի կարգապահական պատասխանատվության և կարգապահական որոշում կայացնող մարմինների հետ կապված իրավահարաբերությունները, պետք է ձևակերպվի հստակ:** Երկրները հաճախ դժվարությունների են հանդիպում, երբ **կարգապահական գործողությունների հիմքերը բավարար չափով մանրամասնված չեն:** Հստակ սահմանված կանոնների բացակայությունը վտանգավոր է, քանի որ **կարգապահական իրավախախտումների դեպքում** հնարավոր է սկսվի կամայական հետապնդում դատավորների նկատմամբ: Այդ իսկ պատճառով Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ) դատական համակարգի անկախության մասին իր 2001 թվականի թիվ 1 եզրա-

կացության մեջ առաջարկել է սահմանել այնպիսի չափորոշիչներ, որոնք կսահմանեն ոչ միայն այն վարքագիծը, որը կարող է հանգեցնել դատավորի պաշտոնից հեռացմանը, այլև՝ բոլոր այն արարքները, որոնք կարող են հանգեցնել կարգապահական տույժի կամ կարգավիճակի փոփոխության (CDL-AD(2007)009, կետ 6-րդ):

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ կանխատեսելիության առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տարիների ընթացքում մշակել է չափանիշներ՝ որոշելու, թե արդյո՞ք իրավունքին միջամտելը նախատեսված է օրենքով, և եկել է այն եզրակացության, որ իրավական կարգավորումների առկայությունը բավարար չէ, դրանք պետք է ճշգրիտ լինեն, և դրանց հետևանքները պետք է լինեն կանխատեսելի բոլոր շահագրգիռ կողմերի համար: Այս պահանջները կիրառելի են կարգապահական վարույթի դեպքում, քանի որ այդ վարույթում նույնպես պետք է պարզ լինի, թե ո՞ր գործողություններն են ենթակա կարգապահական պատասխանատվության (CDL-AD(2007) 009, կետ 15):

Իր կարծիքներից մեկում փաստելով, որ օրենդրության մեջ **խախտումներն այնքան ընդհանուր են ձևակերպված, որ կարող են ընդգրկել գործի քննության ընթացքում հանդիպող դատական վարքագծի բազմաթիվ տարատեսակներ**, ինչն իրականում վտանգ է ներկայացնում դատական անկախության սկզբունքի համար, Վենետիկի հանձնաժողովն առաջարկել է դրա փոխարեն հստակ սահմանափակել դատավորի կարգապահական պատասխանատվության շրջանակը: Հանձնաժողովն ընդգծել է, որ դատական անկախության սկզբունքի նպատակն է ապահովել, որ դատավորները զերծ մնան արտաքին ազդեցությունից, երբ նրանք օրենքի հիման վրա որոշում են կայացնում գործի վերաբերյալ, և նրանք չպետք է վախենան որևէ հետևանքից՝ իրենց պարտականությունների կատարման համար, բացառությամբ արդարադատության խեղաթյուրման (քրեական) գործի (CDL-AD(2007)009, կետ 17):

Վենետիկի հանձնաժողովի կարծիքով՝ դատավորների կարգապահական կանոնների նպատակն է ապահովել դատարանների իրավասությունը, այլ ոչ թե ապահովել օրենքի ճիշտ կիրառումը, ինչը բողոքարկման ընթացակարգի խնդիրն է: «Օրենքի խախտումների համար» գրեթե ինքնաշխատ հեռացումը հակասում է դատական անկախության հիմնարար հայեցակարգին: Ըստ այդմ՝ օրեն-

քում պետք է հստակ սահմանվի, որ պաշտոնից ազատման պատժամիջոցն ամենալուրջ պատժամիջոցն է, որը կիրառվում է միայն ծայրահեղ դեպքերում և որպես ծայրահեղ միջոց: Կարգապահական հանձնաժողովը պետք է տեղյակ լինի, որ իր բոլոր որոշումները պետք է անցնեն համաչափության քննություն, ինչպես դա շարադրվել է **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում** (CDL-AD(2007) 009, կետ 29):

Հանձնաժողովը դիրքորոշում է հայտնել առ այն, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշ հիմքեր, ինչպիսին են «վարկաբեկելով դատական համակարգը» կամ «նվազեցնելով հասարակության վստահությունը դատական համակարգի անկախության և անկողմնակալության նկատմամբ», բավականին անորոշ են ձևակերպված...:

Այնուամենայնիվ, ինչ-որ չափով անխուսափելի է, որ օրենսդիր մարմինն օգտագործում է բաց ձևակերպումներ՝ անհրաժեշտ գործողությունների ազատություն ապահովելու համար: Դա նախկինում ճանաչվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Այն դեպքում, երբ օրենսդիրն օգտագործում է նման ձևակերպումներ, հատկապես կարևոր է, թե գործնականում ո՞ր մարմինն է հանձնարարված դրանց մեկնաբանությունը և կիրառումը: Հայաստանում այս խնդիրը հանձնարարված է ԲԴԽ-ին, որն օժտված է բավարար ինստիտուցիոնալ անկախությամբ և կարող է առաջարկել արդար դատավարության հիմնական երաշխիքներ (Տե՛ս ԴՕ 14-րդ գլուխ): Կարևոր է նաև, որ կարգապահական պատասխանատվությունը կարող է իրականացվել միայն դատական վարքագծի կանոնների խախտման, այլ ոչ թե ոչ այնքան ստույգ ձևակերպված «էթիկայի կանոններ» հասկացության դեպքում (Տե՛ս ԴՕ 68-րդ հոդվածի 3-րդ մաս): Ուստի հնարավոր է այդ բաց մակարդակի չափորոշիչների հետագա զարգացման և հստակեցման խնդիրները փոխանցել ԲԴԽ-ի իրավասությանը, եթե այն բխում է օրենքի այլ պահանջներից (դատավորի կողմից դիտավորության մտադրության կամ առերևույթ հանցավոր անփութության առկայություն, **խախտման հետևանքով առաջացած էական ծանր հետևանքներ** և այլն...) (CDL-AD(2019) 024, կետ 40):

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի նախագծերից մեկին՝ հանձնաժողովը փաստել է, որ 155-րդ հոդվածի 6-րդ մասը բացատրում է, թե որն է «կոպիտ կարգա-

պահական խախտումը»: Այս շեմին կարելի է հասնել, (1) եթե դատավորը կատարում է որոշակի քանակությամբ ավելի նվազ բնույթի խախտումներ, կամ (2) եթե դատավորը կատարում է «դատական իշխանությունը անարգող գործողություն» կամ այնպիսի արարք, որն «անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ»: Վենետիկի հանձնաժողովն այստեղ նկատում է որոշակի զուգահեռ. 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «դատական համակարգի բարձր հեղինակությունը խաթարելը» բնութագրվում է որպես կարգապահական պատասխանատվության հիմք, բայց ոչ պարտադիր՝ որպես «կոպիտ կարգապահական խախտում»: Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ 60-րդ հոդվածի 1-ին մասի և 155-րդ հոդվածի 6-րդ մասերի միջև փոխհարաբերությունները պետք է հստակեցվեն: Թվում է, որ նույն տեսակի խախտումը կարող է հանգեցնել առավել խիստ կարգապահական տույժի (ինչպիսին, օրինակ, նախագրուշացումն է) կամ որակվել որպես «կոպիտ խախտում»՝ անկախ նախորդ խախտումների արձանագրումից և դրանով իսկ ուղղակիորեն հանգեցնում է դատավորի կարգավիճակի դադարեցմանը: Սկզբունքորեն այդպիսի մոդելն ընդունելի է, բայց կարգապահական մարմինները պետք է տեղյակ լինեն, որ ոչ բոլոր «գործողությունները, որոնք անարգում են դատական իշխանությանը», կամ այնպիսի գործողությունը, որն «անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ», անպայման ենթադրում են կոպիտ խախտում. համաչափության սկզբունքը միշտ պետք է կիրառվի (օրենսգրքի նախագծի 138-րդ հոդվածի 2-րդ մաս): Սա պետք է հստակ նշված լինի օրենսգրքի նախագծում (CDL-AD Հ(2017) 019, կետ 157):

4.5. Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրված մոդելը նույնպես զերծ չի մնացել կարգապահական պատասխանատվության հիմքերն ամրագրող կանոնների մասնակի ընդհանրական ձևակերպումներից:

Թեև Օրենսգրքում մանրամասն կարգավորվել են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը, իրավասու մարմինների գործառույթները և լիազորությունները, այդուհանդերձ, օրենսդրի կողմից էական կարգապահական խախտումը բնորոշելիս օգտագործվել են անորոշ իրավական հասկացություններ, որոնց մասով Բարձրագույն դատական խորհուրդն ունի գնահատողական լայն ազատություն:

Վիճարկվող դրույթների շրջանակներում Սահմանադրական դատարանը ներկա փուլում անհրաժեշտ չի համարում անդրադառնալ վիճարկվող դրույթների հետ աղերսվող՝ կարգապահական պատասխանատվության ամբողջ համակարգին՝ ի թիվս այլ հանգամանքների նկատի ունենալով հատկապես նաև այս հարցով Օրենսգրքի կատարելագործման ուղղությամբ ծրագրված աշխատանքները, որոնց ընթացքում պետք է հաշվի առնվի նաև լավագույն միջազգային փորձը:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, թե արդյոք Օրենսգրքում հստակ տարանջատված են նյութական կամ դատավարական օրենքի խախտումը գնահատելու հարցում, մի կողմից՝ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների, մյուս կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետին, ապա Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն օրենսդրի կողմից այդ կետում օգտագործված անորոշ իրավական հասկացությունների սահմանադրականության գնահատումը, այլև այն հանգամանքը, թե արդյոք դրանք հիմք են դարձել իրավակիրառ մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի հակասական պրակտիկայի ձևավորման համար, ինչպես պնդում է դիմող կողմը:

Սահմանադրական դատարանը բազմիցս նշել է, որ «խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ» (ՄԴՈ-1224): Մինչդեռ, դիմողի վկայակոչած մեկ այլ գործի ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ դրա փաստական հանգամանքները տարբերվում են դիմողի գործի փաստական հանգամանքներից, հետևաբար, տարբեր են նաև արարքների որակումները, իսկ կարգապահական վարույթի ընթացքում դատավորների կատարած արարքների որակման իրավասությունը դրված է Բարձրագույն դատական խորհրդի վրա: Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խտրականության վերաբեր-

յալ դիմողի ներկայացրած մտահոգությունները վերաբերում են Բարձրագույն դատական խորհրդի կայացրած որոշման իրավաչափությանը:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը հստակ չի տարանջատում, թե դատավորի կողմից դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի արարք կատարելը վերաբերում է դատավորի կողմից նյութական կամ դատավարական նորմերի այնպիսի ակնհայտ կամ կոպիտ խախտմանը, որն անհամատեղելի է դարձնում նրա հետագա պաշտոնավարումը, թե խոսքը դատավորի վարքագծի կանոնների խախտման մասին է:

Վերը շարադրված պատճառներով այս փուլում չանդրադառնալով դատավորի վարքագծի կանոնների և նյութական ու դատավարական նորմերի խախտման միջև տարանջատման հստակության հարցին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված վիճարկվող դրույթով, ըստ էության, հնարավոր է դատավորի լիազորությունները դադարեցնել նաև նրա վարքագծի ցանկացած դրսևորման դեպքում, նույնիսկ այնպիսի դրսևորումների, որոնցից է, օրինակ, դատավորի կողմից պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելը: Համադրելով վիճարկվող դրույթը հիշյալ հոդվածի նույն մասի 1-ին կետի հետ՝ պարզ է դառնում, որ օրենսդրի կողմից ընտրվել է անհամաչափ լուծում. մի դեպքում՝ *միայն տարբեր կարգապահական խախտումների հանրագումարն է հանգեցնում դատավորի լիազորությունների դադարեցման*, մեկ այլ դեպքում՝ *ցանկացած կարգապահական խախտում կարող է դիտվել որպես դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի*: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ դա **կարող է հանգեցնել անհամաչափ միջամտության դատավորի հետագա պաշտոնավարմանը, ուստի՝ վտանգել դատավորների անկախության սկզբունքը**:

Մյուս կողմից՝ Բարձրագույն դատական խորհուրդն ինքն է լուծում դատավորների լիազորությունների դադարեցման հարցը, իսկ Բարձրագույն դատական խորհուրդը, համաձայն Սահմանադրության 173-րդ հոդվածի, անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը, ուստի՝ նա իր իրավակիրառ պրակտիկայի միջոցով կարող է արգելափակել հիշյալ դրույթի կամայական կիրառումը՝ ամրագրելով օրենքից բխող ավելի կոնկրետ չափանիշներ: Սակայն ներկայումս դրանք

պատշաճ մանրամասնությամբ դեռևս չեն ամրագրվել և դա վտանգում է դատավորի լիազորությունների դադարեցման՝ որպես դատավորի հետագա պաշտոնավարման հիմնական իրավունքին առավել ինտենսիվ միջամտության հարցում համաչափության սկզբունքի ապահովումը:

Բացի դրանից, Բարձրագույն դատական խորհրդի որոշումների անբողոքարկելիությունը պետք է կանխորոշեր դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու բոլոր հիմքերի, առավելապես նրա լիազորությունների դադարեցմանը հանգեցնող հիմքերի՝ առավել հնարավոր որոշակիությամբ ձևակերպումը, ինչը չի արվել օրենսդրի կողմից:

Մինևույն ժամանակ անհրաժեշտ չափով տարբերակված չէ կարգապահական տույժերի շրջանակը, ինչն ստեղծում է ամենախիստ կարգապահական տույժի կիրառման անհամաչափ լայն հնարավորություններ: Հետևապես, Բարձրագույն դատական խորհուրդը չունի պատշաճ իրավական հենք՝ համաչափության սկզբունքից ածանցվող առավել անհատականացված կարգապահական տույժեր կիրառելու այն դեպքերում, երբ դատավորի կողմից կատարված կարգապահական խախտումը չի կարող արդյունավետ հակազդեցության արժանանալ այլ կարգապահական տույժերի կիրառման միջոցով, սակայն, մյուս կողմից՝ առկա չեն բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ նրա լիազորությունները դադարեցնելու համար:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտները պետք է ներդնեն կարգապահական տույժերի առավել տարբերակված դրանց անհատականացման առավել մեծ հնարավորություն ընձեռող համակարգ, որպեսզի հնարավոր լինի հավասարակշռել հանրային և մասնավոր շահերի բախման բոլոր դեպքերը՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածին՝ փոխկապակցված Սահմանադրության 78-րդ հոդվածի հետ՝ այնքանով, որքանով իր ոչ հստակ ձևակերպման պատճառով չի ստեղծում պատշաճ նախադրյալներ՝ տվյալ հիմքով դատավորի լիազորությունների դադարեցման՝ որպես Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքից ածանցվող՝ դատավորի անփոփոխելիության երաշխիքով ապահովված՝ նրա՝ որպես մասնավոր անձի

հետագա պաշտոնավարման իրավունքի առավել ինտենսիվ սահմանափակման համաչափությունը երաշխավորելու համար:

4.6. Դիմողի կողմից վիճարկվում է նաև Օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի շրջանակներում անհրաժեշտ է պարզել դիմողի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման հարցը՝ հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակի առանձնահատկությունները:

Սահմանադրական դատարանը կրկին արձանագրում է, որ դատական բողոքարկման հնարավորությունը դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրատարր է (Տե՛ս, օրինակ՝ ՄԴՈ-936 որոշումը):

Վերոգրյալի հաշվառմամբ, այդուհանդերձ, կան այնպիսի գործեր, որոնք իրենց բնույթով, սուբյեկտային կազմով և այլ հիմքերով ունեն մի շարք առանձնահատկություններ, ուստի դրանց մասով դատական պաշտպանության և դրա բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի իրացումը կարող է ունենալ որոշ տարբերություններ, այդ թվում՝ այդ իրավունքի սահմանափակման առումով՝ տվյալ գործերի առանձնահատկությամբ պայմանավորված:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, իր վճիռներում անդրադառնալով դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին, նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությանը: Դրանք (սահմանափակումները) համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն իրավական նպատակ, և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (Golder v. United Kingdom, 21 Feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 Aug. 1994, Ashingdane v.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019

United Kingdom, 28 May 1985, Garcia Manibardo v. Spain (15 Feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 Nov. 1995, Philis v. Greece, 27 Aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 Jun. 1995): «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, սակայն եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից» (Delcourt v. Belgium, 2689/65, 17 հունվարի 1970թ./ Toth v. Austri, 11894/85, 12 դեկտեմբերի 1991թ./ Platakou v. Greece, 38460/97, 11 հունվարի 2001թ.): «Դատարանը ճանաչում է պետության շահը վերահսկելու դատարանի մատչելիությունը, երբ հարցը վերաբերում է որոշակի խմբի հարցերի: Այնուամենայնիվ, Պայմանավորվող Պետությունների, մասնավորապես՝ իրավասու ազգային օրենսդրի, այլ ոչ թե Դատարանի խնդիրն է հստակ սահմանել հանրային ծառայության այն ոլորտները՝ ներառելով պետական ինքնիշխանությանը բնորոշ հայեցողական լիազորությունների իրականացումը, որտեղ անհատի շահերը պետք է ստորադասվեն ...: Եթե ազգային համակարգն արգելափակում է դատարանի մատչելիությունը, Դատարանը կհաստատի, որ վեճն իրականում այնպիսին է, որ արդարացվում է Հոդված 6-ով նախատեսված երաշխիքների նկատմամբ բացառության կիրառումը: Եթե վեճն այդպիսին չէ, որևէ խնդիր չկա, և 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը կկիրառվի» (CASE OF OLUJIC v. CROATIA, Application no. 22330/05, JUDGMENT 5 February 2009, FINAL 05/05/2009):

Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-719 որոշման մեջ վկայակոչելով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրների վերաբերյալ իր մի շարք որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ կապված Եվրոպայի խորհրդի առջև ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտության հետ, «միաժամանակ կարևորել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում»:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ արդյունավետ դատական պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, ի թիվս այլնի ենթադրում է պետության ներսում դատական աստյանների աստիճանակարգության առկայություն և յուրաքանչյուրի համար այդ բոլոր աստյաններում դատական պաշտպանության մատչելիության հնարավորություն: Միևնույն ժամանակ, առանձին տեսակի գործերով պետությունները կարող են շեղվել ընդհանուր կանոնից և այդ գործերով դատական պաշտպանության իրավունքը երաշխավորել մեկ դատարանի (դատական աստյանի) շրջանակում:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, նրանց լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետությունում դասվում են այդ տեսակի գործերի շարքին: Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորների լիազորությունների դադարեցման հարցերը լուծում է Բարձրագույն դատական խորհուրդը, որն այդ գործերով հանդես է գալիս որպես դատարան, և որի կայացրած որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և վերջնական են:

Գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում Բարձրագույն դատական խորհրդի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների համար դասական տարբերակով բողոքարկման նախատեսումը պրակտիկայում կարող էր մի շարք խնդիրներ առաջացնել թե՛ կիրառելիության, թե՛ արդյունավետության առումներով: Բացի դրանից, նման կարգավորումը չէր բիւի նաև դատական համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում Բարձրագույն դատական խորհրդի որպես անկախ պետական մարմնի սահմանադրական կարգավիճակից ու առաքելությունից:

Սահմանադրական դատարանը, ժամանակին գնահատելով Արդարադատության խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում վերջնական ակտ կայացնելու իրավասության սահմանադրականությունը, նշել է, որ «Մեթոդաբանական նշանակության կարևոր հանգամանքն այն է, որ առավելապես գործող դատավորներից ու նաև գիտնական իրավաբաններից կազմված այդ մարմինը սահմանադրական իր իրավասության շրջանակներում ու օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **գնահատում է,**

թե իր իսկ կողմից դատավորի պարտականությունների համար լիազորված պաշտոնատար անձը որքանով է հավատարիմ իր երդմանը և ինչպես է կատարում պաշտոնական պարտականությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս համակարգն ամբողջական է իր գործառույթների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներից, ինչն այս մարմնի բացառիկ իրավասությունն է: Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստագրվեք արդարադատության խորհրդի գոյությունն ընդհանրապես որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի» (ՄԴՈ-1063):

Վերահաստատելով մեջբերված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը և ի լրումն դրա Սահմանադրական դատարանն արձանագրում է՝ հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի գործառութային դերը դատարանների և դատավորների անկախության ապահովման հարցում, ինչպես նաև դատական համակարգում ներառված մյուս դատարանների սահմանադրական գործառույթները, Սահմանադրության գործող կարգավորումների պայմաններում որևէ իրավական հնարավորություն առկա չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին այդ մարմնի որոշումների իրավաչափությունը Հայաստանի Հանրապետության դատական իշխանության որևէ մարմնում վերանայելու համար: **Սահմանադրության 175-րդ հոդվածի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման բացառիկ լիազորությունը պատկանում է Բարձրագույն դատական խորհրդին:** Նման պայմաններում, եթե Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ ատյանի դատարան վերանայի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը և դրա արդյունքում կայացնի նոր դատական ակտ, օրինակ՝ բեկանի և փոփոխի Բարձ-

րագույն դատական խորհրդի՝ որպես դատարան կայացրած որոշումը, ապա վերջնադյունքում կստացվի, որ հենց այդ ատյանի դատարանն էլ լուծեց դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այսպիսով, ամբողջ վերոշարադրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող սահմանադրափրավական կարգավորումների համատեքստում բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գործող դատարաններից որևէ մեկում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն, քանի որ դա կհակասի Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակին: Բացի դրանից, տվյալ որոշումների վերանայումը, դրանով իսկ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը դուրս է Հայաստանի Հանրապետությունում դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակներից:

Սահմանադրական դատարանը սույն գործով *mutatis mutandis* կիրառելի է համարում նաև ՄԴՈ-1063 որոշմամբ արտահայտված իր այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ « ... ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ներկա դատական համակարգի պայմաններում նման որոշումների դատական կարգով բողոքարկումն օրենսդրորեն ամրագրված առկա շրջանակներից դուրս կարող է աղերսներ ունենալ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդարադատության խորհրդի կազմի մեջ ներառված են հիմնականում գործող դատավորներ ՀՀ դատական համակարգի տարբեր օղակներից, ներառյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը: Նման պայմաններում ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների համակարգում նախատեսված չէ այնպիսի դատական ատյան, որի դատավորներն իրենց կարգավիճակով ավելի բարձր կլինեն ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորներից: Այս կապակցությամբ սույն գործով սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել նաև իր՝ 28.11.2007թ. ՄԴՈ-719 որոշման 5-րդ կետը, որտեղ սահմանադրական դատարանն անընդունելի է համարել հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ

վերադաս առյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորությունը: Մահմանադրական դատարանը գտնում է, որ նման դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև արդարադատության խորհրդի խնդրո առարկա որոշումների նկատմամբ»:

4.7. Հաշվի առնելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերով Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման արգելքը՝ Մահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել արդյո՞ք առկա իրավակարգավորումներով նախատեսված են բավարար երաշխիքներ, որոնց պայմաններում կարող է ապահովվել անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացումը: Այս հարցն անհրաժեշտ է դիտարկել Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի, Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգի, գործունեության սկզբունքների ու ընթացակարգերի համատեքստում:

Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով այն դեպքերին, երբ դատարաններից տարբերվող մարմիններ են լուծում այնպիսի վեճեր, որոնց նկատմամբ կիրառելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, նշել է. «Կոնվենցիան պահանջում է հետևյալ համակարգերից առնվազն մեկի առկայությունը. համապատասխան իրավասություն ունեցող մարմինները կամ իրենք են բավարարում 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները կամ այնքան էլ չեն բավարարում դրանք, սակայն ենթակա են այնպիսի դատական մարմնի կողմից լրացուցիչ հսկողության, որն ունի լիարժեք իրավասություն և ապահովում է 6-րդ հոդվածի 1-ին կետի երաշխիքները (Տե՛ս Ալբերտը և Լե Կոմպտն ընդդեմ Բելգիայի [Albert and Le Compte v. Belgium], 10 փետրվարի 1983 թվական, § 29, Շարք Ա թիվ 58)»:

Այնուհետև, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Դատարանը պետք է ուսումնասիրի՝ արդյո՞ք Արդարադատության խորհուրդը կարող էր համարվել «անկախ և անկողմնակալ դատարան», ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով:

Դատարանը գտել է, որ որոշելու համար, արդյո՞ք դատարանը 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կարող է համարվել «անկախ», պետք է հաշվի առնել, *inter alia*, դրա անդամների նշանակման

կարգը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը և այն հարցը՝ արդյոք մարմինն ընկալվում է որպես անկախ: Ինչ վերաբերում է «անկողմնակալության» հարցին, ապա այս պահանջի մասով գոյություն ունի երկու ասպեկտ: Նախ՝ դատարանը պետք է սուբյեկտիվորեն ազատ լինի անձնական նախապաշարմունքից կամ կանխակալությունից: Երկրորդ՝ այն պետք է նաև օբյեկտիվորեն անկողմնակալ լինի, այն է՝ պետք է ապահովի բավարար երաշխիքներ բացառելու ցանկացած օրինաչափ կասկած այդ առումով: Անկախության և օբյեկտիվ անկողմնակալության հասկացությունները սերտորեն կապված են, և Դատարանը դրանք հաճախ միասին է դիտարկում (Տե՛ս Ֆինդլեյն ընդդեմ Միացյալ Թագավորության [Findlay v. the United Kingdom], 25 փետրվարի 1997 թվական, § 73, Վճիռների և որոշումների վերաբերյալ գեկույցներ 1997 I, Բրուդնիկան և այլք ընդդեմ Լեհաստանի [Brudnicka and Others v. Poland], գանգատ թիվ 54723/00, § 38, ՄԻԵԴ 2005 II)»:

Այլ կերպ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված իրավունքը երաշխավորվում է ոչ թե համապատասխան որոշման բողոքարկման հնարավորությամբ ու համապատասխան դատական ատյանների քանակով, այլ այդ որոշումն ընդունած մարմնի (դատարանի) կարգավիճակով: Եթե այդ մարմինը չի բավարարում «անկախ և անկողմնակալ դատարանի» չափանիշներին, ապա դրա կայացրած ակտերը պետք է լրացուցիչ ստուգման ենթարկվեն նշված չափանիշներին համապատասխանող դատարանի կողմից: Հետևաբար, այն դեպքերում, երբ գործն ի սկզբանե քննվել է 6-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված «անկախ և անկողմնակալ դատարանի» չափանիշներին համապատասխանող մարմնի կողմից, ապա այդ մարմինների կայացրած ակտերի բողոքարկման հնարավորության բացակայությունն ինքնին դատական պաշտպանության իրավունքի խախտում չէ:

Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը, իսկ 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև դատավորների լիազորությունների դադարեցման հարցերը: Նույն

հողվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Սահմանադրությամբ Բարձրագույն դատական խորհրդին վերապահվել է վճռորոշ դերակատարություն դատավորների նշանակման հարցում (Սահմանադրության 175-րդ հոդված): Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով:

Սահմանադրության 174-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից, որից հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Ընդ որում, Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Բացի դրանից, դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ:

Բարձրագույն դատական խորհրդի մյուս հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:

Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի: Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

Բարձրագույն դատական խորհրդի գործունեության անկախությունն ու անաչառությունն ապահովող երաշխիքներ են ամրագրված նաև Դատական օրենսգրքով: Մասնավորապես, Բարձրագույն

դատական խորհրդի ոչ դատավոր անդամները ևս կաշկանդված են դատավորների համար սահմանված դատավորի վարքագծի կանոններով (66-րդ հոդվածի 2-րդ մաս), վերջիններս, ինչպես և դատավորները, կաշկանդված են նաև իրենց պաշտոնն ստանձնելիս օրենքով սահմանված համապատասխան երդմամբ (82-րդ հոդվածի 2-րդ մաս): Օրենսգրքով սահմանված են Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներին ներկայացվող անհամատեղելիության պահանջները և նրանց գործունեության լրացուցիչ երաշխիքները (83-րդ հոդված):

Օրենսգրքով մանրամասն կարգավորված է նաև դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների ընտրության կարգը (76-րդ հոդված): Բարձրագույն դատական խորհրդի անդամների լիազորությունների դադարման և դադարեցման հարաբերությունների կարգավորմանն է նվիրված Օրենսգրքի 86-րդ հոդվածը, որը գրեթե նույն կարգավորումներն է նախատեսում, ինչ առհասարակ դատավորների պարագայում՝ թե՛ հիմքերի, թե՛ ընթացակարգերի առումով:

4.8. Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից առկա երաշխիքներին, ապա դրանց հիմնական ակունքը Մահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասն է, ըստ որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան այն իմաստով, որ **որպես դատարան** հանդես եկող անկախ պետական մարմնի թե՛ ձևավորման, թե՛ գործունեության կարգը պետք է համապատասխանի դատարաններին բնորոշ համապատասխան հատկանիշներին:

Նախկինում գործած Արդարադատության խորհրդին առնչվող՝ «գործում է որպես դատարան» եզրույթի վերաբերյալ Մահմանադրական դատարանն իր՝ 18 դեկտեմբերի 2012 թվականի ՄԴՈ-1063 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... սահմանադրական դատարանը գտնում է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ **արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:** Վերջինս փաստվում է նաև ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում անմիջապես հաջորդող այն կանոնակարգ-

մամբ, համաձայն որի՝ «Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանմբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»:

Որպես դատարան հանդես գալու դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի գործունեության կարգին նվիրված համապատասխան դրույթներն ընդհանրական կերպով ամփոփված են Օրենսգրքի 15-րդ գլխում: Մասնավորապես, նշված գլխի 90 և 92-րդ հոդվածներում ամրագրված են Բարձրագույն դատական խորհրդի գործունեության կազմակերպական ձևերն ու եղանակները: Ըստ այդմ՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով, կամ երբ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել: Նշված դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավագոր է անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

Որպես դատարան հանդես գալու ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ: Այդ որոշումներն ստորագրում են նիստին ներկա բոլոր անդամները, դրանք հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների: Բարձրագույն դատական խորհրդի որպես դատարանի ընդունած որոշումները ենթակա են հրապարակման նաև Հայաստանի Հանրապետության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի հրապարակման համար նախատեսված կարգով:

Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Բարձրագույն դատական խորհրդի որպես դատարանի ընդունած որոշման պատճառաբանական կամ եզրա-

փակիչ մասի վերաբերյալ: Եթե Բարձրագույն դատական խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նրա ստորագրությամբ նշում է արվում Բարձրագույն դատական խորհրդի որոշման մեջ, և հատուկ կարծիքը նրա ստորագրությամբ կցվում է որոշմանը (Օրենսգրքի 94-րդ հոդված):

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով դատավարական ընթացակարգերին բնորոշ կարգավորումներ ու համապատասխան երաշխիքներ են ամրագրված նաև Օրենսգրքի 143-158-րդ հոդվածներում: Դրանց առանձին դրույթներ նվիրված են ապացուցման պարտականությանը (դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթ հարուցած մարմինը), անմեղության կանխավարկածին (143-րդ հոդված), կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու և այդ գործերով քննության ժամկետներին (144 և 150-րդ հոդվածներ), կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին (կարգապահական հարցերի հանձնաժողով, արդարադատության նախարար, 145-րդ հոդված), կարգապահական վարույթ հարուցելու առիթներին (146-րդ հոդված), այդ գործերով քննության ընթացքին, մասնավորապես, դատավորի իրավունքներին ու պարտականություններին (լսված լինելու, գործի նյութերին ծանոթանալու, քաղվածքներ, պատճեններ, հարցեր և բացատրություններ տալու, առարկություններ ներկայացնելու, ապացույցներ ներկայացնելու, նիստին անձամբ, ինչպես նաև փաստաբանի միջոցով մասնակցելու իրավունքները և այլն), ապացույցների հետազոտման հարցերին, գործի քննությունն ավարտելու և որոշման հրապարակման կանոններին, գործի քննության սահմաններին (գործը բացառապես համապատասխան միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում քննելու պարտականությունը, 151-153-րդ հոդվածներ), կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշման ընդունման ու հրապարակման կանոններին ու այդ որոշումներին ներկայացվող պահանջներին (154-155-րդ հոդվածներ), նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումների վերանայման հիմքերին ու կարգին (157-րդ հոդված) և այլն:

Չնայած մեջբերված դրույթների առկայությանն Օրենսգրքում՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու համար անհրաժեշտ մնացած կարգավորումներն ամբողջացվել են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ 13-Ո-24 որոշմամբ հաստատված հավելվածում, որի 107-րդ կետի համաձայն՝ «Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության փուլում Խորհուրդը, որպես դատարան գործելիս, ղեկավարվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերով այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են Խորհրդում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության նկատմամբ»: Մեջբերված դրույթից, ի թիվս այլնի, հետևում է, որ բոլոր այն երաշխիքները, որոնք առկա են վարչական դատավարության կարգով գործը քննելիս (որոնցից է, օրինակ, փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը, վարչական դատավարությունում կողմերի իրավունքներն ու պարտականությունները) գործում են նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննելու դեպքերում:

Սահմանադրական դատարանը գտնում է՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի որոշումների վերջնական լինելու հարցը կարող է լուծվել ոչ միայն Սահմանադրության վերաբերելի դրույթների տեքստի, այլ նաև դրանց ծագումնաբանական մեկնաբանության միջոցով:

Մասնավորապես, 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների հիմնավորումների մեջ հստակ արտահայտված է այն գաղափարը, ըստ որի՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ Հանրապետության նախագահին վերապահված՝ ոչ միայն դատավորի լիազորությունների դադարեցման, այլև նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու հարցերում վերջնական որոշման իրավասությունը տրամադրվել է **միայն** Բարձրագույն դատական խորհրդին: Բացի դրանից, նույն հիմնավորումների մեջ հատուկ շեշտվել է, որ (Բարձրագույն դատական) «խորհրդի լիազորությունների բովանդակությունն էապես տարբերվում է գործող Սահմանադրության մեջ ամրագրված լիազորությունների բովանդակությունից: Այսպես, խորհրդին է վերապահվում վճռորոշ դերակատարություն դատավորների, այդ թվում դատարանների

նախագահների նշանակման հարցում: Ընդամին, ընտրվել է դատավորների նշանակման հարցում խորհրդի ինքնուրույն լիազորությունների մասնակի գույման, իսկ դատավորների գործուղման, փոխադրման և հատկապես կարգապահական պատասխանատվության հարցերում՝ լիարժեք ինքնուրույնության ձևաչափը: **Դա հատկապես կարևոր է խորհուրդը որպես բարձրագույն կարգապահական մարմին կառուցակարգելու տեսանկյունից, որի որոշումները պետք է լինեն վերջնական և անբողոքարկելի»** (ընդգծումները՝ Սահմանադրական դատարանի):

Այսպիսով, ամփոփելով ամբողջ վերոգրյալը, մասնավորապես, Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների, ձևավորման կարգի, գործունեության սկզբունքների վերաբերյալ վերլուծություններն ու մեջբերումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Սահմանադրությամբ և այլ օրենքներով նախատեսված են դատարաններին բնորոշ այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են, մասնավորապես, բայց ոչ միայն, ողջամիտ ժամկետում գործի քննությունը, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, դատական ակտերի պարտադիրությունը, որոնք իրենց ամբողջության մեջ ուղղված են Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը:

Մինչև ժամանակ հարկ է նշել, որ կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորը զրկված չէ իր նկատմամբ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ կիրառված նորմի սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում վիճարկելու (ինչը տեղի է ունեցել սույն գործով) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի խախտման դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիմելու հնարավորություններից:

Վերոգրյալի հիման վրա հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակը, դրա ձևավորման կարգի, ինչպես նաև գործունեության սկզբունքների առկայությունը՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ**

Բարձրագույն դատական խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը բխում է առկա սահմանադրական իրավակարգավորումներից և չի խախտում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

15 նոյեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1488



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ
ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՈՒՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ,
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 նոյեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարող Է. Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)2019
133

դոնբասց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի նոյեմբերի 3-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների, ինչպես նաև դրանց ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տեղեկության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի սեպտեմբերի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. «Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների, ինչպես նաև դրանց ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տեղեկության փոխանակման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերի 3-ին Տաշքենդում՝ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների, ինչպես նաև դրանց ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տեղեկության փոխանակման ապահովման նպատակով:

2. Ըստ գործում առկա նյութերի, մասնավորապես, ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից պատասխանատու իրավասու մարմինների մասին ներկայացված տեղեկանքի՝ Համաձայնագրի շրջանակներում տեղեկության փոխանակման համար պատասխանատու ՀՀ իրավասու մարմիններն են ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ինչպես նաև տեղեկանքում նշվում է, որ ահաբեկչության դեմ պայքարին օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում մասնակցում են նաև պետական կառավարման համակարգի մյուս մարմինները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- կատարել ՀՀ պարտավորությունները Համաձայնագրի շրջանակներում՝ ինքնիշխան հավասարության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու և ՀՀ օրենսդրության սկզբունքներին համապատասխան (հոդված 3, մաս 1),

- տիրապետելով իրավասությունը՝ չիրականացնել գործառույթներ, որոնք մտնում են բացառապես այլ Կողմի իրավասության մեջ (հոդված 3, մաս 2),

- ապահովել տեղեկության փոխանակումն անվճար հիմունքներով՝ Համաձայնագրով սահմանված կարգով (հոդված 4, մաս 1, ենթամաս 1),

- ապահովել տեղեկատվական, այդ թվում՝ միջպետական համակարգերի իրավական ռեժիմի կատարումը (հոդված 4, մաս 1, ենթամաս 2),

- ապահովել տեղեկության փոխանակման գործընթացում օգտագործվող գաղտնի տեղեկույթի պաշտպանումը՝ ՀՀ օրենսդրությամբ, 1993թ. հունվարի 22-ի՝ Միջպետական գաղտնիքների պահպանման փոխադարձ ապահովման վերաբերյալ համաձայնագրով, 2013թ. հոկտեմբերի 25-ի՝ Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին համաձայնագրով, Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի՝ 2013թ. հոկտեմբերի 25-ի որոշմամբ հաստատված Անկախ Պետությունների Համագործակցության մարմիններում գաղտնի տեղեկույթի հետ վարվելու վերաբերյալ կանոններով և նման կարգի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին ՀՀ կողմից կնքված այլ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով (հոդված 4, մաս 1, ենթամաս 3),

- Համաձայնագրի շրջանակներում գաղտնի տեղեկույթի փոխանցումն ամեն առանձին դեպքում կատարել ՀՀ օրենսդրության համաձայն՝ ելնելով սեփական շահերից (հոդված 4, մաս 2),

- սահմանել իրավասու այն մարմինների ցանկը, որոնք պատասխանատու են Համաձայնագրի շրջանակներում տեղեկության փոխանակման համար և իրավասու մարմինների վերաբերյալ տեղեկությունն ուղարկել ավանդապահին՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019

տարման վերաբերյալ ծանուցումն ի պահ հանձնելիս, իսկ իրավասու մարմինների ցանկում փոփոխությունների մասին մեկ ամսվա ընթացքում տեղեկացնել ավանդապահին (հոդված 5),

- Համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված տեղեկությունը չօգտագործվի այլ նպատակներով՝ փոխանցման նպատակից բացի (հոդված 7, մաս 2),

- ապահովել, որ հայցվող ՀՀ իրավասու մարմինը տեղեկացնի հարցում կատարող իրավասու մարմնին կամ ԱՊՀ մարմնին հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցումն ստանալու օրվանից 30 օր անց՝ հարցումով նախաձեռնված գործողությունների և դրանց արդյունքների վերաբերյալ, կամ հարցումը (նրա մի մասը) կատարելու մերժման, հետաձգման և (կամ) պայմանների վերաբերյալ նշելով պատճառները (հոդված 8, կետ 2),

- երաշխավորել, որ հայցվող ՀՀ իրավասու մարմինը չի հրապարակի հարցում ուղարկելու վերաբերյալ տեղեկությունն առանց հարցում կատարող իրավասու մարմնի կամ ԱՊՀ մարմնի նախնական գրավոր համաձայնության (հոդված 8, կետ 4),

- ՀՀ տեղեկատվական համակարգում պարունակվող գաղտնի տեղեկություն այլ Կողմի իրավասու մարմնին կամ ԱՊՀ մարմնին փոխանցումը, ինչպես նաև ՀՀ տեղեկատվական համակարգի օգտատերերին իրավունք տրամադրելն իրականացնել միայն այն գաղտնի տեղեկության նկատմամբ, որի փոխանցման մասին որոշումն ընդունվել է՝ համաձայն ՀՀ օրենսդրության, որի իրավասու մարմին է հանդիսանում ՀՀ տեղեկատվական համակարգի տերը (հոդված 9, կետ 2):

4. Համաձայնագրի վերաբերյալ ՀՀ կողմից կատարվել է վերապահում՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելուց հետո:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. 2017 թվականի նոյեմբերի 3-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների, ինչպես նաև դրանց ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տեղեկության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 նոյեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1489



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1988 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՒԱԴԱՐՁ
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ
(2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՓՈՓՈԽՎԱԾ)
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դի-
լանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկու-
ցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացու-
ցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-
րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1988 թվականի
հունվարի 25-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Հարկային հար-
ցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)2019

յում (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ կոնվենցիան, գործում առկա եզրակացությունները և մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիան (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 1988 թվականի հունվարի 25-ին Ստրասբուրգում՝ հարկային ոլորտում միջազգային համագործակցությունը և հարկի ցանկացած տեսակին վերաբերող հարցերով վարչական աջակցության բոլոր ձևերն ուժեղացնելու, հարկատուների իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Կոնվենցիայով ստանձնում է մի շարք պարտավորություններ.

- Կոնվենցիայի IV գլխի դրույթներին համապատասխան, անկախ սովյալ անձի՝ այդ Կողմի կամ որևէ այլ պետության ռեզիդենտ կամ քաղաքացի լինելու հանգամանքից, Կոնվենցիայի մյուս կողմերին տրամադրել հարկային հարցերով վարչական աջակցություն՝ ներառյալ դատական մարմինների կողմից ձեռնարկված միջոցները, այն է՝ տեղեկությունների փոխանակում՝ ներառյալ միաժամանակյա հարկային ստուգումները և արտասահմանում հարկային ստուգումներին մասնակցությունը, աջակցություն բռնագանձման, այդ թվում՝ ապահովման միջոցների կիրառման հարցում, և փաստաթղթերի հանձնում (Հոդված 1),

- ապահովել, որպեսզի Կոնվենցիան կիրառվի հոդված 2-ում մատնանշված հարկերի նկատմամբ (Հոդված 2),

- Կոնվենցիայի Բ և Գ հավելվածներում արված ցանկացած փոփոխության մասին ծանուցել ավանդապահներից որևէ մեկին (Հոդված 3, կետ 3),

• փոխանակել ցանկացած տեղեկություն, մասնավորապես՝ Կոնվենցիայի III գլխի I բաժնով նախատեսված կարգով, որը, ենթադրաբար, վերաբերում է Կոնվենցիայով նախատեսված հարկերի վերաբերյալ վարչարարությանը կամ ներպետական օրենքների կիրառմանը (Հոդված 4, կետ 1),

• որպես հայցվող պետություն, դիմող պետության հարցման հիման վրա վերջինիս տրամադրել Կոնվենցիայի 4-րդ հոդվածում նշված ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է կոնկրետ անձանց կամ գործարքների: Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները պահանջվող տեղեկությունները դիմող պետությանը տրամադրելու համար, եթե Հայաստանի Հանրապետության հարկային գործերի նյութերում առկա տեղեկությունները բավարար չեն տեղեկություններ տրամադրելու հարցումը բավարարելու համար (Հոդված 5),

• ապահովել, որ Կոնվենցիայի 4-րդ հոդվածում նշված տեղեկությունները, կախված գործերի կատեգորիաներից, փոխհամաձայնությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն ավտոմատ ձևով փոխանակվեն (Հոդված 6),

• Կոնվենցիայի 7-րդ հոդվածում թվարկված հանգամանքների դեպքում ապահովել Կոնվենցիայի 4-րդ հոդվածում նշված՝ իրեն հայտնի տեղեկությունների ինքնաբերական փոխանակումը՝ առանց նախնական հարցման (Հոդված 7),

• որպես հայցվող պետություն, դիմող պետության իրավասու մարմնի ներկայացուցիչներին թույլ տալ ներկա գտնվել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային ստուգման համապատասխան մասին (Հոդված 9, կետ 1),

• որպես հայցվող պետություն, Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված կարգով դիմող պետության հարկային պահանջները բավարարելու ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր այնպես, ինչպես կվարվեր իր հարկային պահանջների դեպքում (Հոդված 11),

• որպես հայցվող պետություն, դիմող պետության հարցումով հարկի գումարը բռնագանձելու նպատակով ձեռնարկել ապահովման միջոցներ, եթե նույնիսկ պահանջը վիճարկվում է կամ դեռ չի համարվում հարկադիր կատարումը թույլատրող փաստաթղթի առարկա (Հոդված 12),

• որպես հայցվող պետություն, հասցեատիրոջը հանձնել փաստաթղթերը՝ ներառյալ դատական որոշումներին վերաբերող այն

փաստաթղթերը, որոնք ստացվել են դիմող պետությունից և վերաբերում են Կոնվենցիայով նախատեսված հարկին (Հոդված 17, կետ 1),

- որպես հայցվող պետություն, աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցումը բավարարելիս ձեռնարկված գործողության և ցուցաբերված աջակցության արդյունքի մասին, իսկ հարցումը մերժելիս այդ որոշման և դրա պատճառների մասին հնարավորինս շուտ տեղեկացնել դիմող պետությանը (Հոդված 20, կետեր 1, 2),

- Կոնվենցիայի շրջանակներում ձեռք բերված տեղեկությունների գաղտնիության հետ կապված ապահովել Կոնվենցիայի 22-րդ հոդվածում նշված պահանջների կատարումը (Հոդված 22),

- վարույթով վերջնական որոշում կայացվելուց անմիջապես հետո, որպես հայցվող պետություն կամ դիմող պետություն, կախված իրավիճակից, տեղեկացնել մյուս պետությանը ընդունված որոշման և դրա այն հետևանքների մասին, որոնք առնչվում են աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցմանը (Հոդված 23, կետ 3),

- եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի փոխհամաձայնությամբ, ապա, որպես հայցող պետություն, կրել աջակցության տրամադրման հետ կապված բոլոր սովորական ծախսերը, իսկ որպես դիմող պետություն, կրել աջակցության տրամադրման հետ կապված բոլոր չնախատեսված ծախսերը (Հոդված 26):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 1988 թվականի հունվարի 25-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայում (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1490



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 դեկտեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Մարդկային ներուժի զարգացման ընդլայնման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)2019

գրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Մարդկային ներուժի զարգացման ընդլայնման ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 18-ին՝ կրթության և առողջապահության ոլորտների բարելավման (այսուհետ՝ Ծրագիր) նպատակով:

2. Սահմանադրական դատարան ներկայացված Վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ Կառավարության դիմումին կից փաթեթում առկա ՀՀ ֆինանսների նախարարության հիմնավորման մեջ նշվում է, որ Վարկային համաձայնագրով ստացվելիք վարկային միջոցներն ուղղվելու են «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված պակասորդի ֆինանսավորմանը:

3. Վարկային համաձայնագիրն ունի կից չորս ժամանակացույց՝ ժամանակացույց 1. «Ծրագրի նկարագրություն», ժամանակացույց 2. «Մարման ժամանակացույց», ժամանակացույց 3. «Վարկային միջոցների առհանումը», 3-րդ ժամանակացույցի առդիր. «Զթույլատրվող ծախսերի ցանկ», ժամանակացույց 4. «Ծրագրի իրականացում և այլ հարցեր»:

4. Ծրագրի գլխավոր նպատակն է բարելավել ՀՀ կրթության և առողջապահության ոլորտները: Ծրագիրը ներառում է հետևյալը. ընդլայնել նախադպրոցական կրթության, բարձրագույն կրթության ու գիտության իրավական շրջանակը, բարելավել առողջապահական ծառայությունները, բարելավել նախադպրոցական հաստատությունների հասանելիությունը, զարգացնել ներառական կրթության և առողջապահական ծառայությունները, իրագործել կրթու-

թյան ոլորտի մարմինների կառավարման և կարողությունների բարելավումը, հզորացնել տվյալների օգտագործումը կրթության և առողջապահության ոլորտների կատարողականի կառավարման և այն ռեսուրսներով ապահովելու համար հիմնավորումներ ստանալու նպատակով, զարգացնել կրթության և առողջապահության ոլորտների կայուն ֆինանսավորումը միջնաժամկետ ծախսային ծրագրի համաձայն՝ 2020-2022թթ. ժամանակահատվածում, բարելավել մարդկային կապիտալը հանրային առողջության քաղաքականությունների միջոցով, որոնք նվազեցնում են ռիսկերը և մահացությունը երեխաների և երիտասարդության շրջանում:

5. Ըստ Վարկային համաձայնագրի՝ Ասիական զարգացման բանկը համաձայնում է իր սովորական կապիտալ ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել ինը միլիոն հարյուր հազար (9.100.000) եվրո գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ) և նշված գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթներին համապատասխան: Վարկն ունի մայր գումարի մարման 12 տարի ժամկետ և վարկի արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 2023 թվականի մայիսի 1-ը: Ծրագրի ավարտման ժամկետը մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ն է: Վարկի փակման ամսաթիվն է 2020 թ. մարտի 31-ը, կամ այլ ժամկետ, որը կարող է ժամանակ առ ժամանակ համաձայնեցվել Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

6. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, որոնցից են մասնավորապես.

- Ասիական զարգացման բանկին վճարել տոկոսագումար՝ Վարկի ժամանակ առ ժամանակ առհասարակ և դեռևս չվճարված մայր գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր տոկոսագումարի վճարման ժամանակահատվածի համար, հետևյալ գումարին հավասար չափով՝ EURIBOR և 0.60 %, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգի 3.02 բաժնում, հանած 0.10 %, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգի 3.03 բաժնում (հոդված II, բաժին 2.02),

- յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին վճարել տարեկան կտրվածքով 0.15%-ի չափով պարտավորավճար, որը հաշվարկվում է Վարկի ամբողջական գումարի նկատմամբ (հանած ժամանակ առ ժամանակ առհասարակ գումարները)՝ սկսած Վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող 60 օրվանից հետո (հոդված II, բաժիններ 2.03 և 2.04),

- սկսած 2023թ. մայիսի 1-ից մինչև 2034թ նոյեմբերի 1-ը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին վերադարձնել Վարկային հաշվից առհանված Վարկի Մայր գումարը 4.166667% չափաբաժնով (հոդված II, բաժիններ 2.03 և 2.05, Ժամանակացույց 2),

- ապահովել, որ Վարկի միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ Վարկային համաձայնագրում սահմանված դրույթներին համապատասխան (հոդված III, բաժին 3.01),

- Վարկի միջոցներն առհանել Վարկային համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի դրույթների համաձայն, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել ԱԶԲ-ի և ՀՀ միջև ձեռք բերված համաձայնությամբ (հոդված III, բաժին 3.02),

- Ծրագիրն իրականացնելիս կատարել կամ նախատեսել, որ կատարվեն Վարկային համաձայնագրի 4-րդ ժամանակացույցով սահմանված բոլոր պարտավորությունները (հոդված IV, բաժին 4.01),

- որպես Վարկային կանոնակարգի 7.01 և 7.04 բաժիններում նշված հաշվետվությունների և տեղեկատվության մաս՝ Ասիական զարգացման բանկին տրամադրել կամ ապահովել, որ տրամադրվեն Ասիական զարգացման բանկի կողմից ողջամտորեն պահանջված՝ Ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթում նշված թիրախների իրագործմանը և գործողությունների կատարմանն առնչվող բոլոր այդպիսի հաշվետվություններն ու տեղեկատվությունը (հոդված IV, բաժին 4.02),

- եթե վարկի միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել Վարկի Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ, ապա վերադարձնել վարկային միջոցների առհանման չափով Վարկի Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ Վարկային համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի 1-ին կետով նախատեսված կարգով (Ժամանակացույց 2, կետ 2, ենթակետ «ա»),

- եթե Վարկի միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել Վարկի Մայր գումարի առաջին ամսաթվի դրությամբ, ապա Վարկի Մայր գումարի առաջին մարման ամսաթվից հետո ցանկացած առհանման դեպքում այդ գումարները վերադարձնել նման առհանման ամսաթվին հաջորդող Վարկի Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին՝ Ասիական զարգացման բանկի կողմից սահման-

ված գումարի չափով՝ այդպիսի յուրաքանչյուր առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը Վարկային համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի 1-ին կետի աղյուսակում սահմանված Մայր գումարի տվյալ մարման ամսաթվի դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո ընկած Մայր գումարի մարման բաց թողնված ամսաթվից բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարն է. նման վճարվող գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտել՝ Վարկային համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի 4-րդ կետում նշված ցանկացած գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը (Ժամանակացույց 2, կետ 2, ենթակետ «բ»),

- բացառապես Վարկի Մայր գումարի ցանկացած մարման ամսաթվի դրությամբ վճարվելիք Մայր գումարները հաշվարկելու նպատակով Վարկի Մայր գումարի մարման ցանկացած ամսաթվին նախորդող 2 օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները դիտարկել որպես առհանված և չվճարված առհանման ամսաթվին հաջորդող Վարկի Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվի դրությամբ և վճարել առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվից սկսած՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին (Ժամանակացույց 2, կետ 3),

- Ասիական զարգացման բանկին ներկայացնել Վարկային հաշվից առհանում կատարելու մասին Ասիական զարգացման բանկի համար ընդունելի ձևով կազմված դիմում (Ժամանակացույց 3, կետ 2),

- Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումն Ասիական զարգացման բանկին ներկայացնելուց առաջ նշել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի հաշիվը (Դեպոզիտային հաշիվ), որին մուտքագրվում են Վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները (Ժամանակացույց 3, կետ 3, ենթակետ «ա»),

- Դեպոզիտային հաշվի հետ կապված՝ վարել առանձին հաշիվներ և գրանցումներ՝ Ասիական զարգացման բանկի համար ընդունելի հաշվապահական սկզբունքների համաձայն և Ասիական զարգացման բանկի պահանջով կազմակերպել Դեպոզիտային հաշվի

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձառությունը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են Ասիական զարգացման բանկի համար, համապատասխանում են աուդիտի միջազգային ստանդարտներին, կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրանց տեղական համարժեքին, և դրանք կազմելուց անմիջապես հետո, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան Ասիական զարգացման բանկի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու ամսաթվից 6 ամիս հետո, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների կարծիքները տրամադրել Ասիական զարգացման բանկին՝ անգլերենով (Ժամանակացույց 3, կետ 3, ենթակետ «բ»),

- չառհանել վարկային միջոցներ Վարկային համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի առդիրում նշված որևէ հոդվածի ֆինանսավորման նպատակով (Ժամանակացույց 3, կետ 4),

- ապահովել, որ Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթում և Քաղաքականության մատրիցայով սահմանված՝ Ծրագրի շրջանակներում ընդունված քաղաքականության բոլոր միջոցառումները շարունակեն ուժի մեջ մնալ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում և դրանից հետո (Ժամանակացույց 4, կետ 2),

- իրազեկել Ասիական զարգացման բանկին օգնություն տրամադրող բազմակողմ և երկկողմ այլ կազմակերպությունների հետ քաղաքականության վերաբերյալ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ծրագրի իրականացման վրա, ինչպես նաև Ասիական զարգացման բանկին տալ այդ քննարկումների արդյունքում քաղաքականության վերաբերյալ ստացված բոլոր առաջարկների մասով դիտողություններ ներկայացնելու հնարավորություն. մինչև այդպիսի որևէ առաջարկի վերջնական տարբերակի մշակումը և իրականացումը հաշվի առնել Ասիական զարգացման բանկի տեսակետները (Ժամանակացույց 4, կետ 3),

- ապահովել, որ Տեղական արժույթով համարժեք միջոցներն օգտագործվեն Ծրագրի նպատակներին համահունչ՝ որոշակի ծրագրերի և գործողությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով (Ժամանակացույց 4, կետ 4),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետությունը, Ծրագիրը իրականացնող մարմինը և իրականացնող մարմինները համապա-

տասխանեն Ասիական զարգացման բանկի Հակակոռուպցիոն քաղաքականությանը և ընդունեն, որ Ասիական զարգացման բանկն իրեն իրավունք է վերապահում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով հետաքննելու Ծրագրին առնչվող ցանկացած ենթադրյալ կոռուպցիոն, խարդախություն, դավադրություն կամ հարկադրանք պարունակող գործելակերպ, և համագործակցեն այդպիսի ցանկացած հետաքննության մասով և տրամադրեն նման հետաքննության բավարար կատարման համար անհրաժեշտ աջակցություն (Ժամանակացույց 4, կետ 5),

- ապահովել, որ Իրականացնող մարմինները կատարեն պարբերական վերանայումներ՝ Ծրագրի շրջանակը, իրականացման կազմակերպումը, առաջընթացը, ձեռքբերումները և ազդեցությունները գնահատելու նպատակով, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պատասխանատու լինի Ծրագրի մշտադիտարկման բոլոր տվյալները վարելու և ծրագրի օգուտները գնահատելու համար (Ժամանակացույց 4, կետ 6),

- Ասիական զարգացման բանկի կողմից Ծրագրի կիսամյակային վերանայումները դյուրացնելու նպատակով՝ ժամանակին տրամադրել կրթության և առողջապահության ոլորտների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն այնպիսի մանրամասնությամբ, որ կարող է ողջամտորեն պահանջվել Ասիական զարգացման բանկի կողմից, ինչպես նաև ապահովել, որ Ծրագիրը համակարգող մարմինը և իրականացնող մարմինները դյուրացնեն Վարկի առհանման հաջորդող 12 ամիսների ընթացքում պլանավորված՝ Ասիական զարգացման բանկի վերանայման առաքելությունը և համագործակցեն վերջինիս հետ, կրթության և առողջապահության ոլորտների շարունակական զարգացումը խթանելու համար անհրաժեշտ կամ ցանկալի համարվող հետագա բարեփոխումների և միջոցառումների, այդ թվում՝ Քաղաքականության մատրիցային համապատասխան համաձայնեցված հետծրագրային շրջանակային ցուցանիշների վերանայման և քննարկման նպատակով (Ժամանակացույց 4, կետ 6),

- ապահովել, որ Իրականացնող մարմինները վերանայեն և հաշվետվություն ներկայացնեն Ծրագիրը համակարգող մարմնին իրենց մասով Ծրագրի համապատասխան բաղադրիչների նպատակների շրջանակի, իրականացման կազմակերպման, ազդեցու-

թյան և ձեռքբերման մասին, որպեսզի Ծրագիրը համակարգող մարմնին տան Ասիական զարգացման բանկին ներկայացվող իր հաշվետվության պահանջները կատարելու հնարավորություն՝ համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների (Ժամանակացույց 4, կետ 7):

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է բյուջետային աջակցության վարկ և դրա հետ կապված Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը կապահովվի բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Մարդկային ներուժի զարգացման ընդլայնման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1491



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ
ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 դեկտեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության ներկայացուցիչ՝ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019
151

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) միջև ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 14-ին:

Համաձայնագրի հիման վրա վարկավորվող ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) գլխավոր նպատակն է ուժեղացնել Հայաստանի Հանրապետության ֆինակալ կայունությունը և զարգացնել ֆինանսական և կապիտալի շուկաները՝ մասնավորապես, պետական պարտքի և ֆինակալ ռիսկերի կառավարման ուժեղացման, փողի շուկայի իրացվելիության և ֆինանսական շուկայի թափանցիկության բարելավման, կորպորատիվ պարտքի և բաժնետիրական կապիտալի շուկաների զարգացման միջոցով:

Համաձայնագրով ԱԶԲ-ն համաձայնում է վերոհիշյալ նպատակի իրագործման համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրել վարկ՝ 36,506,000 եվրո գումարի չափով: Վարկն ունի մայր գումարի մարման 12 տարվա ժամկետ և վարկի արտոնյալ ժամանակահատված՝ 3 տարի: Ծրագիրն ակնկալվում է ավարտել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Համաձայնագրին նախորդել են Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրված 2017 թվականի հոկտեմբերի 27-ի «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. ենթածրագիր 1» (ընթացիկ գործառնություններ) և 2018 թվականի նոյեմբերի 9-ի «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրերը, որոնց հիման վրա ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանը նույն նպատակով տրամադրել է համապատասխանաբար՝ 40 000 000 ԱՄՆ դոլարի և 50 000 000 ԱՄՆ դոլարի չափով վարկեր:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- ԱԶԲ-ին **վճարել** տոկոսներ՝ մայր գումարի առհանված և դեռևս չվճարված գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր տոկոսադրույքի ժամանակահատվածի համար, որի չափը հավասար է EURIBOR և 0.60 %, ինչպես սահմանվում է Վարկային կանոնակարգի 3.02 բաժնում, հանած 0.10 %, ինչպես սահմանվում է Վարկային կանոնակարգի 3.03 բաժնում (հոդված II, բաժին 2.02),

- **վճարել** տարեկան կտրվածքով 0.15%-ի չափով պարտավորավճար, որը հաշվարկվում է վարկի ամբողջական գումարի նկատմամբ (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները)՝ սկսած Համաձայնագրի ամսաթվին հաջորդող 60 օրվանից հետո:

- Վարկի նկատմամբ տոկոսագումարը և մյուս վճարները կատարել կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին (հոդված II, բաժիններ 2.03 և 2.04),

- **վերադարձնել** վարկի մայր գումարը սկսած 2023թ. մայիսի 1-ից մինչև 2034թ. նոյեմբերի 1-ը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին Վարկային հաշվից առհանված 4.166667% մասնաբաժնով (հոդված II, բաժին 2.05, Հավելված 2),

- **ապահովել**, որ վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդված III, բաժին 3.01),

- **առհանել** վարկի միջոցները Համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով, որ դրանք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել Հայաստանի Հանրապետության և ԱԶԲ-ի միջև ձեռք բերված համաձայնությամբ (հոդված III, բաժին 3.02),

- ապահովել Ծրագրի գործադիր մարմնի և Ծրագիրն իրականացնող մարմինների համապատասխանությունը ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականությանը, ԱԶԲ-ին իրավունք վերապահել ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով հետաքննելու Ծրագրին առնչվող ցանկացած ենթադրյալ կոռուպցիոն, խարդախության, դավադրության կամ հարկադրանք պարունակող գործելակերպ և համագործակցել այդպիսի հետաքննության մասով (հոդված IV, բաժին 4.01, 4-րդ հավելվածի 5-րդ կետ),

- որպես Վարկային կանոնակարգի 7.01 և 7.04 բաժիններում նշված տեղեկությունների և հաշվետվությունների բաղկացուցիչ մաս ԱԶԲ-ին **տրամադրել կամ ապահովել**, որպեսզի տրամադրվեն Տեղական արժույթով համարժեք միջոցներին ու դրանց օգտագործ-

մանը և Ծրագրի իրագործմանը, այդ թվում՝ Քաղաքականության վերաբերյալ գրության մեջ նշված թիրախների իրագործմանը և գործողությունների կատարմանն առնչվող ողջամտորեն պահանջված բոլոր հաշվետվությունները և տեղեկությունները (հոդված IV, բաժին 4.02),

- եթե վարկի միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ, ապա **վերադարձնել** վարկային միջոցների առհանման չափով վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ Համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին կետին համապատասխան (Հավելված 2, Ժամանակացույց 2, կետ 2, ենթակետ «ա»),

- եթե վարկի միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել վարկի մայր գումարի մարման առաջին օրվա դրությամբ, ապա վարկի մայր գումարի առաջին մարման օրվանից հետո ցանկացած առհանման դեպքում **վերադարձնել** նման առհանմանը հաջորդող վարկի մայր գումարի յուրաքանչյուր մարման օրը՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված վճարման ենթակա գումարի չափով (Հավելված 2, Ժամանակացույց 2, կետ 2, ենթակետ «բ»),

- բացառապես վարկի մայր գումարի ցանկացած մարման օրվա դրությամբ վճարվելիք մայր գումարները հաշվարկելու նպատակներով վարկի մայր գումարի ցանկացած մարման օրվան նախորդող երկու օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները **դիտարկել** որպես առհանված և չվճարված՝ առհանման օրվան հաջորդող վարկի մայր գումարի մարման երկրորդ օրվա դրությամբ և **վճարել** առհանման օրվան հաջորդող վարկի մայր գումարի երկրորդ մարման օրվանից սկսած՝ մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին (Հավելված 2, Ժամանակացույց 2, կետ 3),

- Դեպոզիտային հաշվի հետ կապված՝ **վարել** առանձին հաշիվներ և գրանցումներ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան և վերջինիս պահանջով **կազմակերպել** աուդիտի միջազգային ստանդարտներին կամ ԱԶԲ-ի համար ընդունելի դրանց տեղական համարժեքին համապատասխան Դեպոզիտային հաշվի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձառությունը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար: Դրանք կազմելուց անմիջապես հետո, սակայն ամեն դեպքում ոչ ուշ, քան ԱԶԲ-ի պահանջից 6 ամիս հետո աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

աուդիտորների կարծիքները տրամադրել ԱԶԲ-ին՝ անգլերենով (Հավելված 3, կետ 3, ենթակետ «բ»),

- վարկային միջոցները չառհանել Համաձայնագրի 3-րդ հավելվածի առդիրում նշված որևէ ապրանքի ֆինանսավորման նպատակով (Հավելված 3, կետ 4),

-ապահովել, որ Տեղական արժույթով համարժեք միջոցներն օգտագործվեն Ծրագրի նպատակներին համահունչ որոշակի ծրագրերի և գործողությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով (Հավելված 4, կետ 4):

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով տրամադրվող վարկի միջոցներն ուղղվելու են բյուջետային պակասորդի ֆինանսավորմանը, և դրա հետ կապված Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը կապահովվի բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի նոյեմբերի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 դեկտեմբերի 2019 թվականի
ՄԴՈ-1492



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 թվապահի նոյեմբերի 11-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ
ՀԻՄՆՎԱԾ ՎԱՐԿ - ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ - BMZ 3010 00 579, ՎԱՐԿ N 29426»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 դեկտեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետու-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)2019

թյան և Վերականգնման վարկերի բանկի միջև «Քաղաքականության վրա հիմնված վարկ - Շրջակա միջավայրի պահպանություն - BMZ 3010 00 579, վարկ N 29426» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով սույն համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Քաղաքականության վրա հիմնված վարկ - Շրջակա միջավայրի պահպանություն - BMZ 3010 00 579, վարկ N 29426» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 11-ին Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության բարեփոխումներին աջակցելու նպատակով (Ծրագիր): Ծրագրի մանրամասները սահմանվելու են առանձին համաձայնագրով, որը պետք է ստորագրվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, որպես Ծրագրի իրականացման գրասենյակ՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության և Վերականգնման վարկերի բանկի (KfW) կողմից (այսուհետ՝ ՎՎԲ):

2. Համաձայնագրի անբաժան մասն են կազմում երեք հավելվածները, որոնցով սահմանվում են, համապատասխանաբար՝ տոկոսի փոփոխման հայտի ձևը, Վարկառուի իրավախորհրդատուի իրավաբանական եզրակացության ձևը և համապատասխանության մասով պարտավորությունները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է 40 000 000.00 եվրոն (քառասուն միլիոն եվրո) չգերազանցող գումարի վարկ՝ սույն համաձայնագրի 4.1 կետով հաշվարկված տոկոսադրույքին համապատասխան:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019
157

4. Վարկը Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ նաև՝ Վարկառու) տրամադրվում է 15 տարի մարման ժամկետով, որից 5 տարին՝ արտոնյալ, ընդ որում, վարկի մայր գումարի մարման գծով առաջին մարումը կատարվելու է 2024 թվականի նոյեմբերի 15-ին, իսկ վերջինը՝ 2034 թվականի նոյեմբերի 15-ին:

5. Համաձայնագրով ՎՎԲ-ն կարող է հիմնավոր հիմք հանդիսացող ցանկացած իրադարձություն առաջանալու դեպքում դադարեցնել Համաձայնագրի շրջանակներում մասհանումները: Մասնավորապես, այդպիսի իրադարձություններ են՝ ա) Վարկառուն ժամանակին չի կատարում ՎՎԲ-ի հանդեպ իր վճարային պարտավորությունները, բ) խախտվում են սույն Համաձայնագրով կամ Առանձին համաձայնագրով, ինչպես նաև սույն Համաձայնագրի ցանկացած իրավաբանորեն պարտադիր լրացուցիչ համաձայնագրով նախատեսված պարտավորությունները, գ) սույն Համաձայնագիրը կամ դրա որևէ մաս այլևս պարտադիր չէ Վարկառուի համար կամ չի կարող հարկադիր կարգով կատարվել Վարկառուի հանդեպ, դ) պարզվել է, որ որևէ հայտարարություն, հավաստում, տեղեկություն, ներկայացում կամ երաշխիք, որը ՎՎԲ-ն համարել է էական վարկը տրամադրելու և սպասարկելու համար, կեղծ է, ապակողմնորոշող կամ ոչ ամբողջական, ե) տեղի են ունենում այլ արտակարգ իրադարձություններ, որոնք հետաձգում կամ խոչընդոտում են սույն Համաձայնագրի շրջանակներում պարտավորությունների կատարումը, զ) Վարկառուն չի կարողանում ապացուցել, որ Վարկի միջոցներն օգտագործվել են սահմանված նպատակների իրականացման համար, է) Վարկառուն դադարում է իր վճարումները վարկատուներին, անվճարունակ է կամ սկսում է բանակցություններ իր մեկ կամ մի քանի վարկատուների հետ՝ մոբատորիումի, չվճարված պարտքի մասով պարտավորություններից ազատելու, վճարումները հետաձգելու կամ պարտքի մասով սպասարկում դադարեցնելու վերաբերյալ (կետ 11.1):

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Վարկի գումարի մասհանումը չեղարկելու, որի համար արդեն տոկոսադրույք է որոշվել, կամ Վարկի գումարն ընդհանրապես չմասհանելու, կամ մինչև մասհանման հայտ ներկայացնելու վերջ-

նաժամկետը չմասհանելու դեպքում ՎՎԲ-ի պահանջով անմիջապես նրան վճարել այնքան գումար, որքան ՎՎԲ-ին անհրաժեշտ կլինի Վարկի գումարի մասհանում չկատարելու արդյունքում կրած բոլոր կորուստները, ծախքերը կամ ծախսերը փոխհատուցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ մասհանում չկատարելը համարվում է ՎՎԲ-ի կողմից Համաձայնագրի խախտում (կետ 2.6),

- Համաձայնագրի ստորագրումից սկսած եռամսյա ժամանակահատվածի ընթացքում մինչև Վարկի լրիվ մասհանումը, կամ եթե կիրառելի է՝ մինչև Վարկից մասհանումների վերջնական դադարեցման ամսաթիվը կհասանելի մուծումներով յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վճարել չվերադարձվող պարտավորության վճար՝ տարեկան 0.25% չափով (կետ 3.1),

- նախքան առաջին մասնահանումը կամ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո, որը կհանդիսանա ավելի վաղ ամսաթիվ, ՎՎԲ-ին վճարել չվերադարձվող մեկանգամյա միանվագ կառավարման վճար՝ Վարկի գումարի 1,00%-ի չափով՝ անկախ այն հանգամանքից, թե Վարկը մասհանվել է ամբողջությամբ, միայն մասամբ, թե ընդհանրապես չի մասհանվել (կետ 3.2),

- ՎՎԲ-ին վճարել տոկոս՝ Համաձայնագրի 4.1-րդ կետի դրույթներին համապատասխան (կետ 4.1), իսկ վարկի մարումը կատարել մարման ժամանակացույցին համապատասխան (կետ 5.1),

- վճարվելիք տոկոսը վճարել մինչև մարման առաջին գումարի վճարումը կատարելու սահմանված ամսաթիվը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին, այնուհետև՝ ըստ մարման ժամանակացույցի՝ մարման առաջին գումարի վճարումը կատարելու սահմանված ամսաթվին, դրանից հետո՝ ըստ մարման ժամանակացույցի՝ մարման գումարների վճարումը կատարելու սահմանված ամսաթվին (կետ 4.3),

- կրել Վարկի մասհանման և մարման առնչությամբ առաջացած բոլոր ծախսերն ու ծախքերը, մասնավորապես՝ ուղարկման և փոխանցման հետ կապված ծախսերը (ներառյալ՝ փոխարկման վճարները), ինչպես նաև Համաձայնագրի սպասարկման և կատարման ապահովման հետ կապված և Համաձայնագրի հետ առնչվող ցանկացած այլ փաստաթղթի, ինչպես նաև դրանից բխող բոլոր իրավունքների առնչությամբ առաջացած բոլոր ծախսերն ու ծախքերը (կետ 9.2),

- կրել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից դուրս Համաձայնագրի կնքման և իրականացման առնչությամբ գոյացող հարկերը և այլ պետական գանձումները, իսկ դրանք ՎՎԲ-ի կողմից նախապես վճարված լինելու դեպքում դրանք ՎՎԲ-ի պահանջով, առանց ուշացման, փոխանցել ՎՎԲ-ի հաշվեհամարին կամ ՎՎԲ-ի կողմից նշված այլ հաշվեհամարի (կետ 9.3),

- նախապատրաստել, իրականացնել, գործարկել և սպասարկել Ծրագիրը՝ հիմնավոր ֆինանսական և տեխնիկական գործելակերպերին, բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխան և ըստ էության՝ Հայաստանի Հանրապետության և ՎՎԲ-ի միջև համաձայնեցված Ծրագրի հայեցակարգի համաձայն, անհրաժեշտության դեպքում և ՎՎԲ-ի համար ընդունելի պայմաններով և դրույթներով անմիջապես մատչելի դարձնել Ծրագրի իրականացման և Ծրագրի շինությունների օգտագործման և պահպանման համար պահանջվող միջոցները, շինությունները, ծառայությունները՝ ի լրումն Վարկից առաջացող հասույթների, ապահովել, որ Ծրագրի իրականացման հետ առնչվող ստորաբաժանումների և գործակալությունների աշխատանքներն իրականացվեն և համակարգվեն վարչական հիմնավոր քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան, վարել հաշվապահական գրքեր և գրանցումներ, կամ պահել այնպիսի հաշվապահական գրքեր և գրանցումներ, որոնք միանշանակ ցույց կտան Ծրագրի իրականացումը և առաջընթացը, հնարավորություն տալ ՎՎԲ-ին և նրա գործակալներին ցանկացած պահի ստուգելու այդ գրքերը և գրանցումները, ինչպես նաև Ծրագրի իրականացման հետ առնչվող բոլոր մնացած փաստաթղթերը, ՎՎԲ-ի պահանջով նրան տրամադրել Ծրագրի և դրա հետագա առաջընթացի վերաբերյալ ցանկացած և ամբողջ տեղեկությունները և գրանցումները, սեփական նախաձեռնությամբ անմիջապես ծանուցել ՎՎԲ-ին ցանկացած և բոլոր այն հանգամանքների մասին, որոնք խոչընդոտում կամ լրջորեն վտանգում են Ծրագրի իրականացումը կամ նպատակը, սեփական նախաձեռնությամբ և առանց անհարկի ուշացման տեղեկացնել ՎՎԲ-ին ցանկացած և բոլոր այն հանգամանքների մասին, որոնք խոչընդոտում կամ լրջորեն վտանգում են Ծրագրի նպատակի իրագործումը (կետ 10.1),

- ողջ ընթացքում պահպանել Համաձայնագրի Հավելված 3-ում (Համապատասխանության մասով պարտավորություններ) սահմանված պարտավորությունները (կետ 10.3),

- երաշխավորել, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության պարտավորությունները կսպասարկվեն մյուս այլ չապահովված և ոչ սուբորդինացված պարտավորություններին (Արտաքին պարտք) առնվազն համարժեք, և Հայաստանի Հանրապետությունը, օրենքով թույլատրելի սահմաններում, կապահովի այդ համարժեքությունը նաև բոլոր հետագա չապահովված և ոչ սուբորդինացված պարտավորությունների (Արտաքին պարտք) համեմատ (կետ 10.5),

- Համաձայնագիրը մասամբ կամ ամբողջությամբ դադարեցվելու դեպքում, վճարել վարկի չօգտագործման վճար և (կամ) վաղաժամկետ մարման վճար՝ սույն համաձայնագրի 2.6 կետի և 5.4 կետի «գ» ենթակետով սահմանված դրույթներին համապատասխան (կետ 11.3),

- չհանձնարարել, չփոխանցել, չզիջել կամ չգրավադրել Համաձայնագրից բխող որևէ պահանջ (կետ 14.5),

- դատական կարգով հետապնդումից, դատական որոշումների իրականացումից, կալանքից և այլ իրավական գործընթացներից Հայաստանի Հանրապետությանը կամ Հայաստանի Հանրապետության ակտիվներին անձեռնմխելիություն տրամադրվելու դեպքում առանց հետկանչման իրավունքի հրաժարվել այդպիսի անձեռնմխելիությունից՝ այն պահանջների մասով, որոնք բխում են սույն համաձայնագրից կամ կապված են դրա հետ (կետ 14.8),

- Համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ լուծել բացառապես արբիտրաժային տրիբունալի կողմից, որը պետք է բաղկացած լինի մեկ կամ երեք արբիտրներից, որոնք պետք է նշանակվեն և գործեն Առևտրի միջազգային պալատի արբիտրաժային կանոնների համաձայն, իսկ արբիտրաժային վարույթը պետք է իրականացվի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում (կետ 14.9),

- ՎՎԲ-ի պահանջով անհապաղ հասանելի դարձնել բոլոր վերաբերելի «իմացեք ձեր հաճախորդին» կամ նմանատիպ այլ տեղեկությունները Վարկառուի մասին, ՎՎԲ-ի պահանջով անհապաղ տրամադրել Ծրագրին առնչվող ամբողջ տեղեկությունները և Հայաստանի Հանրապետության ու նրա (ենթա)կապալառուների և այլ փոխկապակցված կողմերի այն փաստաթղթերը, որոնք ՎՎԲ-ին անհրաժեշտ կլինեն իր պարտավորությունների կատարման համար ուղղված պատժելի գործելակերպերի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի կանխարգելմանը, ինչպես նաև Վարկառուի հետ բիզնես հարաբերությունների շարունակական մոնիթորինգի համար, անհապաղ և սեփական

նախաձեռնությամբ ՎՎԲ-ին տեղեկացնել Ծրագրի հետ առնչվող՝ պատժելի գործելակերպի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման ցանկացած դեպքի մասին, ՎՎԲ-ին տրամադրել Ծրագրի և դրա առաջընթացի վերաբերյալ ցանկացած և ամբողջ տեղեկություններն ու հաշվետվությունները, հնարավորություն տալ ՎՎԲ-ին և իր գործակալներին ցանկացած ժամանակ ստուգելու Հայաստանի Հանրապետության և իր (ենթա)կապալառուների և այլ փոխկապակցված կողմերի փաստաթղթերը, որոնք վերաբերում են Ծրագրին, (Հավելված 3, կետ 2),

- անհամապատասխանության դեպքը պարզելու մասով լիովին համագործակցել ՎՎԲ-ի և նրա գործակալների հետ՝ անմիջապես, երբ ՎՎԲ-ն կամ Հայաստանի Հանրապետությունը կտեղեկանան կամ կասկածներ կունենան պատժելի գործելակերպերի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման որևէ դեպքի մասին: Մասնավորապես, անհապաղ և ողջամիտ մանրամասնությամբ պատասխանել ՎՎԲ-ի ցանկացած ծանուցմանը և ՎՎԲ-ի պահանջով տրամադրել այդ պատասխանի համար փաստաթղթային հիմնավորումներ (Հավելված 3, կետ 4),

- չկնքել որևէ գործարք կամ չներգրավել Ծրագրի հետ կապված որևէ գործունեության մեջ, որը կհամարվի պատժամիջոցների խախտում (Հավելված 3, կետ 5) և այլն:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն Համաձայնագրի շրջանակում Կառավարության դիմումին կից փաստաթղթերում առկա ՀՀ ֆինանսների նախարարության հիմնավորման և 2019 թվականի նոյեմբերի 27-ին Կառավարության պաշտոնական ներկայացուցչի 04/5-2/19671-2019 թվակիր գրությամբ Սահմանադրական դատարան ներկայացված բացատրության մեջ նշվում է. «Վարկային միջոցներն ուղղվելու են «2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված պակասորդի ֆինանսավորմանը (պակասորդի ընդհանուր գումարը՝ 151 600 000.0 հազ. ՀՀ դրամ), ուստի վարկային միջոցների ժամանակին ստացումը կարևոր նշանակություն ունի պետական բյուջեի կատեգորիաներով նախատեսված ծախսերի ֆինանսավորման տեսանկյունից»:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է բյուջետային աջակցության վարկ և դրա հետ կապված Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազ-

գային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը կապահովվի բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Քաղաքականության վրա հիմնված վարկ - Շրջակա միջավայրի պահպանություն - BMZ 3010 00 579, վարկ N 29426» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1493



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 թվականի նոյեմբերի 22-ին երեվանոստ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 դեկտեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 22-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապե-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019

տության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հարկաբյուջետային, տնտեսական և պետական հատվածի կառավարման զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հարկաբյուջետային, տնտեսական և պետական հատվածի կառավարման զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 22-ին Երևանում:

Վարկային համաձայնագիրն ունի երկու առդիր և հավելված:

2. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) Վարկային համաձայնագրով սահմանված կարգով տրամադրում է քառասունհինգ միլիոն ութ հարյուր հազար (45,800,000) եվրո գումարի չափով վարկ (Վարկ), որը ժամանակ առ ժամանակ կարող է փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով:

Բանկը վերոհիշյալ ֆինանսավորումը տրամադրում է, ի թիվս այլնի, հետևյալ հիմքերով՝

- գործողություններ, որոնք Վարկառուն արդեն իսկ ձեռնարկել է Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի շրջանակներում, որոնք նկարագրված են Վարկային համաձայնագրի 1-ին առդիրի 1-ին բաժնի Ա կետում,

- Վարկառուի կողմից մակրոտնտեսական քաղաքականության համապատասխան շրջանակի հաստատումը:

Ըստ սույն գործում առկա նյութերի՝ Վարկի միջոցներն ուղղվելու են «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված պակասուրդի ֆինանսավորմանը: Վարկի մարման ժամկետը 25.5 տարի է, որից արտոնյալ ժամկետը՝ 14.5 տարի:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) վճարել սկզբնավճար, որը հավասար է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25 տոկոս),

բ) վճարել պարտավճար, որը հավասար է Վարկի չառհանված մնացորդի տարեկան մեկ քառորդ տոկոսին (0.25 տոկոս),

գ) Վարկի մայր գումարի վճարները կատարել Վարկային համաձայնագրի 2-րդ առդիրով սահմանված ժամկետներում և հերթական մարման մասնաբաժիններով,

դ) Բանկի պահանջով Վարկային համաձայնագրով սահմանված կարգով ապահովել աուդիտ իրականացնելը և ներկայացնել հաշվետվություն:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է բյուջետային աջակցության վարկ և դրա հետ կապված Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը կապահովվի բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 22-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հարկաբյուջետային, տնտեսական և պե-

տական հատվածի կառավարման զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1494



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-Ի ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ
ԱՑՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 1243-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 դեկտեմբերի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, համաձայն Սահմանադրության 74-րդ հոդվածի, 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40, 41, 69 և 71-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդ-

հանուր իրավասության դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ **Օրենսգիրք**) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի «Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու կարգը» վերտառությամբ 1243-րդ հոդվածը սահմանում է

«1. Պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները:

2. Պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին»:

Գործի քննության առիթը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի համապատասխանաբար 2019 թվականի հունիսի 7-ին և հուլիսի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի 2019 թվականի օգոստոսի 28-ի ՄԴԱՈ-86 որոշմամբ նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը մինչև դատաքննությունն սկսվելը միավորվել են Սահմանադրական դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով դիմումները և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգիրքը և մի շարք այլ վերաբերելի իրավական ակտեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողների դիրքորոշումները

1.1. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող հոդվածի 1-ին մասի կարգավորումները սահմանափակում են պարտատերերի սե-

փականության իրավունքը, քանի որ, ի տարբերություն պարտապանի ժառանգների, «պարտատերերի կողմից ժառանգության բացման մասին տեղեկանալու և իրենց պահանջները ներկայացնելու համար գործնականում առկա չէ որևէ ընթացակարգ, որի միջոցով պարտատերը կարող է տեղեկանալ հաճախորդի մահվան փաստի վերաբերյալ»:

Զուգահեռներ անցկացնելով Օրենսգրքի 1228-րդ հոդվածի հետ՝ դիմողը եզրակացնում է, որ օրենսդիրը ժառանգների կողմից ժառանգության ընդունման գործընթացի ժամանակ պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու համար նախատեսել է ոչ հավասար պայմաններ ժառանգների և պարտատերերի համար, որի արդյունքում ժառանգները Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված ժառանգման իրավունքի իրականացման ժամանակ գտնվում են ավելի բարենպաստ պայմաններում, քան պարտատերերը, որոնք լիարժեք հնարավորություն չեն ունենում պաշտպանելու Սահմանադրության նույն հոդվածով նախատեսված սեփականության իրավունքը:

Դիմողի համոզմամբ ժառանգները, ազգակցական կապի մեջ գտնվելով ժառանգատուի հետ, տեղյակ են լինում վերջինի մահվան փաստի մասին և հաճախ նաև իրենց գործողություններով, մասնավորապես՝ պարտապանի ողջ լինելու վերաբերյալ պարտատիրոջ մոտ կասկած չառաջացնելու չարամիտ դիտավորությամբ, Օրենսգրքի քննության առարկա հոդվածով նախատեսված վեցամսյա ժամկետում ընթացիկ պարտավորությունները կատարելով, չեզոքացնում են պարտատերերի կողմից ժառանգատուի մահվան փաստի վերաբերյալ տեղեկանալու հավանականությունը, իսկ վեցամսյա ժամկետի ավարտից հետո, օգտվելով **օրենքի բացից**, հրաժարվում են պարտավորությունների մնացած մասի կատարումից:

Դիմողը գտնում է՝ եթե ժառանգության ընդունման հարաբերություններում ժառանգները պատասխանատվություն կարող են կրել միայն իրենց անցած գույքի արժեքի սահմաններում, և նրանց մոտ բացակայում է վնաս կրելու ռիսկը, ապա պարտատերերի պարագայում՝ սահմանված ժամկետում համապատասխան պահանջ չներկայացնելու դեպքում նրանք զրկվում են Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված իրենց սեփականության իրավունքից:

Դիմողի կարծիքով պարտատերերի կողմից պարտապանի ժառանգներին պահանջներ ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բաց թողնելը հարգելի համարելու կամ ժամկետը վերականգնելու վերաբերյալ Օրենսգրքում համապատասխան ընթացակարգերի բացակայությունը չի ապահովում պարտատերերի սեփականության իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:

Դիմողը պնդում է, որ Օրենսգրքի 1243-րդ հոդվածն այնքանով, որքանով չի կարգավորում պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն, հակասում է Սահմանադրության 28, 29 և 60-րդ հոդվածներին:

1.2. Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը բացառություն չի նախատեսում այն իրավիճակի համար, երբ պարտատերը տեղյակ չէ և օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել տեղեկանալու պարտապանի մահվան փաստի մասին:

Դիմողը նշում է, որ գործող օրենսդրությունը «**որևէ նորմ չի նախատեսել**, որի համաձայն՝ **պարտատերը փոխառությամբ գումար տրամադրելու պահից սկսած պարտավոր է միջոցներ ձեռնարկել** (օրինակ յուրաքանչյուր ամիս հավաստիանա, արդյոք պարտապանը ողջ է, թե մահացել է), **որպեսզի մահվան օրվանից սկսած իր պահանջ ներկայացնելու վեցամսյա ժամկետը պահպանի**»:

Ըստ դիմող դատարանի՝ գործող օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ փոխառուի (պարտապանի) մահից հետո փոխառության պայմանագրի մի կողմը՝ փոխառուի իրավահաջորդը՝ նրա ժառանգը, հայտնվում է ավելի բարվոք և պաշտպանված վիճակում, քան փոխատուն (պարտատերը): Պարտապանի ժառանգը, տեղեկանալով պարտքի առկայության մասին, իրավունք ունի չընդունել ժառանգությունը, իսկ պարտատերը պարտապանի մահվան մասին տեղյակ չլինելու դեպքում իր կամքից անկախ **գրկվում է սեփականության իրավունքից**:

Դիմողի համոզմամբ բոլոր այն դեպքերում, երբ գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհաստատի, որ պարտատերը տեղեկացված է եղել պարտապանի մահվան և, դրանով պայմանավորված ժառան-

գուրջան բացման վերաբերյալ, ապա Օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վեցամսյա ժամկետի հաշվարկի սկիզբն անհրաժեշտ է համարել պարտատիրոջ կողմից ժառանգության բացման վերաբերյալ տեղեկանալու օրը:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ՝ դիմողը եկել է հետևության, որ **քննարկվող կարգավորումները** սեփականության իրավունքի պաշտպանության արդյունավետ իրացումն ապահովելու առումով թերի են, և հենց ընթացակարգային կարգավորումներն են դարձել արգելակող գործոն, հետևաբար, պետք է սահմանել իրավաչափ նպատակ հետապնդող բացառություն հավասարակշռելու պարտատիրոջ և մահացած պարտապանի ժառանգի շահերը:

Ըստ դիմողի՝ առկա է Օրենսգրքի վիճարկվող հոդվածի երկու մասերի հակասությամբ պայմանավորված իրավական անորոշություն այն առումով, որ պարտատիրոջ կողմից պահանջները պետք է ներկայացվեն թե՛ ժառանգության բացման օրվանից հետո վեցամսյա ժամկետում և թե՛ մինչև ժառանգության վկայագրի տրամադրումը, մինչդեռ նշված ժամկետները միմյանցից տարբեր են: Այսինքն՝ վիճարկվող դրույթները **միևնույն վարքագծի դրսևորման համար տարբեր ժամկետներ են նախատեսում**, ինչն էլ հանգեցնում է իրավական անորոշության և հետագայում՝ դրանով պայմանավորված դատական պաշտպանության իրավունքի խախտման:

Դիմողը կարծում է, որ Օրենսգրքի «1243-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ այնքանով, որքանով ա) չեն նախատեսում բացառություն այն իրավիճակի համար, երբ պարտատերը տեղյակ չէ և օբյեկտիվորեն չունի պարտապանի մահվան փաստի մասին տեղեկանալու հնարավորություն, բ) առկա է իրավական անորոշություն այն առումով, թե պահանջները պետք է ներկայացնել ժառանգության բացման օրվանից հետո վեցամսյա ժամկետում, թե մինչև ժառանգության վկայագրի տրամադրումը, հակասում են ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը նշում է, որ ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով ամրագրված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահո-

վել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, այն է՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի, երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար:

Պատասխանողը Օրենսգրքի մի շարք հոդվածների վերլուծության արդյունքում եզրակացնում է, որ վերջինս հիմնվում է, ի թիվս այլնի՝ նաև կամքի ինքնավարության սկզբունքի վրա, որը ենթադրում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքը իրենց հայեցողությամբ և «իրենց շահերին համապատասխան ընտրելու համապատասխան վարքագծի թույլատրելի տարբերակներից մեկը», և մասնակիցներն առավելապես իրենք են որոշում՝ մտնել լ որևէ քաղաքացիաիրավական հարաբերության մեջ, թե ոչ, օգտվել լ իրենց իրավունքից, թե ոչ, պահանջել լ իրենց օգտին պարտավորության կատարում, թե ոչ: Ուստի, ժառանգը, որպես կամքի ինքնավարության դրսևորում, կարող է չընդունել ժառանգությունը կամ հրաժարվել արդեն ընդունած ժառանգությունից իր համար չառաջացնելով որևէ իրավունք կամ պարտականություն:

Պատասխանողը, համաձայնելով ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին, նույնպես գտնում է, որ օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջների բավարարման դեպքում կիսախտվեն ժառանգի իրավունքները, քանի որ նա փաստացի կզրկվի ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը որոշելու իր իրավունքից:

Ըստ պատասխանողի՝ Օրենսգրքի քննարկվող հոդվածի 1-ին մասով ժառանգատուի պարտատերերի համար պահանջներ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանելն ինքնանպատակ չէ. այն կոչված է ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը և որոշակիությունը՝ պայմանավորված ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով: Ընդունելով ժառանգությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն

է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պատասխանատվություն կրելու ժառանգատուի պարտավորությունների համար:

Պատասխանողը նշում է, որ եթե ժառանգության զանգվածը, որպես կանոն, պարզ է լինում ժառանգի համար, **ապա ժառանգատուի պարտավորությունների պարագայում՝ վերջիններիս վերաբերյալ որոշակի պատկերացում ժառանգը կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում պարտատերերի կողմից ներկայացվեն համապատասխան պահանջներ:**

Ըստ պատասխանողի՝ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի սահմանափակում դնելը նպատակաուղղված է սահմանված ժամկետի ընթացքում ժառանգին հնարավորություն տալու որոշել ընդունել ժառանգությունը, թե ոչ, կամ, օրինակ՝ պարտատերերի կողմից նշված ժամկետում պահանջ ներկայացվելու դեպքում հրաժարվել ժառանգությունից, թե ոչ: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է ինչպես նոտարին դիմում ներկայացնելու, այնպես էլ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգությունն ընդունելու պարագայում: Ինչ վերաբերում է «ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո» արտահայտությանը, ապա օրենսդիրը նպատակ է ունեցել ընդգծելու, որ քննարկվող ծախսերը հատուցվում են ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետն անցնելուց և ժառանգների կազմը հայտնի դառնալուց հետո:

Վերլուծելով Օրենսգրքի առանձին նորմեր՝ պատասխանողը պնդում է, որ **սահմանված են կառուցակարգեր, որոնց միջոցով անձը պետք է տեղեկացվի ժառանգի մահվան փաստի մասին, ինչը տվյալ դեպքում իրականացվում է նոտարի կողմից ժառանգության բացման վերաբերյալ մամուլում հաղորդագրություն հրապարակելու միջոցով:**

Պատասխանողը համոզված է, որ պարտատերերի կողմից իրենց պահանջները ներկայացնելու ժամկետային սահմանափակումը երաշխավորում է ժառանգի ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը որոշելու իրավունքը, իսկ ինչ վերաբերում է պարտատերերի կողմից ժառանգատուի մահվան փաստի վերաբերյալ տեղյակ չլինելու հանգամանքին, ապա նշված փաստին տեղեկացվելու կառուցակարգեր նախատեսված են Օրենսգրքի 1239-րդ հոդվածում:

Պատասխանողը նշում է նաև, որ Օրենսգրքի 1243-րդ հոդվածը որևէ անորոշություն չի պարունակում և հստակ է, քանի որ նշված նորմի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը, շարունակելով 1-ին մասի տրամաբանությունը, պարտատերերին իրենց պահանջը ներկայացնելու լրացուցիչ հնարավորություն է տալիս:

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Դիմողներն, ըստ էության, բարձրացնում են ժառանգատուի պարտատերերի կողմից վերջինիս ժառանգներին պահանջներ ներկայացնելու համար բարենպաստ պայմանների օրենսդրական ամրագրման բացակայության հարցը, ինչն արտահայտվում է պարտատերերի կողմից սահմանված ժամկետում ժառանգներին պահանջներ չներկայացնելու դեպքում բաց թողնված ժամկետը հարգելի համարելու կամ վերականգնելու անհնարինությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննարկել սեփականության և դատական պաշտպանության իրավունքների իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրման, նշված իրավունքների սահմանափակման համաչափության և որոշակիության սկզբունքների երաշխավորվածության համատեքստում (համապատասխանաբար՝ Սահմանադրության 60, 61, 75, 78 և 79-րդ հոդվածներ): Այդ առումով սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է պարզել.

ա) արդյո՞ք վիճարկվող դրույթները միջամտություն են պարտատերերի սեփականության իրավունքին, եթե՝ այո, ապա արդյո՞ք նման միջամտությունը հետապնդում է իրավաչափ նպատակ,

բ) եթե վիճարկվող իրավակարգավորումների հետևանքով սահմանափակվում է պարտատերերի սեփականության իրավունքը, ապա արդյո՞ք այն համաչափ է հետապնդվող նպատակին,

գ) արդյո՞ք վիճարկվող դրույթները համապատասխանում են իրավական որոշակիության վերաբերյալ սահմանադրական պահանջներին,

դ) արդյո՞ք վերականգնման ոչ ենթակա վեցամսյա ժամկետը սահմանափակում է պարտատերերի դատական պաշտպանության իրավունքը:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ սեփականության իրավունքը բացարձակ իրավունք չէ, և միջամտությունն այդ իրավունքին պետք է լինի օրինական, նպատակունենա պաշտպանել հանրային շահը կամ այլոց իրավունքները և ազատությունները և լինի համաչափ:

Օրենսգրքի 877 և 887-րդ հոդվածների համաձայն՝ փոխառության (վարկային) պայմանագրով մեկ կողմը (փոխատուն կամ վարկատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամական միջոցներ, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը՝ վարկային պայմանագրի դեպքում պարտավորվելով դրանից վճարել նաև տոկոսներ: Փոխառության կամ վարկի գումարի ամբողջական կամ մասնակի վերադարձը չապահովելու դեպքում փոխատուն (վարկատուն) չվերադարձված միջոցների և չստացված տոկոսների (իրավաչափ ակնկալիքի) մասով փաստացի զրկվում է սեփականության իրավունքից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ դեպքերում պարտատերերի սեփականության իրավունքից զրկվելն Օրենսգրքի վիճարկվող դրույթների անմիջական հետևանք չէ, այլ այդ դրույթներով նախատեսվում է ընդամենը սեփականության իրավունքի պաշտպանության ժամկետային սահմանափակում, որն իրավաչափ է, եթե հետապնդում է հանրային շահի կամ այլոց իրավունքների պաշտպանության նպատակ:

4.2. Սահմանադրության 60-րդ հոդվածը (2-րդ մաս) երաշխավորում է նաև ժառանգելու իրավունքը, որն ընդգրկում է ոչ միայն ժառանգությունն ընդունելու, այլև դրանից հրաժարվելու անձի իրավունքը:

Օրենսգրքի 1184-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն):

Օրենսգրքի 1225 և 1227-րդ հոդվածների համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն բացվելուց հետո 6 ամսվա ընթացքում ընդունի, ընդ որում՝ այն պայմանով կամ

վերապահումներով ընդունել չի թույլատրվում և մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ են մտնում, ի թիվս այլնի, նաև ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքային իրավունքները և պարտականությունները:

Նշված դրույթներից հետևում է, որ պարտատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության ժամկետային սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ կանխել անորոշությունն ու անարդարությունը, ինչը կարող է առաջանալ ժառանգության ընդունումից հետո ժառանգներին պահանջներ ներկայացվելու դեպքում: Ժառանգատուի պարտատերերի կողմից ժառանգներին պահանջներ ներկայացնելու համար սահմանված վեցամսյա իրավադարձեցնող ժամկետը ոչ միայն նպատակ ունի կանոնակարգել քաղաքացիական շրջանառությունը, այլև ժառանգին հնարավորություն է տալիս ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի և ժառանգատուի պարտավորությունների հաշվառմամբ որոշելու իր ժառանգման իրավունքի իրացման հարցը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես գտնում է, որ միայն այն փաստը, որ դիմումատուի պահանջները պետք է ենթարկվեն վաղեմության ժամկետին, ինդիք չի առաջանցում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) տեսանկյունից: Վաղեմության ժամկետի ինստիտուտն անդամ պետությունների իրավական համակարգերի ընդհանուր գիծն է, որը ձգտում է երաշխավորել հանրային անվտանգությունը՝ ժամկետներ սահմանելով գործողությունների համար, ինչպես նաև կանխել անարդարությունները, որոնք կարող էին տեղի ունենալ, եթե դատարանները ստիպված լինեին որոշումներ կայացնել հեռու անցյալին վերաբերող իրադարձությունների վերաբերյալ (Զոլոտասն ընդդեմ Հունաստանի (Zolotas v. Greece No.2) 66610/09, 29/01/2013 վճիռ, կետ 43; Ջ.Ա. Պի (Օքսֆորդ) ՍՊԸ-ն և Ջ.Ա. Պի (Օքսֆորդ) լենդ ՍՊԸ-ն ընդդեմ Մեծ Բրիտանիայի [J.A. Pye (Oxford) Ltd et J.A. Pye (Oxford) Land Ltd c. Royaume-Uni] [ՄՊ], թիվ 44302/02, կետ 68, ՄԻԵԴ 2007-III; Ստաբբինգսը և ուրիշներն ընդդեմ Մեծ Բրիտանիայի [Stubbings et autres c. Royaume-Uni], 22 հոկտեմբերի 1996, կետ 51, Վճիռների և որոշումների ժողովածու 1996-IV):

ԵԱՔԴ/2190/02/15 քաղաքացիական գործով քննության առարկա հարցի վերաբերյալ նման դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը, նշելով. «պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի սահմանափակում դնելը նպատակաուղղված է ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու իր իրավունքի իրացման համար բավարար հստակություն և որոշակիություն մտցնելուն, որպեսզի սահմանված ժամկետի ընթացքում ժառանգը հնարավորություն ունենա որոշել ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ, կամ օրինակ՝ պարտատերերի կողմից նշված ժամկետում պահանջ ներկայացվելու դեպքում հրաժարվել ժառանգությունից, թե՛ ոչ: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է ինչպես նոտարին դիմում ներկայացնելու, այնպես էլ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգությունն ընդունելու պարագայում: Երկու դեպքում էլ ժառանգը պետք է իրական պատկերացում ունենա ժառանգության զանգվածի վերաբերյալ»: Վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է. «Ընդունելով ժառանգությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պատասխանատվություն կրելու ժառանգատուի պարտավորությունների համար: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը պետք է հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմի, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ: Եթե ժառանգության զանգվածի կազմը, որպես կանոն, պարզ է լինում ժառանգի համար, այլ է իրավիճակը ժառանգատուի պարտավորությունների պարագայում: **Վերջիններիս վերաբերյալ որոշակի պատկերացում ժառանգը կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում պարտատերերի կողմից ներկայացվեն համապատասխան պահանջներ**»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ժամկետներն առհասարակ և քննարկվող դեպքում՝ մասնավորապես նպատակ ունեն ոչ միայն **ժամանակի առումով կանոնակարգելու** քաղաքացիական շրջանառությունը, այլ նաև **ապահովելու** քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց իրավունքների իրացման հնարավորությունը, **դրդելու** անձանց կատարելու իրենց պարտակա-

նությունները, ինչպես նաև **խթանելու** խախտված իրավունքների ժամանակին պաշտպանությունը: Քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտները պետք է շահագրգռված լինեն, որպեսզի իրենց իրավունքները և պարտականություններն իրացվեն ոչ միայն պատշաճ կերպով, այլև ժամանակին:

4.3. Երկու դիմողն էլ գտնում են, որ վիճարկվող իրավադրույթներով խախտվում է մահացած պարտապանի ժառանգի և պարտատերերի շահերի հավասարակշռությունը, ինչի հետևանքով խախտվում է նաև վերջիններիս սեփականության իրավունքը:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրության կարևորագույն սկզբունքներից են քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների հավասարությունը, **կամքի ինքնավարությունը** և գույքային ինքնուրույնությունը, սեփականության անձեռնմխելիությունը, **քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտությունը**, խախտված իրավունքների վերականգնման ապահովումը և այլն: **Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց:**

Մահմանադրական դատարանը փաստում է, որ քաղաքացիական օրենսդրությունը չի պարտավորեցնում ժառանգներին փնտրել ժառանգատուի պարտատերերին ժառանգության բացման մասին տեղյակ պահելու նպատակով: Ժառանգը կարող է տարբեր օբյեկտիվ պատճառներով չիմանալ ժառանգատուի պարտքերի մասին և պարտատերերին տեղյակ պահել, կամ տեղյակ լինել մահացած ժառանգատուի պարտքերի մասին, սակայն ինչ-ինչ պատճառներով չտեղեկացնել (այդ թվում՝ չարամիտ դիտավորություն ունենալով) ժառանգության բացման մասին:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ դիտարկվող «պարտապան-պարտատեր» իրավահարաբերություններում պարտապանի ժառանգների կողմից ժառանգությունն ընդունելու արդյունքում վնաս կրելու ռիսկը վերաբերում է պարտատերերին, ուստի վերջիններս որպես շահագրգիռ անձինք, պետք է համապատասխան վարքագիծ դրսևորեն: Օրենքը չի արգելում պարտատիրոջը որոշակի պարբերականությամբ ինքնուրույն տեղեկանալու պարտապանի մասին, և վերջինիս կողմից պարտավորություն չկատարելը պետք է դրդի պարտատիրոջն ակտիվ գործողություններ կատարելուն, ընդ որում՝ պարտատերերի պահանջները կարող են

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019

ներկայացվել և բավարար միջոցների առկայության և սահմանված ժամկետը բաց չթողնելու պայմաններում հատուցվել ինչպես ժառանգների կողմից ժառանգությունն ընդունելու, այնպես էլ ժառանգությունը չընդունելու պարագայում, նույնիսկ ժառանգների բացակայության դեպքում պարտատերերը կարող են հավակնել իրենց հասանելիք պարտքերը ստանալուն:

Օրենսգրքի 242-րդ հոդվածից բխում է, որ գրավով ապահովված պարտավորության դեպքում, պարտատերը հնարավորություն է ունենում գրավադրված գույքի իրացման միջոցով հասնել ժառանգության բացման պահին առկա իր պահանջների բավարարմանը, որովհետև գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը, և գրավատուի իրավահաջորդը զբաղեցնում է գրավատուի տեղը և կրում նրա բոլոր պարտականությունները, եթե այլ բան նախատեսված չէ գրավատուի հետ համաձայնությամբ:

4.4. Ինչ վերաբերում է դիմողների այն պատճառաբանությանը, որ վիճարկվող դրույթները միևնույն վարքագծի դրսևորման համար ժառանգների և պարտատերերի համար տարբեր ժամկետներ են նախատեսում, ինչն էլ հանգեցնում է իրավական անորոշության և, դրանով պայմանավորված՝ պարտատերերի դատական պաշտպանության իրավունքի խախտման, Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված միևնույն վարքագիծը դրսևորում են քաղաքացիական իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտներ, որոնք օժտված են իրավունքների և պարտականությունների տարբեր ծավալով և ունեն շահագրգռվածության տարբեր աստիճաններ: Կողմերի շահերն ի սկզբանե տարբեր են. պարտքերի վերադարձման հարցում շահագրգիռ կողմ է միայն պարտատերը, որն էլ պետք է նախաձեռնի օրենքով չարգելված այնպիսի ակտիվ գործողություններ, որոնք ուղղված կլինեն իր իրավունքների պաշտպանությանը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ ՄԴՈ-1479 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ՝ «վիճարկվող իրավակարգավորումները բավարար չափով որոշակի են. անձի համար լիովին կանխատեսելի են իր

կողմից դրսևորվելիք վարքագծի հետևանքները, ուստի շահագրգիռ անձը պետք է ինքնուրույն նախաձեռնի բոլոր այն գործողությունները և կատարի այն պահանջները, որոնք անհրաժեշտ են իրավունքի...» իրացման համար:

4.5. Անդրադառնալով դիմող դատարանի այն փաստարկին, որ առկա է **իրավական անորոշություն**, թե պարտատերերը ե՞րբ պետք է ներկայացնեն իրենց պահանջները՝ ժառանգության բացման օրվանից հետո վեցամսյա ժամկետում, թե՞ մինչև ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի վիճարկվող 1243-րդ հոդվածի 1-ին մասն **ուղղակիորեն** սահմանում է ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում պարտատերերի պահանջները ներկայացնելու իրավունքը: Միանշանակ և որոշակի է, որ ժառանգությունն ընդունելու համար նախատեսված վեցամսյա ժամկետն սկսում է հոսել ժառանգության բացման օրվանից, որը համընկնում է ժառանգատուի մահվան փաստի հետ, և այդ նույն օրվանից էլ պարտատերերը կարող են ներկայացնել իրենց պահանջները:

Օրենսգրքի 1245-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է ժառանգի դիմումի հիման վրա: Իսկ ըստ նույն Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 1-ին մասի ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին է տրվում ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Այնուհետև, Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 2-րդ մասում Օրենսդիրը մանրամասնում է. «Ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության դեպքում ժառանգության իրավունքի վկայագիրը **կարող է տրվել մինչև ժառանգության բացման օրվանից վեց ամիս լրանալը**, եթե առկա են ստույգ տվյալներ, որ վկայագիր ստանալու համար դիմած անձանցից բացի, ժառանգության կամ դրա համապատասխան մասի նկատմամբ այլ ժառանգներ չկան»:

Հետևաբար, կախված կոնկրետ իրավիճակից **պարտատերերը, սկսած ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում, կարող են ներկայացնել իրենց պահանջները ժառանգներին ինչպես ժառանգության վկայագիր ստանալուց առաջ, այնպես էլ հետո**: Իսկ պարտքերի փաստացի հատուցումը հնարավոր է ժառանգների կողմից նշված վկայագիր ստանալուց հետո, երբ ժառանգներն արդեն կողմնորոշված կլինեն ժառանգությունն ընդունել-չընդունելու հարցում:

4.6. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիմումում ներկայացված դատավարական նախապատմությունը վկայում է, որ 2010 թվականից 2013 թվականը բանկը քաղաքացու հետ կնքել է երկու վարկային համաձայնագիր և, որպես սահմանված պարտավորությունների կատարման ապահովում, գրանցել է Բանկի գրավի իրավունքը: Հարկ է նշել, որ քաղաքացուն տրամադրվել էր վարկ մինչև 13.11.2015թ. մարման ժամկետով: Բանկի դիմումի հիման վրա 31.03.2017թ. ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան բաժնի պետի տեղեկանքից պարզ է դարձել, որ Վարկառուն մահացել է 07.06.2014թ.: Բանկը 10.04.2017թ. հայցադիմում է ներկայացրել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան մահացած վարկառուի ժառանգ հանդիսացող անձի դեմ՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած լինելու հիմքով գումարի բռնագանձման և բռնագանձումը գույքի վրա տարածելու պահանջների մասին:

Նմանօրինակ իրավիճակի մասին է վկայում նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումում ներկայացված դատավարական նախապատմությունը, ըստ որի՝ 10.08.2014թ. մի քաղաքացի մյուսին փոխառությամբ գումար է տրամադրել մինչև 30.10.2014թ. վերադարձնելու պայմանով, սակայն վերջինս սահմանված ժամկետում գումարը չի վերադարձրել: 07.05.2015թ. փոխատուն դատարան հայց է ներկայացրել փոխառությամբ տրված գումարի բռնագանձման պահանջի մասին: Պարզվել է, որ 26.12.2014թ. փոխատուն մահացել է: 19.09.2015թ. փոխատուն դիմում է ներկայացրել դատարան մահացած անձի իրավահաջորդից գումարի բռնագանձման պահանջի մասին:

Ակներև է, որ երկու դեպքում էլ վարկատուն և փոխատուն փոխառուի ժառանգներին ուշացումով են ներկայացրել իրենց պահանջները՝ բաց թողնելով պահանջներ ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը: Վերջիններս ժամկետի բացթողումը պատճառաբանել են նրանով, որ նշված անձանց մահվան փաստերի մասին տեղեկանալու հնարավորություն չեն ունեցել:

4.7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ցանկացած վարկային կամ փոխառության պայմանագիր կնքելիս կողմերը համաձայնության են գալիս նաև այն հարցում, թե ինչ հաճախականությամբ պետք է կատարվի վարկի մարումը, և, որպես

կանոն, սահմանվում է մարման որոշակի պարբերականություն: Եթե պայմանագրից բխող պարտականությունները ժամանակին չեն կատարվում, նույնիսկ մեկ անգամ, ապա վարկ կամ փոխառություն տրամադրող կազմակերպությունը պետք է միջոցներ ձեռնարկի պատճառներն իմանալու համար, քանի որ պատճառներից մեկը կարող է նաև լինել վարկառուի կամ փոխառուի մահը: Կողմերի միջև հաղորդակցման կարգը կարգավորվում է վարկային կամ փոխառության պայմանագրով, և առաջին հերթին վարկատուի կամ փոխառուի շահերից է բխում պայմանագրով այդ կարգը սահմանելը:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «լ» կետի համաձայն՝ Կենտրոնական բանկի խորհրդի իրավասության մեջ է մտնում «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերն ընդունելը, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների գործունեության օրինակելի կանոնակարգը հաստատելը, բանկերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգին՝ վարկային ռեգիստրին վարկային կազմակերպությունների մասնակցության կարգը և պայմանները սահմանելը:

Եվ քանի որ վարկային պայմանագրերին առնչվող հարցերը գտնվում են Կենտրոնական բանկի իրավասության տիրույթում, վերջինս իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել կողմերի միջև հաղորդակցման այնպիսի կարգ կամ նվազագույն պահանջներ, որ վարկառուի կամ փոխառուի մահվան դեպքում ապահովվի վարկատուի կամ փոխառուի գույքային իրավունքների ժամանակին պատշաճ պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ելնելով Օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի ազատության սկզբունքից՝ վարկային կամ փոխառության պայմանագրի կողմերի միջև վերջիններիս համաձայնությամբ կարող են սահմանվել հաղորդակցության կարգին վերաբերող այնպիսի դրույթներ, որոնք ուղղված կլինեն վարկառուի կամ փոխառուի մահվան մասին ժամանակին տեղեկանալու, հետևաբար՝ ժամանակին վարկատուի կամ փոխառուի շահերի պաշտպանությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64, 69 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

6 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1495



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՀ ՄԱՄՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 դեկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրված «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019

Էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրությունն (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 2-ին Աստանայում՝ ԱՊՀ մասնակից պետությունների միջև առևտրատնտեսական փոխգործակցության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Արձանագրությունն ունի 3 Հավելված՝ Հավելված 1. «Պահանջներ իրավաբանական անձանց եկամուտների առանձին տեսակների և իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկության կազմին և կառուցվածքին ներկայացվող», Հավելված 2. «Պահանջներ ֆիզիկական անձանց եկամուտների առանձին տեսակների և իրավաբանական ու ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկության կազմին ու կառուցվածքին ներկայացվող», Հավելված 3. «Պահանջներ գույքի առանձին տեսակների և դրա սեփականատերերի (տիրապետողների) վերաբերյալ տեղեկության կազմին և կառուցվածքին ներկայացվող»:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինն ինքնուրույն մշակի տեղեկության ձևավորման ու մշակման համար նախատեսված ծրագրային ապահովումը,
- երաշխավորել, որ ՀՀ իրավասու մարմինն ապահովի փոխանցվող տեղեկության պատշաճ պաշտպանությունը, որի հասանելիությունն ու տարածումը սահմանափակված են Արձանագրության մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան,
- ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը սահմանի և համաձայնեցնի Արձանագրության 1-ին հոդվածում նշված տեղեկությունը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(96)2019

ներկայացնելու ձևաչափերը, ինչպես նաև կապի ուղիներով այն փոխանցելու կարգը դրանք հաստատելով ԱՊՀ մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների Համակարգող խորհրդի նիստին՝ հետագայում տեղադրելով Անկախ պետությունների համագործակցության Գործադիր կոմիտեի կայքում,

- ապահովել, որ ՀՀ և Արձանագրության մասնակից պետությունների միջև տեղեկության փոխանակումը կատարվի ամեն տարի՝ հաշվետու տարվա արդյունքներով (սկսելով այն հաշվետու տարվա համար տեղեկության տրամադրումից, որում Արձանագրությունն ուժի մեջ է մտնում), ինչպես նաև նախորդ տարիների համար ավելի վաղ տրամադրված տեղեկության հստակեցման արդյունքներով՝ Արձանագրության հավելվածներով նախատեսված ժամկետներին համապատասխան,

- ապահովել, որ փոխանակման մասնակից պետությունների իրավաբանական անձանց եկամուտների առանձին տեսակների վերաբերյալ տեղեկության փոխանակումը կատարվի փոխանակման մասնակից ՀՀ իրավասու մարմնի կողմից՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա օգոստոսի 1-ից ոչ ուշ,

- ապահովել, որ փոխանակման մասնակից ՀՀ իրավասու մարմնի կողմից փոխանակման մասնակից պետության քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձանց և (կամ) հարկային ռեզիդենտներին փոխանակման մասնակից ՀՀ տարածքում վճարված եկամուտների առանձին տեսակների վերաբերյալ տեղեկության փոխանակումը կատարվի հաշվետու տարվան հաջորդող տարվա օգոստոսի 1-ից ոչ ուշ,

- ապահովել, որ փոխանակման մի մասնակից պետության քաղաքացի հանդիսացող փոխանակման մեկ այլ մասնակից պետության տարածքում գրանցված (գտնվող) գույքի սեփականատիրոջ (տիրապետողի) բնակության վայրի (գտնվելու վայրի) հասցեի վերաբերյալ տեղեկությունը տրամադրվի Անկախ պետությունների համագործակցության Գործադիր կոմիտեի կայքում տեղադրված ձևաչափով,

- ապահովել, որ տեղեկության փոխանակման ժամանակ ՀՀ իրավասու մարմինն օգտագործի անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների այնպիսի տեսակների տեղեկատու, որոնց նկատմամբ իրավունքները գրանցված են փոխանակման մասնակից պետությունների քաղաքացիների անունով՝ Անկախ պետությունների համագործակցության Գործադիր կոմիտեի կայքում տեղադրված նկարագրությանը համապատասխան,

• ապահովել, որ ներկայացված տեղեկության մեջ հարցման հատկանիշի առկայության դեպքում փոխանակման մասնակից ՀՀ քաղաքացի հանդիսացող փոխանակման մեկ այլ մասնակից պետության տարածքում գրանցված (գտնվող) գույքի սեփականատիրոջ (տիրապետողի) բնակության վայրի (գտնվելու վայրի) հասցեի վերաբերյալ տեղեկությունը որպես պատասխան ուղարկվի այդ փոխանակման այլ մասնակից պետության իրավասու մարմնին հաշվետու տարվան հաջորդող տարվա օգոստոսի 1-ից ոչ ուշ, իսկ փոխանակման մասնակից ՀՀ քաղաքացի հանդիսացող գույքի սեփականատիրոջ (տիրապետողի) հասցեն որոշելու անհնարինության դեպքում տեղեկացվի հասցեի վերաբերյալ տվյալների բացակայության մասին:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրված «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1496



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 69-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 96-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 դեկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)/2019
189

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքը (այսուհետ՝ նաև Օրենսգրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի մարտի 16-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 31-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Ճանաչման հայցը» վերտառությամբ 69-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

Օրենքի՝ սույն գործով վիճարկվող «Վնասի հատուցման նախապայմանը» վերտառությամբ 96-րդ հոդվածը սահմանում է.

«Վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը,

որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ սույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է նույն դատարանի 2019 թվականի հունիսի 18-ի ՎԴ/10890/05/18 գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, վերլուծելով Օրենսգրքի և Օրենքի համապատասխան դրույթները, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Դիմողի դիրքորոշումները

Հղումներ կատարելով Սահմանադրության 61, 62 և 75-րդ հոդվածներին, վկայակոչելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1121 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, վերլուծության ենթարկելով Օրենսգրքի և Օրենքի վիճարկվող նորմերով նախատեսված իրավակարգավորումները՝ դիմողը գտնում է, որ Օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու անձի մտադրության ներառված չլինելու մասով, և Օրենսգրքի 96-րդ հոդվածի իրավակարգավորման պայմաններում ապահովված չէ վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրացման արդյունավետությունը: Մասնավորապես, դիմողի կարծիքով «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը՝ այնքանով որքանով հնարավորություն չի տալիս վիճարկելու վարչական մարմնի այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մտադրության հիմքով, խախտում է բարոյական վնասի հատուցման սահմանադրական իրավունքը...», ինչը հետևանք է նաև Օրենքի վիճարկվող իրավակարգավորմամբ «ստեղծված երկաստիճան համակարգ»-ի, որով չի ապահովվում վնասի հատուցման արդյունավետ ընթացակարգ:

Ըստ դիմողի՝ նման համակարգը « ... մեկ ընդհանուր խնդիրը քննելու համար մարդուն պարտադրում է անցնել երկու վարույթ: Ընդ որում, իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ երկու դեպքում էլ, որպես կանոն, հարցի քննությունը չի ավարտվում վարչական վարույթով և դատական քննության անհրաժեշտություն է առաջանում: Արդյունքում վարչական մարմնի սպառված վարչարարության դեմ պաշտպանվելու և խախտված իրավունքը լիարժեք վերականգնելու գործընթացը, որպես կանոն, անցնում է վեց դատական ատյան (չհաշված միջանկյալ վարչական վարույթը), որպիսի գործընթացը տևում է տարիներ»: Դիմողի կարծիքով « ... վարչական մարմնի սպառված վարչարարության վիճարկումն ինքնին չի վերականգնում մարդու խախտված իրավունքը: Ըստ այդմ էլ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը իրավական շահագրգռվածության լրացուցիչ պայմաններ է սահմանում: Ուստի վնասի առկայության դեպքում տվյալ վարչարարության վիճարկման միակ նպատակը վնասի հատուցում ստանալն է: Ուստի վարչարարության իրավաչափությունը և դրանով հասցված վնասի հատուցման հարցերը խիստ փոխկապակցված են և մեկի քննությունը կախված է մյուսից»: Դիմողը եզրահանգում է, որ « ... վնասի հատուցման երկաստիճան այս համակարգի միակ նպատակը վարչական մարմնի վարչարարության ոչ իրավաչափությունը հաստատվելուց հետո նույն վարչական մարմնին իր կողմից հասցված վնասի հատուցման հարցը քննարկելու հնարավորություն ընձեռելն է»: Հետևաբար, ինչպես նշում է դիմողը՝ « ... հաշվի առնելով վարչական մարմինների իրավակիրառ պրակտիկան և պաշտոնատար անձանց իրավագիտակցության մակարդակը, նույն վարչական մարմնի կողմից իր իսկ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հասցված վնասի հատուցման պահանջի քննության օբյեկտիվության նկատմամբ լուրջ կասկածներ կարող են առաջանալ»: Դիմողի կարծիքով « ... վնասի հատուցման պահանջը վարչական մարմնի սպառված վարչարարության իրավաչափության հարցի հետ մեկտեղ քննելու օրենսդրական արգելքը չի հետապնդում արդարացված շահ և խախտում է վնասի հատուցման և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքների արդյունավետությունը», իսկ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով էլ (մասնավորապես՝ ՎԴ/0277/05/09 գործով) արձանագրվել է, որ « ... վարչարարության հետևանքով վնասի հատուցման

պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրության պահանջներին և « ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածով սահմանված կարգավորումներն իրենց իրավական բովանդակությամբ արհեստական խոչընդոտներ չեն ստեղծում անձի իրավունքների արդյունավետ իրականացման համար»:

Պատասխանողը գտնում է, որ վարչական մարմնի համապատասխան գործողությունները կամ անգործությունը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո հայցվորը զրկված չէ ստանալու իր իրավունքների խախտումների կապակցությամբ բարոյական (ոչ նյութական) վնասի փոխհատուցում:

Ըստ պատասխանողի իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող « ընթացակարգային բարդություններ, բյուրոկրատական քաշքշուքներ, պաշտոնատար անձանց իրավագիտակցության մակարդակ, վեց դատական ատյաններ, տարիներ տևող գործընթացներ» եզրույթները չեն կարող լինել իրավական անորոշության, իրավական նորմերի հակասահմանադրականության արդյունք, և « օրենքով նախատեսված իրավական ընթացակարգային որոշ գործընթացների անհարկի երկարաձգումները թեև կարող են նվազեցնել մարդու իրավունքները և օրինական շահերն ողջամիտ ժամկետում արդյունավետ պաշտպանելու հնարավորությունը, այնուամենայնիվ, նման պայմաններում դրանք չեն կարող համարվել Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)2019
193

1) վիճարկվող իրավակարգավորումներով արդյոք երաշխավորվում է հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման արդյունավետ կառուցակարգեր և ընթացակարգեր,

2) արդյոք Վարչական դատավարության օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և ոչ նյութական վնասի հատուցման պահանջները միևնույն գործի շրջանակներում միաժամանակյա քննելը կբխի վնասի հատուցման հիմնական իրավունքի արդյունավետ պաշտպանության նպատակից:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատում է Սահմանադրության 62 և 75-րդ հոդվածների տեսանկյունից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Մարդուն պատճառված վնասի հատուցման հնարավորությունը հիմնարար իրավունք է: Վնասի (այդ թվում՝ ոչ նյութական) հատուցման իրավունքն իր ամրագրումն է ստացել թե՛ միջազգային, և թե՛ ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (կից արձանագրություններով) սահմանվում են ոչ միայն հիմնական իրավունքներ ու ազատություններ, այլև՝ դրանց խախտման դեպքում արդարացի փոխհատուցման իրավունք:

Սահմանադրության 3 և 62-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ վնասի, այդ թվում՝ հանրային իշխանության մարմինների կողմից իրականացված իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հնարավորությունը ոչ միայն իրավունք է, այլև՝ մարդու իրավունքների պաշտպանության կարևոր սահմանադրական սկզբունք, որի իրացման անմիջական պատասխանատուն, Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իշխանության մարմիններն են:

Վնասի հատուցման կառուցակարգի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում: Մասնավորա-

պես՝ ամփոփելով վնասի հատուցման միջազգային-իրավական պրակտիկան և համադրելով դրա սահմանադրաիրավական բովանդակության հետ՝ Սահմանադրական դատարանը գտել է

1) անօրինական գործողությունների՝ հանցագործության և իշխանության չարաշահման արդյունքում վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են, և նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք (ՄԴՈ-929),

2) բարոյական վնասը և բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից, և մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը (ՄԴՈ-1121),

3) բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը պետք է օրենսդրորեն հստակ ամրագրվեն, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում և կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ և արդարացի փոխհատուցումը (ՄԴՈ-1121):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) Հայաստանի Հանրապետությանն առնչվող իր մի շարք վճիռներում անձին պատճառված բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում չտրամադրելը գնահատել է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից արձանագրություններով, այսուհետ՝ նաև Կոնվենցիա) համապատասխան դրույթների խախտում: Մասնավորապես, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության (գանգատ թիվ 23978/06, 27.11.2012 թ.) և Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (գանգատ թիվ 22999/06, 12.06.2012 թ.) գործերով կայացված վճիռներով ներպետական օրենսդրության վկայակոչմամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցում չտրամադրելը ճանաչվել է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի խախտում: Իսկ Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով կայացված վճռում ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ « ... Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթների՝ 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման հետևանքով առաջ եկող ոչ նյութական

վնասի փոխհատուցումը սկզբունքորեն պետք է հասանելի լինի հնարավոր պաշտպանության միջոցների շարքում: Նույն վճռում արձանագրվել է նաև, որ տվյալ գործով դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմելու վատ վերաբերմունքի հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման համար: Անդրադարձ է կատարվել նաև Կոնվենցիայի 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածին, ինչի առնչությամբ ընդգծվել է, որ «Դատարանը կրկնում է, որ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակն է փոխհատուցման իրավունք ընձեռել անձանց, ովքեր դատապարտվել են դատական սխալի հետևանքով և երբ հետագայում այդ դատավճիռը չեղյալ է հայտարարվել ազգային դատարանների կողմից՝ նոր կամ նոր երևան եկած որևէ փաստի հիմքով»: Նույն վճռով ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև հետևյալը. «Ինչ վերաբերում է թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների համապատասխանության հարցին, ապա Դատարանը գտնում է, որ թեև այս դրույթը երաշխավորում է փոխհատուցման վճարումը տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, այն չի ենթադրում, որ փոխհատուցում չի վճարվում, եթե ազգային օրենքը կամ պրակտիկան չեն նախատեսում նման փոխհատուցում»:

Միաժամանակ, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով կայացված վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ արձանագրելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում, գտել է, որ 5-րդ հոդվածի 5-րդ կետը չպետք է մեկնաբանվի այնպես, որ ընձեռվի միայն նյութական վնասի հատուցում. նման իրավունք պետք է ընձեռվի նաև ցանկացած հյուծման, անհանգստության, հուսախաբության համար, ինչն անձը կարող էր կրել 5-րդ հոդվածի այլ կետերի խախտման արդյունքում:

Վնասի հատուցման ներպետական իրավակարգավորման սկզբունքային մոտեցումներ են ամրագրված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec (2006) 8 հանձնարարականում, որով անդամ պետություններին պատվիրակվում է.

- փոխհատուցում հատկացնել ֆիզիկական և հոգեբանական վնասների վերականգնման և բուժման համար,
- փոխհատուցում սահմանել եկամտի կորստի, հուղարկավորման ծախսերի և կերակրողին կորցնելու համար, սահմանել նաև փոխհատուցում ցավի և տանջանքների համար,
- սահմանել միջոցներ հանցագործությամբ գույքին պատճառված վնասի փոխհատուցման համար:

4.2. Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչ-յուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Հիշյալ նորմի բովանդակությունից բխում է, որ հանրային իրավահարաբերությունների շրջանակներում պատճառված վնասը ենթակա է հատուցման որոշակի սահմանադրական սկզբունքներին համապատասխան, մասնավորապես.

1) յուրաքանչյուր ոք ունի վնասի հատուցման անվիճելի իրավունք բոլոր այն դեպքերում, երբ վնասը պատճառվել է վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողությամբ կամ անգործությամբ,

2) յուրաքանչյուր ոք իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք ունի, երբ այն սահմանված է օրենքով,

3) վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Սույն գործով վիճարկվող և դրանց հետ փոխկապակցված այլ իրավակարգավորումների բովանդակության վերլուծությունը վկայում է, որ վարչարարությամբ անձին պատճառված վնասի հատուցման իրավունքը, ընդհանուր առմամբ, կարող է իրացվել հետևյալ իրավական նախապայմանների և միմյանց հաջորդող գործընթացների շրջանակներում.

1) վնասի հատուցում, նախ՝ կարող է իրականացվել այն դեպքերում, երբ անձին վնաս պատճառած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվի (Օրենքի 96-րդ հոդված),

2) վնասի հատուցման պահանջ դիմումի միջոցով պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այն (Օրենքի 100-րդ հոդված),

3) վարչական մարմնի կողմից վնասի հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելը կամ դիմումը չքննարկելը կարող են բողոքարկվել օրենքով սահմանված ընդհանուր կարգով (Օրենքի 102-րդ հոդվածի 2-րդ մաս),

4) անձին վնաս պատճառած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը կարող են ոչ իրավաչափ ճանաչվել իրավասու վարչական դատարան ճանաչման հայց ներկայացնելու միջոցով (Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մաս),

5) ճանաչման հայցի շրջանակներում անձը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը (Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մաս),

6) ճանաչման հայցի շրջանակներում անձը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե նա արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ (Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մաս),

7) ճանաչման հայցի շրջանակներում անձը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե, ի թիվս այլնի, մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում (Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ):

Այսպիսով, դիմումում բարձրացված խնդրի առնչությամբ վարչարարությամբ անձին պատճառված վնասի հատուցման գործընթացի իրավակարգավորման տրամաբանությունը հանգում է նրան, որ վնասի հատուցումը ստացել է բացառապես նյութաիրավական դրսևորում՝ այդ իրավունքի իրացման օրենքով սպառիչ սահմանված նախապայմանների շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչարարությամբ անձին պատճառված վնասի հատուցման օրենքով սահմանված կառուցակարգը՝ իրավակարգավորման վերոհիշյալ ընդհանուր սկզբունքներով հանդերձ, միտված է երաշխավորելու Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների իրացումը, այն է՝ նախատեսելու վնասի հատուցման պայմանները, կարգը, և վնասի հատուցման արտադատական և դատական կարգեր նախատեսելով՝ օրենսդիրը չի խախտել Սահմանադրության հիշյալ պատվիրանները:

4.3. Սույն գործի շրջանակներում վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս, հաշվի առնելով դիմողի հարցադրումները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, նախ այն դիտարկել վնասի հատուցման իրավակարգավորման ընդհանուր կառուցակարգերի շրջանակներում՝ պարզելու համար տարբեր իրավական կարգավիճակով օժտված սուբյեկտներով պայմանավորված այն օբյեկտիվ առանձնահատկությունները, որպիսիք առկա են, մի դեպքում՝ քաղաքացիաիրավական, մյուս դեպքում՝ վարչաիրավական հարաբերություններից բխող վնասի, այդ թվում և՛ ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ վեճերի լուծման հիմքում: Այս առումով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վնասի հատուցման կառուցակարգ նախատեսված է նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում: Սակայն այդ կառուցակարգերի ընդհանուր համեմատական վերլուծությունն անհրաժեշտ է հանրային իրավահարաբերություններից բխող վնասի հատուցման առանձնահատկությունները բացահայտելու տեսանկյունից:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ ինչպես վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, այնպես էլ քաղաքացիաիրավական նորմերի կիրառելիության շրջանակները կարգավորող նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը, որպես կանոն, կիրառելի չէ (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մաս): Նույն օրենսգրքի 162.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Մինչև նույն ժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ բաժնի՝ վարչարարությամբ պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական վնասի հատուցման հիմքերը և կարգը սահմանող նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կառուցակարգը չի կարող նույնացվել քաղաքա-

ցիական իրավահարաբերությունների շրջանակներում առաջացող վնասի հատուցման կառուցակարգի հետ, քանի որ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունները հանրային իրավահարաբերություններ են, որոնք բնութագրվում են հանրային իրավունքից բխող հատկանիշներով: Մասնավորապես՝ հիշյալ իրավահարաբերությունների պարտադիր մասնակից է վնաս պատճառած վարչական մարմինը՝ օժտված հանրային-իշխանական լիազորություններով (Օրենքի 95-րդ հոդված): Վերջինիս և վնաս կրած անձի միջև իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ և բավարար է միայն տուժողի կողմից վնասի հատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումի ներկայացումը (Օրենքի 100-րդ հոդված), այսինքն՝ չի պահանջվում իրավահարաբերության երկու կողմերի կամասարտահայտության այնպիսի ազատություն, որն առկա է քաղաքացիաիրավական հարաբերություններում (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի դրանից, վարչական մարմին համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում վերջինս պարտավոր է իրականացնել վնասի հատուցման կապակցությամբ հանրային-իշխանական համապատասխան լիազորություններ, այսինքն՝ վարչարարություն, որը եզրափակվում է հատուցման պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ վարչական ակտի ընդունմամբ (Օրենքի 102-րդ հոդված) և կարող է վիճարկվել ընդհանուր կարգով: Այսինքն՝ հանրային իրավահարաբերությունների բնույթով պայմանավորված՝ առանձնահատուկ և բազմափուլ են իրավական այն գործընթացները, որոնք առաջանում են վարչական մարմնի գործողությամբ (անգործությամբ) պայմանավորված այս կամ այն վնասի հատուցման համար:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ քաղաքացիաիրավական հարաբերությունների բնագավառում վնասի հատուցումն իր էությամբ քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցի կիրառում է, մինչդեռ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը՝ օրենքով նախանշված նախապայմանների պահպանմամբ, հանրային-իշխանական լիազորություններով պայմանավորված պարտականություն է:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վնասի հատուցման կառուցակարգի տարբերակված օրենսդրական կանոնակարգումը ելնելով կոնկրետ իրավահարաբերությունների և

դրանցում ընդգրկված սուբյեկտների իրավական կարգավիճակի առանձնահատկություններից, ունի որոշակի սահմանադրական նպատակ և միտված է անձին պատճառված վնասի հատուցման իրավունքի արդյունավետ իրացման երաշխավորմանը:

4.4. Անդրադառնալով դիմողի այն հարցադրմանը, համաձայն որի՝ Օրենսգրքի վիճարկվող՝ 69-րդ հոդվածի 3-րդ մասը հնարավորություն չի ընձեռում վիճարկելու վարչական մարմնի այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը հատկապես ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մտադրության հիմքով, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բարձրացված խնդիրը դիտարկել վնասի՝ որպես պատասխանատու սուբյեկտի որոշակի գործողության կամ անգործության արդյունքում առաջացած հետևանքի գնահատման և խախտված իրավունքի վերականգնման անհրաժեշտության տեսանկյունից՝ ելնելով Սահմանադրության 62-րդ հոդվածի բովանդակությունից և հատկապես վնասի հատուցման պայմանները և կարգն օրենքով սահմանելու սահմանադրական պահանջի իրացման անհրաժեշտությունից:

Սահմանադրության 62-րդ հոդվածի բովանդակության վերլուծությունը վկայում է, որ վնասի հատուցման իրավունքի էության հիմքում «վնաս» եզրույթն ունի ընդհանրական իրավական բովանդակություն, և Սահմանադրության մակարդակում վնասի նյութական և ոչ նյութական տեսակները տարբերակված չեն:

Այդուհանդերձ, վնասի հատուցման հիմնական իրավունքը որպես այդպիսին որևէ սահմանափակման ենթակա չէ: Թեև վնասի հատուցման պայմանները և կարգը, համաձայն Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության, սահմանվում են օրենքով, ինչը ենթադրում է, մի կողմից՝ այս հիմնական իրավունքի էության անխախտելիության (Սահմանադրության 80-րդ հոդված) երաշխավորում, ինչպես նաև որևէ պայմանի կամ կարգի համապատասխանություն Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջներին՝ հաշվի առնելով այս հիմնական իրավունքի սահմանափակման ոչ ենթակա լինելը, այդուհանդերձ, դատավարական կառուցակարգերի տարբերակումը՝ ըստ պատճառված վնասի բնույթի, սահմանադրորեն չարդարացված խոչընդոտ է ստեղծում ճանաչման հայցով հետապնդվող նպատակների արդյու-

նավետ իրացման համար: Նախ՝ հիմնավոր չէ, որ օրենսդիրն արդարացված է համարել միայն նյութական վնասի հատուցման մտադրությունը՝ որպես արդարացի շահագրգռվածության հիմք: Չնայած այն հանգամանքին, որ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ճանաչման հայցի շրջանակներում ոչ իրավաչափ ճանաչելը որոշակի նախադրյալների առկայությամբ պայմանավորելը որպես օրենսդրի նպատակ, արդարացված է Սահմանադրության տեսանկյունից՝ հաշվի առնելով տվյալ հայցատեսակի առանձնահատկությունները և դրա հարաբերակցությունն այլ հայցատեսակների հետ, այդուհանդերձ, սահմանափակման ոչ ենթակա հիմնական իրավունքի իրացումը չի կարող պայմանավորվել վնասի բնույթով, ուստի օրենսդիրը պետք է երաշխավորի դատական պաշտպանության հնարավորություն նաև ճանաչման հայցի դեպքում՝ հավասարապես նաև ոչ նյութական վնասի համար ընդհանրապես, այլ ոչ թե միայն հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու նպատակով: Նման տարբերակումը չունի օբյեկտիվ հիմք, ինչը նշանակում է, որ **Օրենսգրքում առկա է օրենքի բաց**, որը հակասում է Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին:

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ ճանաչման հայցի նպատակն այլ իրավական միջոցների սպառված լինելու պայմաններում՝ **անկախ վնասի բնույթից, ի թիվս այլնի, նաև հանրային իրավահարաբերություններում վնասի հատուցման երաշխավորումն է**, ինչը շահագրգիռ անձի համար հիմք կհանդիսանա այնուհետ՝ Օրենքի 7-րդ բաժնում նախատեսված ընթացակարգերի շրջանակներում վնաս պատճառած վարչական մարմնին համապատասխան պահանջ ներկայացնելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, առաջնորդվելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով, իրավակիրատ պրակտիկան պետք է առաջնորդվի Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասում երաշխավորված իրավունքի էության անխախտելիության սկզբունքով, ինչը Սահմանադրության 80-րդ հոդվածի պահանջն է, այսինքն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց **ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ**

վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Այսինքն՝ օրենքով պետք է սահմանվեն միայն այդպիսի վնասի հատուցման **պայմանները և կարգը**, ինչը չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասից անմիջականորեն բխող, այդ թվում՝ ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման արգելափակում:

4.5. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող 96-րդ հոդվածով սահմանված նախապայմանի հիմնական նպատակն է, մի կողմից՝ վնասի հատուցման հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական նախադրյալների ստեղծումը՝ հատկապես արտադատական կարգով այդ իրավունքն առավել սեղմ ժամկետում իրականացնելու համար, մյուս կողմից՝ վարչական մարմինների և դատարանների անհարկի ծանրաբեռնման կանխարգելումը:

Ակնհայտ է, որ Օրենքով և հատուկ օրենքներով նախատեսված կառուցակարգերի, հատկապես սեղմ և կոնկրետ ժամկետների շրջանակներում վնասի հատուցման պահանջի՝ վարչական կարգով կենսագործումը համանուն հիմնական իրավունքի պաշտպանության տեսանկյունից ավելի արդյունավետ միջոց է, քան վարչական դատարանում ընդհանուր առումով ողջամիտ ժամկետում գործի քննության շրջանակներում: Մյուս կողմից, վնասի հատուցման նախադրյալ է վնաս պատճառելը, այսինքն՝ ոչ իրավաչափ, իսկ բացառիկ դեպքերում՝ իրավաչափ վարչական (կամ ռեալ ակտերի) առկայությունը: Պարզ է, որ այն վարչական մարմին վնասի հատուցման պահանջ ներկայացնելը, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը (Օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մաս), ընդ որում, առավել պարզեցված եղանակով՝ ընդհանուր կարգով ներկայացվելիք դիմումի միջոցով այդ պահանջը ներկայացնելը (Օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ մաս) միտված է ավելի դյուրին դարձնելու վնասի հատուցման հիմնական իրավունքի իրացումը:

Բացի դրանից, վնասի հատուցման դիմումի քննությունն այն վարչական մարմնի կողմից, որն իրազեկված է տվյալ հարցի մասին, հնարավորություն է տալիս առավել հնարավոր արդյունավետությամբ երաշխավորել վնասի հաշվարկումը և հատուցումը՝ հիմք ընդունելով այդ մարմնի ոչ իրավաչափ վարչարարությանը տրված առկա գնահատականը, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև իրավաչափ

վարչարարության հետևանքները: Մինչդեռ, տվյալ հարցին դեռևս ոչ իրազեկ վարչական մարմինները կամ դատարանն առնվազն դեռևս պետք է իրազեկվեն հարցի վերաբերյալ: Ոչ իրազեկ մարմիններին և վարչական ակտի դեմ ներկայացված բողոքով կամ հայցով և վնասի հատուցման պահանջով միաժամանակյա ծանրաբեռնումն անխուսափելիորեն, իսկ որոշ դեպքերում՝ էականորեն ավելացնելու է նրանց ծանրաբեռնվածությունը, ինչը հատկապես դատարանների դեպքում հանգեցնելու է գործի քննության ժամկետի երկարաձգման նաև սկզբնական, ենթադրաբար վնաս պատճառած իրավական (կամ ռեալ) ակտի իրավաչափության գնահատման մասով:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի վիճարկվող իրավակարգավորումը Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց չէ: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանն անընդունելի է համարում արդեն իսկ փաստված ոչ իրավաչափ, իսկ Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ հատկապես նաև իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցումը վարչական մարմինների կողմից արհեստականորեն ձգձգելու կամ առավել ևս մերժելու պրակտիկան, թեև սույն գործի շրջանակներում անհրաժեշտ չի համարում մանրամասն անդրադառնալ դրա սահմանադրականությանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ հարցը պետք է լուծվի առաջնահերթ կարգով՝ պատշաճ վարչական և մասնագիտացված դատական վերահսկողության շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետն այնքանով, որքանով հնարավորություն չի տալիս անձին օրենքով սահմանված ոչ գույքային վնասի հատուցում պահանջելու մտադրություն ունենա-

լու հիմքով ճանաչման հայց ներկայացնել, ճանաչել Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

17 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1497



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԱՄՄԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 դեկտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ Տ. Ռևազյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 1-ին Ամման քաղաքում ստորագրված «Հայաստանի

Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով ՀՀ կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 1-ին Ամմանում՝ միջազգային ավիացիոն համակարգը խթանելու, միջազգային օդային տրանսպորտում թռիչքային և ավիացիոն անվտանգության բարձրագույն մակարդակ ապահովելու նպատակով:

2. Համաձայնագրի անբաժան մասն է կազմում հավելվածը, որով սահմանվում է երթուղիների ցանկը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մի շարք պարտավորություններ, որոնցից են մասնավորապես.

- ապահովել, որ Համաձայնագրի Հավելվածում սահմանված երթուղիներով կանոնավոր միջազգային օդային հաղորդակցությունների հաստատման նպատակով հորդանանյան կողմից տրամադրվեն Համաձայնագրով նախատեսված իրավունքները (Հոդված 3, կետ 1),

- զինված հակամարտությունների, բնական աղետների կամ քաղաքական ընդվզումների հետևանքով հորդանանյան կողմի նշանակված ավիարնկերության՝ սահմանված երթուղով հաղորդակցության իրականացման անկարողության դեպքում ձեռնարկել առա-

վելագույն ջանքեր՝ երթուղիների համապատասխան ժամանակավոր վերադասավորման միջոցով նման հաղորդակցությունների շարունակական շահագործումն ապահովելու համար (Հոդված 3, կետ 5),

- ավիաընկերությունների նշանակման և շահագործման թույլտվությունների տրամադրման հետ կապված՝ ապահովել Համաձայնագրի 4-րդ հոդվածի պահանջների կատարումը (Հոդված 4),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենքները և կարգավորումները, որոնք վերաբերում են միջազգային օդային հաղորդակցության մեջ ներգրավված օդանավերի իր տարածք մուտք գործելուն, տարածքում գտնվելուն կամ տարածքից մեկնելուն կամ իր տարածքում գտնվելիս նման օդանավերի շահագործմանը և նավիգացիային, կիրառվեն հայկական և հորդանանյան կողմերի օդանավերի նկատմամբ և պահպանվեն հորդանանյան կողմի նշանակված ավիաընկերության կողմից ՀՀ տարածք մուտք գործելիս, տարածքում գտնվելիս և տարածքից մեկնելիս (Հոդված 6, կետ 1),

- ապահովել հորդանանյան կողմի մուտքին, ձևակերպումներին, տարանցմանը, իմիգրացիոն, անձնագրային, մաքսային, արժութային, սանիտարական պահանջներին և կարանտինին վերաբերող օրենքների և կարգավորումների կատարումը հայկական կողմի նշանակված ավիաընկերության կողմից կամ միջազգային օդային հաղորդակցություններ կատարող նրա օդանավերի, անձնակազմերի կողմից՝ ուղևորների, ուղեբեռի, բեռների և փոստի առնչությամբ հորդանանյան կողմի տարածք մուտք գործելիս, մեկնելիս, այնտեղ գտնվելիս կամ տարանցիկ անցնելիս (Հոդված 6, կետ 2),

- ապահովել, որ առավելություն չտրվի հայկական կամ այլ ավիաընկերության՝ համանման միջազգային օդային հաղորդակցություններում ընդգրկված հորդանանյան կողմի ավիաընկերությունների նկատմամբ՝ Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված կարգավորումների կիրառման տեսանկյունից կամ ՀՀ հսկողության տակ գտնվող օդանավակայանների, երթուղիների, օդային երթևեկության ծառայությունների և հարակից սարքավորումների/միջոցների օգտագործման տեսանկյունից (Հոդված 6, կետ 3),

- սերտիֆիկատների և լիցենզիաների ճանաչման հետ կապված՝ ապահովել Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթների կատարումը,

- եթե խորհրդակցություններից հետո հայկական կողմը գտնի, որ հորդանանյան կողմը Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետում նշված ոլորտներից որևէ մեկում արդյունավետորեն չի հետևում և կիրառում թռիչքների անվտանգության չափանիշները, որոնք առնվազն հավասար են այդ պահի դրությամբ Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին, ապա տեղեկացնել հորդանանյան կողմին հայտնաբերված նման թերությունների և տվյալ նվազագույն չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ քայլերի մասին: Հորդանանյան կողմի կողմից 15 օրվա ընթացքում կամ համաձայնեցված ավելի երկար ժամանակահատվածում համապատասխան գործողության չձեռնարկումը հիմք համարել Համաձայնագրի 5-րդ հոդվածի (Չեղյալ հայտարարումը) կիրառման համար (Հոդված 8, կետ 2),

- ապահովել, որ հայկական կողմի նշանակված ավիաընկերությունները ընդգրկված չլինեն թռիչքային անվտանգության որևէ ճանաչված գործակալության կամ թռիչքային պիտանիության հարցերով զբաղվող մարմնի կողմից հրապարակված՝ արգելված ավիաընկերությունների որևէ ցուցակում (Հոդված 8, կետ 8),

- խնդրանքի դեպքում հորդանանյան կողմին տրամադրել անհրաժեշտ աջակցություն՝ կանխելու համար օդանավերի ապօրինի գրավման գործողությունները և օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների և աերոնավիգացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները և քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք (Հոդված 9, կետ 2),

- միջադեպի կամ քաղաքացիական օդանավի ապօրինի գրավման միջադեպի սպառնալիքի, նման օդանավի, նրա ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների կամ աերոնավիգացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողության դեպքում աջակցել հորդանանյան կողմին՝ դյուրացնելով կապը, ու համապատասխան այլ միջոցներ ձեռնարկել՝ ուղղված նման միջադեպի կամ դրա սպառնալիքի հնարավորինս արագ և անվտանգ վերացմանը (Հոդված 9, կետ 5),

- ապահովել, որ ձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցները, որ ՀՀ տարածք ժամանած՝ անօրինական գրավման կամ այլ անօրինական միջամտության առարկա դարձած օդանավը մնա ՀՀ տարածքում

մինչև նրա մեկնելը խիստ անհրաժեշտ լինի մարդկային կյանքի պաշտպանության համար: Հնարավորության դեպքում նման գործողություններն իրականացնել երկկողմ խորհրդակցությունների հիման վրա (Հոդված 9, կետ 10),

- օդանավակայանային գանձումների հետ կապված՝ ապահովել Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների կատարումը (Հոդված 9, կետ 10),

- ապահովել, որ հորդանանյան կողմի նշանակված ավիաընկերությունների օդանավերը, որոնք շահագործվում են միջազգային օդային հաղորդակցություններում, ինչպես նաև դրանց հաշվեցուցակային սարքավորումները (սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են օդանավի շահագործման ժամանակ օգտագործելու համար), վառելիքի ու քսայուղերի պաշարները և նման օդանավերում գտնվող պաշարները (ներառյալ սննդամթերքը, ըմպելիքները և ծխախոտը) Հայաստանի Հանրապետության տարածք ժամանելիս ազատվեն բոլոր մաքսատուրքերից և այլ վճարներից կամ հարկերից՝ պայմանով, որ այդպիսի սարքավորումները և պաշարները մնալու են օդանավում մինչև դրանց վերարտահանվելը (Հոդված 11, կետ 1),

- ապահովել, որ Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված ազատումները տրամադրվեն նաև այն դեպքերում, երբ հորդանանյան կողմի նշանակված ավիաընկերությունները պայմանավորվածություններ են ձեռք բերել այլ ավիաընկերությունների հետ՝ հաշվեցուցակային սարքավորումների և 11-րդ հոդվածում նշված այլ պարագաների՝ ՀՀ տարածքում փոխառելու կամ փոխանցելու նպատակով՝ պայմանով, որ մյուս ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին հայկական կողմը տրամադրում է նույն ազատումները (Հոդված 11, կետ 4),

- եթե հայկական և հորդանանյան կողմերի միջև չի գործում ավիաընկերությունների հարկային համակարգը կարգավորող կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր, ապա, փոխադարձության հիմունքով, հորդանանյան կողմի ավիաընկերություններին ազատել բոլոր տեսակի օդային հաղորդակցությունների շահագործումից ստացված շահույթներից և հասույթներից գանձվող հարկերից և վճարներից՝ առանց սահմանափակելու հայկական կողմի սահմանած օրենսդրական պարտավորությունների կատարումը (Հոդված 12),

- ապահովել Համաձայնագրի 13-րդ հոդվածում շարադրված առևտրային գործունեության կարգավորման սկզբունքների կիրառումը (Հոդված 13),

- հորդանանյան կողմի նշանակված ավիաընկերություններին փոխադարձության սկզբունքով իրավունք վերապահել ՀՀ տարածքում ունենալու իրենց գրասենյակները և ներկայացուցիչները, ինչպես նաև առևտրային, շահագործողական և տեխնիկական անձնակազմը, ինչը պահանջվում է համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման համար (Հոդված 14, կետ 1),

- հատուկ հանգամանքներով պայմանավորված, անհրաժեշտության դեպքում, անձնակազմի անհետաձգելի և ժամանակավոր մուտքը կամ կացությունը, ՀՀ օրենքներով և կանոնակարգերով պահանջվող արտոնագրերը և այլ փաստաթղթերը տրամադրել առանց հապաղման՝ նման անձնակազմի՝ ՀՀ մուտքը չուշացնելու նպատակով (Հոդված 14, կետ 4),

- ապահովել, որ հորդանանյան կողմի նշանակված ավիաընկերությունը իրավունք ունենա ՀՀ տարածքում ինքնուրույն իրականացնելու վերգետնյա սպասարկման աշխատանքներ կամ, իր հայեցողությամբ, ամբողջովին կամ մասնակիորեն օգտվելու նման ծառայությունների մատուցման իրավունք ունեցող մատակարարների ծառայություններից: Եթե ՀՀ տարածքի վերգետնյա սպասարկման վերաբերյալ կանոնակարգումները բացառում կամ սահմանափակում են պայմանագրային հիմունքներով նման ծառայություններից օգտվելը կամ ինքնասպասարկումը, ապա յուրաքանչյուր նշանակված ավիաընկերությանը միատեսակ հնարավորություններ տալ ինքնասպասարկման և մատակարարի կամ մատակարարների կողմից մատուցվող վերգետնյա սպասարկման ծառայություններից օգտվելու հարցում (Հոդված 14, կետ 5),

- առաջնորդվելով փոխադարձության սկզբունքով և բացառելով միջազգային հաղորդակցություններ իրականացնող մեկ այլ ավիաընկերության հանդեպ խտրական վերաբերմունքը՝ ապահովել, որ հորդանանյան կողմի նշանակված ավիաընկերություններն ազատորեն՝ ինքնուրույն կամ գործակալի միջոցով ցանկացած արտարժույթով իրականացնեն օդային փոխադրումների վաճառք ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ գործող օրենքների (Հոդված 14, կետ 6),

- ապահովել, որ հայկական կողմի ավիացիոն իշխանությունները հորդանանյան կողմի ավիացիոն իշխանություններին, վերջիններիս խնդրանքով, տրամադրեն համաձայնեցված հաղորդակցու-

թյուններում հայկական կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից դեպի Հորդանանի Թագավորության տարածք կամ այդ տարածքից փոխադրումների վերաբերյալ տեղեկություն և վիճակագրական տվյալներ՝ այն կարգով, որով այդ նշանակված ավիաընկերությունները պատրաստել և ներկայացրել են ՀՀ ավիացիոն իշխանություններին (Հոդված 15),

- հաստատման նպատակով հորդանանյան կողմի ավիաընկերություններից չպահանջել չվացուցակների, չվերթերի իրականացման ծրագրերի կամ չվերթերի շահագործման պլանների ներկայացում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կպահանջվի ոչ խտրական հիմքերով միատեսակ պայմաններ պարտադրելու համար, ինչպես նախատեսված է Համաձայնագրի 16-րդ հոդվածում, կամ երբ դա հստակորեն թույլատրվում է Համաձայնագրով: Եթե հայկական կողմը պահանջում է վերոնշյալ փաստաթղթերի ներկայացումը տեղեկատվական նպատակներով, ապա ապահովել, որ հորդանանյան կողմի ավիաընկերությունների համար նվազագույնի հասցվի դրանց ներկայացման վարչական պահանջները և ընթացակարգերը (Հոդված 16),

- կատարել Համաձայնագրի 18-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված՝ միջնորդ դատարանի նախագահի ցանկացած որոշում (Հոդված 18, կետ 3),

- վճարել հայկական կողմի արբիտրի հետ կապված ծախսերը և նրա վարձավճարը. երրորդ արբիտրի վճարը և նրա համար անհրաժեշտ ծախսերը (Հոդված 18, կետ 4):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2018 թվականի նոյեմբերի 1-ին Ամման քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

24 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴՈ-1498

**ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ**

2019 թվականի հոկտեմբերի 8-ին Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Միխայել Բանցհաֆին:

Սահմանադրական դատարանի նախագահը ողջունել է դեսպանին և շնորհավորել Հայաստանում իր դիվանագիտական առաքելության մեկնարկի կապակցությամբ մաղթելով նրան արգասաբեր աշխատանք հայ-գերմանական բարեկամական հարաբերությունների զարգացման կարևոր գործում: Դեսպանն անդրադարձել է Սահմանադրական դատարանի և Գերմանիայի դեսպանության միջև առկա ջերմ և համագործակցային հարաբերություններին և հայտնել իր հանձնառությունն առ այն, որ արդյունավետ և ակտիվ համագործակցությունը կկրի շարունակական բնույթ:



Հրայր Թովմասյանը ներկայացրել է Հայաստանի և Գերմանիայի Սահմանադրական դատարանների միջև ձևավորված բարեկամական և գործընկերային հարաբերությունները անդրադառնալով 2019 թվականին Գերմանիայի սահմանադրական դատարանի նախագահի գլխավորած ներկայացուցչական պատվիրակության Հայաստան կատարած արդյունավետ այցի մանրամասներին: Հ. Թով-

մասյանը դեսպանին հայտնել է, որ 2020 թվականի սկզբին նախապատրաստվում է իր գլխավորած պատվիրակության պատասխան այցը Գերմանիա:



ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը գոհունակությամբ է խոսել նաև Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ-ի) իրավական ծրագրի և «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հետ արդյունավետ համագործակցության մասին՝ բարձր գնահատելով սահմանադրական իրավունքի ոլորտում գերմանացի գործընկերների և փորձագետների հետ իրականացվող փորձի փոխանակման ծրագրերը:

Զրուցակիցներն անդրադարձել են նաև Հայաստանի Հանրապետությունում դատախարավական ոլորտի ընթացիկ հիմնախնդիրներին և բարեփոխումներին՝ կարևորելով վերջիններիս իրականացումը ՀՀ Սահմանադրությանը և Հայաստանի միջազգային պարտավորություններին համահունչ:

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2019 թվականի հոկտեմբերի 8-ին Լև Տոլստոյի անվան հիմնական դպրոցի մի խումբ աշակերտներ այցելել են Սահմանադրական դատարան: Դատարանի աշխատակազմի ղեկավար Էդգար Ղա-

զարյանի ուղեկցությամբ հյուրերը շրջայց են կատարել դատարանում: Շրջայցի ընթացքում նրանց ցուցադրվել է դատարանում պահվող Սահմանադրության բնօրինակը, այնուհետև աշխատակազմի ղեկավարի ուղեկցությամբ աշակերտները հյուրընկալվել են նիստերի դահլիճում, որտեղ ծանոթացել են նիստերի անցկացման ընթացակարգերին:



Այցի շրջանակներում աշակերտների հետ հանդիպում-քննարկում է ունեցել նաև Սահմանադրական դատարանի դատավոր Ալվինա Գյուլումյանը: Հանդիպման ընթացքում տիկին Գյուլումյանը ներկայացրել է Սահմանադրության էությունը, նպատակներն ու նշանակությունը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը:

Տիկին Գյուլումյանը կարևորել է Սահմանադրական դատարանի ընդունած որոշումների դերը, ինչպես նաև Սահմանադրության միջոցով իշխանությունների տարանջատման սկզբունքի ապահովման նշանակությունը, ներկայացրել է դատարանների անկախության կարևորությունը ժողովրդավարության իրացման հարցում: ՄԴ դատավոր Ալվինա Գյուլումյանը պատասխանել է նաև աշակերտներին հուզող հարցերին:

**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ**

2019 թվականի հոկտեմբերի 9-ին Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության

արտակարգ և լիազոր դեսպան պարոն Թիան Էրլունին: Հանդիպումը կայացել է չինական կողմի նախաձեռնությամբ:



Հանդիպման ընթացքում կողմերը կարևորել են երկու ժողովուրդների միջև առկա ջերմ և բարեկամական հարաբերությունները, շփումների բարձր մակարդակը և հույս հայտնել, որ փոխգործակցությունը հետագայում ավելի կամրապնդվի: Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն իր շնորհավորանքներն է փոխանցել դեսպանին օրեր առաջ նշված Չինաստանի ազգային տոնի կապակցությամբ:

Զրուցակիցներն անդրադարձել են նաև Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական ոլորտի բարեփոխումներին, այդ շրջանակներում տեղի ունեցող զարգացումներին:

**ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ**

2019 թվականի նոյեմբերի 21-22-ին ՀՀ սահմանադրական դատարանի դատավորներ Աշոտ Խաչատրյանը, Արաիկ Թունյանը, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Էդգար Ղազարյանը Լեհաստանի Հանրապետության սահմանադրական տրիբունալի հրավերով աշխատանքային այցով գտնվել են Վարշավայում, որտեղ տեղի էր ունենում Լեհաստանի Հանրապետության օրենսդրության կողիֆիկացման հանձնաժողովի քրեական իրավունքի բաժնի հիմնադրման հարյուրամյակին նվիրված «Քրեա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(96)2019

կանացում. գաղափարներ և սահմանափակումներ» խորագրով միջազգային խորհրդածոդովը: Խորհրդածոդովի աշխատանքներին մասնակցել է երկու տասնյակից ավել երկրի սահմանադրական դատարանների և իրավագոր հաստատությունների պատվիրակություն և մի շարք այլ միջազգային հաստատությունների բարձրաստիճան պատվիրակություններ:



Խորհրդածոդովի ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր Աշոտ Խաչատրյանը հանդես է եկել «Քրեական օրենսդրության սահմանադրականացման հիմնախնդիրները. սահմանադրական քաղաքականության տեսական և պրակտիկ հարցեր» թեմատիկ զեկույցով, իսկ ՄԴ դատավոր Արաիկ

Թունյանը ներկայացրել է «Մասնավոր իրավունքի խախտումների ապաքրեականացման որոշ հիմնախնդիրներ» թեմայով զեկույցը:

Այցի շրջանակներում Մահմանադրական դատարանի պատվիրակությունը նաև կարճ առանձնազրույցներ է ունեցել Լեհաստանի Հանրապետության սահմանադրական տրիբունալի ներկայացուցիչների և այլ միջազգային գործընկերների հետ:

**ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԼԱՏՎԻԱ**

2019 թվականի նոյեմբերի 27-ից 30-ն ընկած ժամանակահատվածում Լատվիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ տիկին Ինետա Զիեմելեի հրավերով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվել է Ռիգայում:

Հանդիպումն ուղղված է եղել Եվոպական միության և երրորդ երկրների միջև դատական երկխոսության ամրապնդմանը, առկա նվաճումների վերաբերյալ փորձի փոխանակմանն ու տեղեկա-

տվության տրամադրմանը, ներառյալ՝ իշխանությունների բաժանման, իրավունքի գերակայության ամրապնդման հարցերում Լատվիայի Հանրապետության նվաճումներին:



Հանդիպման օրակարգն առնչվել է.

իրավունքի որոշ հարցերի շուրջ երկու դատարանների վերջին որոշումներում ամրագրված զարգացումներին,

օրենքի հստակությանը և իրավունքի բացին վերաբերող երկու դատարանների դիրքորոշումներին,

դատարանների և դատավորների անկախությանը,

պաշտոնատար անձանց պատասխանատվությանը և իմունիտետին:



Նշված երկկողմ համագործակցությունը ևս մեկ անգամ վերահաստատել է երկու դատարանների միջև տարիներ ի վեր ձևավորված բարեկամական և գործընկերային ամուր կապերի առկայությունը՝ հիմնված արդյունավետ համագործակցության վրա, որը կշարունակվի մյուս տարի Սահմանադրական դատարանի նախագահ պարոն Հրայր Թովմասյանի հրավերով Երևանում նախատեսվող համանման հանդիպման շրջանակներում:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 20.01.2020թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100

ՀՀ ՍԴ տեղեկագիրը
ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի
որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(96)2019
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(96)2019
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(96)2019